

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՍՏԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
XXII  
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

*ՁԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԹԵՁԵՐ*

XXII  
CONFERENCE OF  
YOUNG ORIENTALISTS  
OF ARMENIA

*THESES*

ԵՐԵՎԱՆ - 2001 - YEREVAN

Տպագրվում է  
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պ.գ.ք. Արտակ Մովսիսյան

*Մեկենասությամբ*

Ալիշան Բալթաբեկյանի

(Գլենդել, Բալթաբեկյան - ԱՄՆ)

**ԵՐԱԶԸ ՈՐՊԵՍ ԾԻՍԱՇԱՐՔԻ ՄԻ ՄԱՍ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ  
ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՅՈՑ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՄ**

1. Հայոց մշակույթի կրոնա-միստիկ ոլորտում երազը/տեսիլը հանդես է գալիս բազմամշանակ գործառնությունով: Հայտնի են երազին վերագրվող գուշակելու և կամխատեսելու հնարավորությունները: Երազը/տեսիլը հանդես է գալիս մաս որպես նվիրագործության և միստիկ (բուժելու, գուշակելու, սրբին ծառայելու և այլն) «շնորհ-քին» տիրանալու, ինչպես նաև այն իրականացնելու հետ կապված իրադարձությունների և ծեսերի ավարտում ցկյլի մի մաս: Այն իր նշանակությամբ համապատասխանում է այլ ժողովուրդների մշակույթներում գալություն ունեցող միստիկ երազներին, տեսիլներին և գիտակցության ալյալովիված իրավիճակներին: Վերջինս կապ ունի ալկոհոլային և թմրադեղային հարբեցողության և հալոցինոզենների ազդեցության հետ: Որոշակի տվյալներ ցույց են տալիս թմրացնող նյութերի ծխական օգտագործումը նաև հին Հայաստանում:

2. Մեր ձեռքի տակ ունեցած նյութը պարունակում է մի շարք միստիկ բնույթ կրող երազներ, որոնց տեսնելու արդյունքում տեսնողը գուշակելու և բուժելու շնորհ է ստացել: Նրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամհատական քվացող տարբերակները հանգում են մի քանի մոդելների, որոնց հիմքում ընկած է արխայի առասպելաբանությունը և ծեսերը: Այն բավականին հնչտությամբ վերականգնվում է այլ ժողովուրդների ազգագրական նյութի օգնությամբ: Մեր ուսումնասիրած երազներում արխայի առասպելաբանությունը շատ հաճախ ներկայանում է քրիստոնեության խորհրդանշանների բողի տակ: Կարելի է ենթադրել, որ հնում նույն առասպելաբանական սկզբունքներով կառուցված ինչ-որ ծես է գոյություն ունեցել, սակայն հնարավոր է նաև, որ իրականում ձևավորված ծես չի եղել, այն միշտ հանդես է եկել երազի, տեսիլքի ոչ իրական ձևերով:

3. Մեկ այլ առանձնահատկություն, որը պիտի նշվի, այն է, որ երազին և տեսիլքին գրեթե միշտ հետևում է նրանց բանավոր արտացոլումը: Երազը իրադարձությունների մասն է դառնում այն ժամանակ, երբ վեր է անվում բանավոր խոսքի, այսինքն՝ պատմվում է: Ինչ-որ անորոշ, վերացական է քվացել երազում, ստանում է կոնկրետ իրականության կարգավիճակ և, համապատասխանաբար, ձև: Ավելի պարզումակ մեկնաբանումներ են ստանում երազում տեսած վայրը, ժամանակը, երազի կերպարները, գործածված առարկաները և այլն: Ավելի է կոնկրետանում պլոժեն, այն կերտվում է ընդունված սխեմաների համաձայն, և միայն այդ տեսքով երազը դառնում է ոչ միայն իրականության խորհրդանշական ձևափոխում, այլ նաև իրականության անբալկտելի մի մաս, առանց որի մշակութային մոդելը չի կարող ավարտում տեսք ստանալ:

**ԱՄՐՅԱՆ ԼԵՎՈՆ (ՊԻ)**

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՓՈԶՐԱՍԻԱԿԱՆ ԵՎ  
ՀՅՈՒՄԻՍՄԻԻԻԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Նյութական միջավայրում են բարձրած ժողովուրդի պատմական ուղու առանձնահատկությունները, սակայն քաղաքական ուժերը հաճախ փոփոխում են մշակութային կյանքի կենտրոնները, ցեղային բովանդակությունից զրկում աշխարհագրական տերմինները: Ուստիև նրանց տերիտորիալ փոխարարներություններին



հետևելը պատմական հեռանկարում, ըստ յուրաքանչյուր դարաշրջանում փոփոխված տվյալների, առանձնահատուկ կարևորություն է ստանում:

Փոքր Ասիայի և Միջագետքի խաչմերուկում գտնվող վերինեփրատյան երկրները, առժամանակ ընդգրկվելով վերոնշյալ օջախների ուղեծրերի մեջ և ելնելով Հայկական բնաշխարհի զարգացման օրինաչափություններից, իր տնտեսա-աշխարհագրական ինքնատիպ դիրքի համանման պայմանների շնորհիվ պատկերացում են տալիս բնաշխարհի ավանդույթների և հասարակական զարգացման միտումների մասին:

Ք.ա.12-րդ դ. անցքերն, ուղղակի հետք բողոնելով հայ ժողովրդի կազմավորման վրա, փոքրասիական և էգեյան աշխարհի համանման երևույթների հարթությունում պայմանավորեցին նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների անկումը: Իսկ վերջիններիս համընթաց Վանա լճի ավազանում ստեղծվում են յուրյ նախադրյալներ կենտրոնացված պետության կայացման համար՝ փոխպայմանավորված Ասորեստանի՝ համաշխարհային տերության վերածման ձգտման պայմաններում ավելի կենտրոնացված պետության շուրջ էթնիկական համախմբման անհրաժեշտությամբ: Ներառելով վերինեփրատյան երկրները, հակված ենք կարծելու, որ այն ստանձնեց քաղաքական ավանդույթների ժառանգորդի դերը: Այժմ փորձենք և՛ ժամանակագրորեն, և՛ աշխարհագրորեն անդրադառնալ Բիաինիլիի վերը նշված քաղաքականությանը:

1. Ուրարտական պետության շահերը դյուլությունք չէին խաչանվում Ասորեստանի շահերին, որը նախ Շուրբիայում բարեկամական վերաբերմունքով, ըստ էության, չեզոքացնում էր Արամեի հնարավոր դաշնակիցներին, այնուհետև Ք.ա.836-835թթ. հայտնվում Մելիդում և Թաբալում: Սակայն, Մեծուայից սկսած, երբ Բիաինիլին ամրապնդեց իր դիրքերը մերձօրմյան Մանայում, հնարավորություն է ստեղծվում հայացքն ուղղել նաև մյուս, գլխավոր ավանդական քառերաբեմ, ուր դեռևս Մամանասար Գ-ի ձախողումներից հետո Կաշշիարի լեռներում (հայկ. Մասիս) ստեղծվել էր անվտանգության վիճակ, և գրավել Շաղաալեհիյան երկրները (այն է՝ Շաղաալեի որդու)՝ Շուրգիլի, Թարխիզամա, ...տուրա քաղաքները, ինչպես և Ալզին:

Գ. Մարգալանը Ուրմեի շրջանում, վեր է հանում էթնիկական գործոնը (հմտ. Տարբանի գրույցի հետ): Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Ուրմեի հարավը՝ Շուրբիայի տարածքը (Ք.ա.11-րդ դ. երկրորդ կեսից մինչև 10-րդ դ. վերջը Մուշի շրջանից ձգվել է մինչև Մ. Ջաբի վերին հոսանքը) գլխավորապես իրենից ներկայացնում էր շուրարա-խուրթիական շրջան, ինչը չի հակասում հայ առասպելաբանության մեջ նկատվող էթնիկական բազմակենտրոնությանը:

2. Մերձօրմյան շրջանում տեղի ունեցող անցքերին զուգահեռաբար ընթացող իրադարձություններն, ըստ էության, Ասորեստանի ռազմական ներգործության հետևանքն էին՝ Մեծուայի ուշադրությունը Մանայից շեղելու նպատակով, ինչպես դա կատարվեց Խուբուշիայում Ք.ա. 801, 791, ապա՝ 785-784թթ.: Այդ իսկ պատճառով Էշպուլինին և Մեծուան ապառնվեցին երկու քեները, մի քաղաքականություն, որին հետևելու էին նրա հաջորդները:

Արգիշթե Ա-ն, արշավելով մինչև Խաթինա երկրի կենտրոնը, Խիլարաուդյան, Տուսյան երկրներն ու Մելիտեա քաղաք, իսկ Սարդուր Բ-ն՝ Կումմախայի գրավմամբ Ասորեստանի հյուսիսային մասը ենթարկեցին կիսաշրջափակման և կտրեցին Փոքր Ասիայի եկամտաբեր շրջաններից՝ մինչև Ք.ա.743թ. Արփադի ճակատագրական ճակատամարտը:

Ք.ա.14-րդ դարից, հավանաբար, նաև ուրարտական շրջանում, Իսուվան արևմտամետ էր, բանգի, ըստ փիլիսոփայական աղբյուրների, ենթադրվում է Մելիդի ազդեցությունը նրա տարածքում:



Փաստորեն, Գ. Սարգսյանի առաջ քաշած աշխարհագրական ծավալման հեռավոր կամ խորքային եզրը դարձել էր Բիաինիլիի և «ուշխեթական», բայց էապես հայալեզու, մանր թագավորությունների կոնտակտային գոտի (հմմ. Արամ-Մշակ գրույցի հետ):

3. Ինչպես խեթա-միտանական, այնպես էլ ասսուրա-բիաինական ոլորտում Ատրիքը ունեցել է ռազմավարական կարևորություն: Բիաինական մշակութային տիրապետությունն, ըստ Ս. Բացիկայի, այստեղ ուղղվածության ու պատմական պայմանավորվածության մասին հարցում պարզություն չի մտցնում: Այնուամենայնիվ, Բիաինիայի համար պայքարը նշանակել է ասորա-խեթական աշխարհի հետ օրգանական հասարակական-տնտեսական, էթնո-մշակութային կապերի պահպանում, ուր Կոմմուխի տևական հավանաբարությունը պայմանավորվեց ասսուրական վտանգի չափով, կարծես թե ի հավաճումն մրա, որ Զ.ա. 14դ. այս երկրամասի ու Իսուվայի նկատվող սերտաճումը, ի տարբերություն Ատրիքի, իր էթնիկական հարազատությանը վերաճում էր իբրև Շոփը-Կոմմագենյան երկնիստնական թագավորություն:

4. Նույնը և 714թ. անցքերից հետո, երբ Ռուսա Բ-ի կողմից Մուշկինի երկրի գրավումը ոչ միայն պայմանավորվում է պետության հզոր ներուժի պահպանմամբ, այլև Փոքր Ասիայում Ատրեստանի դիրքերի ամրապնդման հետևանքով բիաինական կողմնորոշման ուժեղացմամբ:

Հայ առասպելների աշխարհայացքային զարգացումը պայմանավորված էր մեր պատմության տարբեր դարաշրջանների միջև եղած հոգևոր ու գաղափարական կապի անընդմեջ լիությանը: Ուրարտական պետությունը, ի տարբերություն նախկին ցեղամիությունների, ուներ համեմատաբար մեծ հնարավորություններ պարտադրելու իր հետաքրքրությունները նախկին կորսված տարածքներում: Ուստի կարելի է ենթադրել, որ Զ.ա. 2-րդ դարի սկզբին հայկական պետությունների առաջացումը երեք կենտրոններով (Փոքր և Մեծ Հայքին, Շոփը-Կոմմագենին), պայմանավորված է ոչ միայն քաղաքական տեղաշարժերի հետևանքով ձևավորված համախմբման օջախներով, այլ նաև նախաբիաինական ժամանակաշրջանից սկզբնավորված այս երկրների տնտեսա-քաղաքական զարգացման մեջ նկատված որոշ առանձնահատկություններով:

Հետևապես, հզորացող Բիաինիլին, սեմական աշխարհի դեմ պայքարում, իր ազդեցությունը տարածելով ինչպես հարավ-արևելքում, մասնապես դեպի Կաշխարի լեռներ, Կոմմագեն (Կոմմագենե) և երբեմնի խեթական հողեր հանդիսացավ հայկական պետությունների հավակնություններն արտացոլող լավագույն ռսպնյակը:

ԱՐԻՍՅԱՆ ՆՈՐԱ (ԵԿԷ)

## **ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱԲ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

XX դարի սկզբին Օսմանյան կայսրության կողմից իրականացվեց հայերի ցեղասպանությունը, որին զոհ գնացին 1,5 միլիոնից ավելի հայեր: Վաղորդ ծրագրվել էր նրանց Սիրիական անապատ քշելը: Արտրված և տարաբախտ հայերի մի զգալի հատվածի ճակատագիրը հետագա տարիներին կապվում է Սիրիայի և սիրիացիների հետ, որոնք անգնահատելի դեր ունեցավ հայերին մահվան ճիրամներից փրկելու և ապաստան տալու հարցում: Հայերը դարձան Սիրիայի լիիրավ քաղաքացիներ:

Թեև սիրիացի պատմաբաններից շատերի աշխատություններում հայոց ցեղասպանության բեման դարձավ պատմագիտական նյութ, իսկ արվեստագետներից

չատերի ստեղծագործություններում օգտագործվեցին հայկական կերպարներ, այն լայն ընդգրկում չունեցավ:

Հայոց ցեղասպանության մասին հասարակական կարծիք ստեղծելու և այս մասին սիրիացի ժամանակակից մտավորականների դիրքորոշումը ճշտելու նպատակով մեր կողմից հարցումների են ենթարկվել սիրիացի քառասունները մտավորականներ (պատմաբաններ, գրողներ, թղթակիցներ, հրապարակախոսներ, քատերագիրներ և այլն), որոնք այս կամ այն կերպ առնչվել են հայերի հետ և հայոց ցեղասպանության մասին հստակ պատկերացում ունեն: Սիրիացի մի շարք պատմաբաններ Սիրիայի պատմության և հատկապես Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են այդ շրջանի հայկական դեպքերին, ինչպես, օրինակ, Ալի Մուլտանը, Իբրահիմ Ալ ժահմանին, Խալիլ Մուսան, Իբրահիմ ալ Խալիլը, Բսկանդար Լուբան և այլք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դասակարգի հայերի արհավիրքը տեղի է ունեցել նաև սիրիական հողում, արաբ մտավորականները հայոց ցեղասպանության մասին խոսում են որպես դաժան իրողության: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայերին և արաբներին կապում է պատմական նույն ճակատագիրը, երկու ժողովուրդներն էլ եղել են ազգային փոքրամասնությունների նկատմամբ Օսմանյան կայսրության քաղաքականության զոհեր:

Մեր ձեռքի տակ ունեցած պատասխաններից ելնելով, կարող ենք եզրակացնել, որ սիրիացի արաբ ժամանակակից մտավորականները, լավատեղյակ լինելով միջազգային դավադրությանը, որին գոհ զմաց հայ ժողովուրդը, հաստատում են, որ Արևմուտքը բավական բացասական դեր է խաղացել՝ լուռ մնալով հայերի ցեղասպանության նկատմամբ: Նրանց կարծիքով, Թուրքիան կարող է հասնել ժողովրդավարության, եթե Օսմանյան կայսրության շրջանի բոլոր ոչ թուրք ժողովուրդներին, այդ թվում նաև արաբներին, վերադարձնի իրենց իրավունքները: Ենչպե՞ս է, որ հայերը չպետք է ակնկալեն գերտերությունների և միջազգային հանրության աջակցությունը: Հայաստանին հարկավոր է հզորամալ, որպեսզի հնարավոր լինի սեփական իրավունքներին տեր կանգնել: Սիրիացի արաբ մտավորականներն ընգծել են, որ հայկական ցեղասպանությունը արդյունքն էր ոչ թուրք ժողովուրդներին թուրքացնելու և երիտթուրքերի պանթուրքիզմի քաղաքականության: Նրանք նույնպես վկայում են Օսմանյան կայսրության մեջ ջարդերի, արտաքսման և ցեղասպանության մասին, հաճախ, հիմնվելով անձնական հիշողությունների վրա:

Հարկ է նշել, որ սիրիացի մտավորականները հնարավորինս անաչառ են իրենց կարծիքներում: Նրանք չեն խուսափում օգտագործել «ցեղասպանություն» բառը, իսկ հայերի դեմ իրագործվածը համարում են մարդկության դեմ ուղղված ոճիր:

Միավրված չենք լինի՝ ասելով, որ սիրիացի արաբ մտավորականները կարող են իրենց նպաստը բերել մարդկության դեմ ուղղված այս հանցագործությանը միջազգային ճանաչում տալու և դատապարտելու հարցում, բանի որ նրանք մերժում են ազգի ոչնչացման երևույթը, որն, ինչպես նրանք են նշում, հակասում է իսլամի սկզբունքներին:

Կցանկանալիք նշել, որ հետազոտությունն իրականացնելիս առաջնորդվել ենք բանավոր պատմության (oral history) մեթոդով:



ՀԱՅ ԺԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԸՆԴԴԻՍՏԱԳԻՐ ՈՒԺԵՐԻ I ՀԱՄԱԺՈՂՎՈՒՄ (1902թ.)

1902 թ. փետրվարի 4-ին Փարիզում կայացավ օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին համաժողովը, որի նպատակն առանձին գործող երիտթուրքական խմբերի և Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդների քաղաքական կազմակերպությունների միավորումն էր արդուկամիդյան ռեժիմի դեմ:

Համաժողովին հրավիրված էին նաև հայ քաղաքական կուսակցությունները, որոնցից Հնչակյան կուսակցությունը հրաժարվեց մասնակցելուց, իսկ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը երեքական պատգամավոր՝ ուղարկեցին:

Չնայած կուսակցությունների միջև տարաձայնություններին, հայ պատգամավորները, գործեցին միասնաբար, և համաժողովը, ինչպես ժամանակին բնորոշել էր «Դրոշակը», տեսավ ոչ թե երկու կուսակցության ներկայացուցիչների, այլ Հայ Դատը ներկայացնող վեց հայերի: Համաժողովին մասնակցում էր նաև 1860-70ական թթ. լուսավորչական շարժման առաջնորդներից փարիզաբնակ Սիմա Չերազը, որը չհարելով որևէ կուսակցության՝ հանդես եկավ դաշնակցական և հնչակյան կուսակցությունների հետ միասին:

Հայ քաղաքական կուսակցությունները համաժողովը սկսելուց առաջ իրենց հստակ բացասական դիրքորոշումը արտահայտեցին համաժողովի լեզուն թուրքերենն ընդունելու վերաբերյալ: Նրանց պահանջով համաժողովում զուգահեռաբար գործածվեց նաև ֆրանսերենը:

Դաշնակցական և հնչակյան պատգամավորները վիճարկեցին նաև մակեդոնական կոմիտեների բացակայության հարցը, և նրանց պահանջով «Դրոշակի» միջոցով մակեդոնական հեղափոխական կազմակերպություններին նամակ ուղարկվեց, որը մակեդոնական կողմում արձագանք չգտավ: Համաժողովում հայ պատգամավորները հրապարակավ բողոքեցին մակեդոնական խմբի հանդեպ երիտթուրքերի դիրքի դեմ և նրանց պահանջով ատենագրության մեջ արձանագրվեց մակեդոնական կոմիտեների ներկայացուցիչների բացակայության փաստը:

Հայ պատգամավորները հրաժարվեցին քվեարկել համաժողովին ներկայացված բոլոր այն որոշումները, որոնց ինչ-ինչ կետերի համաձայն չէին և նշեցին, որ կցանկանային Թուրքիան տեսնել որպես դաշնային պետություն, մինչդեռ երիտթուրքերի որոշումները կենտրոնացման, ձուլման և մույնացման էին տանում: Նրանք բողոքեցին մասնավորապես որոշման 4-րդ կետի դեմ, առաջ քաշելով այն բեզլը, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը նախատեսված է միայն հայկական մահաճգների համար և չի կարող տարածվել կայսրության մյուս մահաճգների վրա: Համաժողովի հայ պատգամավորները հայտնեցին, որ իրենք չեն կարող 1876թ. սահմանադրությունը ընդունել որպես «օսմանյան ժողովուրդների քաղաքական ազատության ամենապահիտ զրավական» և բարենորոգումների իրականացման երաշխիքը տեսնում են Եվրոպայի կողմից պաշտոնապես ճանաչված միջազգային պայմանագրերի մեջ:

Համաժողովում քննարկման առիթ հանդիսացավ «Եզրակացության» այն կետը, որտեղ դրանադրեն էր ներկայացված եվրոպական երկրների միջամտության խնդիրը: Միջամտության կողմնակիցները համաժողովում մեծամասնություն էին կազմում, իսկ հակառակորդները, Ամենո Ռիզայի գլխավորությամբ, մերժելով ամեն տեսակ միջամտություն՝ Եվրոպայից միայն բարոյական աջակցություն էին խնդրում:



Հայ պատգամավորները պաշտպանեցին «Եզրակացության» վերոհիշյալ կետը, գտնելով, որ այն ուղղակի անհրաժեշտություն է, քանի որ Թուրքիան ինքնուրույն չի վիճակի չէ իրականացնել անհրաժեշտ բարենորոգումներ:

Համաժողովում հայ պատգամավորները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ մասնավորապես նշվում էր ներկա վարչակարգի վերափոխման նպատակով ձեռնարկված բոլոր գործողություններում «հայ կոմիտեների և օսմանցի ազատականների» համագործակցության, հայ կոմիտեների անկախ գործունեության, ինչպես նաև Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի, 1895թ. մայիսյան բարենորոգումների ու Ֆրանսիական կառավարությանը ներկայացրած բարեփոխումների ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը:

Այս հայտարարությունից հետո հայ քաղաքական կուսակցությունները իրենց գործը ավարտված համարեցին և չմասնակցեցին համագումարի վերջին նիստին: Երիտթուրքերի կողմից արված հայտարարությունը, թե հայ պատգամավորները հրաժարվում են սահմանադրական վարչակարգ հաստատելու գործում համագործակցել օսմանցիների հետ, չէր համապատասխանում իրականությանը: Սա կարող էր Վրդուպայում ու Թուրքիայում վնասակար մեկնաբանությունների տեղիք տալ, այդ պատճառով էլ հայ պատգամավորները պահանջեցին հայտարարության մեջ ճշտումներ կատարել:

Այսպիսով, օսմանյան ընդդիմադիր ուժերի I համաժողովին մասնակցած հայ քաղաքական կուսակցությունները, գնացին համագործակցության՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեմոկրատական Թուրքիան ավելի նպաստավոր կլինի հայ ժողովրդի համար: Մի կողմ թողնելով միջկուսակցական տարաձայնությունները, նրանք հանդես եկան մեկ միասնական ճակատով և հակադրվեցին երիտթուրքերի ծայրահեղ ազգայնական միտումներին:

#### ԲԱՂՎԱՍՏԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ)

#### **ԹՈՒՐԻՔԻԱՅԻ «ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ» ԿՈՆՑԵՊՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄԸ**

Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Բենալ Աթաթյուրքի ընկալմամբ՝ Թուրքիայի ազգային շահերը կայանում են երկրի համար որևէ արտաքին սպառնալիքի վերացման, հարևան պետությունների հետ նորմալ, բարիդրացիական հարաբերությունների հաստատման, Բալկանների և Մերձ. Արևելքի տարածաշրջաններում ակտիվ դերի, ինչպես նաև հասարակության արևմտականացման մեջ:

Աթաթյուրքը հրաժարվեց ազգային շահերի համապարփակ ընթերցումից հօգուտ պետության համար անհրաժեշտ ավելի սահմանափակ ու պրագմատիկ նպատակների: Թուրքիայի առաջին նախագահը և նրա հետնորդները բավականին գրագետ և հստակ ձևով ձևակերպեցին, իսկ ապա նաև հետևողականորեն իրագործեցին Թուրքիայի «ազգային շահերի» կոնցեպտը՝ ցույց տալով, որ, ընդհանուր առմամբ, թուրքական ռազմա-քաղաքական վերնախավը հասկացել է, որ սեփական ներքին խնդիրների լուծումից է կախված Թուրքիայի տեղը և դերը աշխարհում:

Թուրքիայի «ազգային շահերի» կոնցեպտը առաջնայնությունը տալիս է երեք անկյունաքարային հիմնադրույթների՝ (1) տարածքային ամբողջականության ապահովում, (2) տարածաշրջանային խաղաղության և ազգային ավտանգության պահպանում, (3) շարունակական տնտեսական ու սոցիալական զարգացման ապահովում: Առաջինի դեպքում կարելի է նկատել Թուրքիայի կատաղի հակազդեցությունը դրսից թե ներսից տարածքային պահանջների կամ բաժանումների հանդեպ: Խաղաղության

և անվտանգության ապահովման առումով չի կարելի ասել, քե միանշանակորեն պնդել, որ Անկարան վարում է խաղախիթական քաղաքականություն. ընդհակառակը, շատ դեպքերում ունակ է լարվածություն կամ բախման հնարավորություն առաջացնել, ինչի օրինակ կարող են ծառայել Կիպրոսի հյուսիսային մասի գրավումը 1974-ին և այդ հարցում անհաշտ դիրքորոշում գրավելը, թուրքաբնակ տարածքներում (Ադրբեջան) ռազմաքաղաքական փոփոխություններին բավականին սուր արձագանքները:

Ազգային շահի թուրքական կոնցեպտը, որն ուղղված է երկրի գոյատևման և բարգավաճմանը, չի բողոքում որևէ տեղ իդեալիզմի համար, և նրա ղեկավարները, որպես կանոն, մշտապես հանդես են բերել իրենց քաղաքականության մեջ պրագմատիզմ և իրատեսությունը: Այսպես, 1938-1939թթ. Ալեքսանդրեոսի սանջաքի թուրքիային միացումը, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նրա չեզոքությունը, 1945-1952թթ. Միևնուտքի հետ ռազմա-քաղաքական դաշինք կազմելը, 1974թ. Կիպրոսի հյուսիսային մասի գրավումը հետևանք էին գլխավորապես ազգային շահի ստանախիտ, հեռատես ընթերման և միջազգային դրության հաշվարկման քաղաքականությունը: Ապագադափարականացված պրագմատիզմը ապահովում էր թուրքիայի համար ցանկալի արդյունքների ձեռքբերումը: Ընդ որում, այդ կոնցեպտը անբնդիսատ մոդեռնիզացվում ու հարմարեցվում է համապարփակ աշխարհաքաղաքական փոփոխություններին:

1990-ական թվականներին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հայտնվելով նոր աշխարհաքաղաքական իրարության առաջ՝ Թուրքիան, ձգտելով փոխել իր կարգավիճակը միջազգային հարաբերությունների համակարգում, փորձ կատարեց վերանայել իր ազգային շահերի ուղղվածությունը. այն է՝ իրեն ամրագրել տարածաշրջանային առաջատար պետության ու նորանկախ թյուրքական պետությունների զարգացման երաշխավորի դերակատարումը և ավելի ակտիվ դեր խաղալ Կենտրոնական Ասիայում, Անդրկովկասում և Բալկաններում: Անկարան բավականին մեծ հավակնությունների հայտ ներկայացրեց: Սակայն իրողությունները ստիպեցին նրան վերանայել նաև դրանք: Վվելին, Անկարայի առջև ընկած է հարևան պետությունների հետ հարաբերությունների նորմալացման համար մեծ մի դաշտ: Պանթյուրքիզմի և պանիսլամիզմի զարգացումը անհամատեղելի են Թուրքիայի պետական շահերի հետ: Թուրքիայի ուժերն ու ռեսուրսները բացահայտորեն չեն բավարարի միջինասիական հանրապետությունների վերակառուցման համար:

Պետք է ընդունել, որ Թուրքիան այսօր միջինարևելյան-կովկասյան տարածաշրջանում լուրջ խաղացող է, որը հավակնում է տարածաշրջանային առաջնորդի դերին և իրոք հանդիսանում է տարածաշրջանի առանցքային պետություններից մեկը, որի հնարավորություններն ու ուժերը, սակայն, անսահմանափակ չեն:

Փաստելով, որ «ազգային շահի» բննական ընկալումը կայանում էր սեփական ազգային պետության կայացման և տեսանելի ապագայում որպես ուժեղ ազգ վերականգնվելու գաղափարի մեջ, հարկ է նշել, սակայն, որ այսօր գոտ թեմալիստական գաղափարախոսությունը միայնակ չի կարող ծառայել Թուրքիայի ազգային շահերի որոշմանն ու իրականացմանը: Ժամանակակից քաղաքական, տնտեսական ու ինֆորմացիոն զարգացումները փաստորեն փոխում են ազգային շահերի ուղղվածությունն ու բնույթը՝ նրանցում ավանդական աշխարհագրական և ուժային տարրերից շեշտը փոխադրելով երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման վրա: Ու թեև, աշխարհաքաղաքական ու ռազմական գործոնները շարունակում են էական դեր կատարել Թուրքիայի ազգային շահերի ընկալման մեջ, բայց դրանք այլևս բավարար չեն երկրի կարիքները ապահովելու համար: Բացահայտ է, որ Թուրքիայի ազգային շահերի նոր կոնցեպտը պետք է հաշվի նստի այն իրողության հետ, որ երկիրը կարող է ապահովել իր կայուն զարգացումը՝ լուծելով մասնավորապես, այնպիսի ցավոտ խնդիրներ,



ինչպիսիք են բրդական պոբրլենը, Կիպրոսի հիմնահարցի կարգավորումը, Հունաստանի և Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացումը:

## ԲՈՒԲՈՒՅԱՆ ԱՐՍԵՆ (ՀԱԻ)

### ՃԱՆԱՊԱՐՀԸ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՐԴՈՒ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐՈՒՄ

«KASKAL lu mušabaki»- «Ճանապարհը կդառնա քո տունը» (Gilg. VII iii 19).

«Եւ ճանապարհացն ամայի լինելի չգոյլ մարդկան» (Նարեկ. ԾԲ: Բ).

1. Ճանապարհի (=ճ.) գաղափարը հինարեել. մարդու մտածելակերպում արտահայտված է 2 մակարդակներում՝ առասպելական (որպես հոգևոր-) և ռացիոնալ (կենսական հաղորդակցության միջոցի): Երկու դեպքում էլ ճ-ը մարդու/ հասարակության հոգեմարմնական պահանջմունքները բավարարող նպատակային շարժում է սեփական կենտրոնից դեպի օտարը և վերադարձ սկզբնական վիճակին:

2. Հինարեել. լեզ. ճ. բառը (շումեր. KASKAL, արադ. ḫarrānu, խեթ. uršan, խաթի-ուրարտ. ḫari/e, վաղմջահայերեն՝ ուղի) ունեցել է «շռչափելի և վերացական հաղորդակցության միջոց», «(առևտրական և ռազմական) ճանապարհորդություն», «բարավան», «առևտրից ստացված ունեցվածք», «բանակ», «աստվային ճ.», երբ. derek-ը՝ նաև «աստվածային գործողություն», «ճակատագիր» իմաստները:

3. Դ. ունեին անուններ և կոչվում էին ըստ իրենց վերջակետի (օր. «Ճ. դեպի Նինվե», «Ճ. դեպի Բուրուշխանդա») և իրական կամ վերացական գործառնության («Չմեռային ճ.», «Ամառունների ճ.», «Արքայական ճ.», «Մեծ ճ.», «Երազահանի ճ.», «Նոր տարվա տոնի ճ.»/ հմմտ. ճ-ի հայկ. դից Վանաստորի տունը՝ Ամանորի ատաջին օրը/, «Ամուրբու աստծո ճ.», «Արևի աստծո ճ.», «Անուի աստղերի ճ.»/ հմմտ. հայկ. «Հարդագողի ճ.», որին նույնամանի է հնդ. «Արյամանի ճ.». այն շատ ազդեցիկ մտտ անդրաշխարհ տեղափոխվող հոգիների ճ. է/, «Մեծ աստվածների դուստր կոչված ճ.» ևն): Երբեմն ճ-ի անվունը համընկնում է աշխարհայացքի անվանը (օր. չին. Դաո-ն):

4. Դ-ն ունի սկիզբ (ծնունդը, աշխարհը, սեփական քաղաքը), ընթացք (կյանքը, լարիքները, քաբավանք, օտար քաղաքը, առևտրական գործարքը), վերջ (մահը, դրախտ/անդրաշխարհը, ձերբ բերված ապրանքը, սեփական քաղաքը) և կտող (ճանապարհորդ/հերոս/առևտրականը): Դ-ի հիմնական վերջնական իմաստով, և արդարադատությունը՝ իրականում. պատահական չէ, որ առևտրականների ժողովները հին Բաբելոնում տեղի էին ունենում Շամաշի տաճարում; այս մասին կան քե տերստային/ հմմտ. օր. YKH 19, 264 «Ճաղի աստծո դարպասներին տանող ճ-ի առջև», «աստվածներին Խալդի աստծո հրամանով ես կառուցեցի տաճար քաբձր ճ-ի վրա», քե հնագիտական տվյալներ /յուրաքանչյուր բնակավայրի փողոցը տանում է դեպի տաճար կամ դամբարանադաշտ, որտեղից նալ-դամբարանով ճ. է բացվում անդրաշխարհ):

5. Հայտնի են ճ-ը, ճանապարհորդ-վաճառականներին և առևտուրը հովանավորող մի շարք աստվածներ (նրանք, որպես կանոն, նաև հոգիներ հանդերձյալ աշխարհ տեղափոխողներ են), որոնք իրենց գործառնությամբ համապատասխանում են հունա-հռոմ. Հերմես/Մերկուրիոսին: Համահ.-ե. դից է եղել քերևս \*aryo-mn (հնդիքան. Արյաման, գերմ. Իրմին, կելտ. Էրեմոն): Նման աստվածություններ առանձնապես հայտնի են հնդարիացիների (Պուշյա, Մուրյա, Ուշյա, Ավշիններ, Աղիտի, Վառունա, Ինդրա, Ագնի), խեթերի (Արևի աստվածություն՝ առևտրի հովանավոր; ճ-ը հսկում է նաև ամպրոպի աստվածությունը. ըստ KUB 17. 29 ստիմանը

նախնադարյան մակարդակի վրա գտնվող մի շարք ժողովուրդների շարքում): Որոշ մասնագետներ նման բնույթ են վերագրում նաև Հ.Լ. Կուր-արաքսյան մշակույթի կրողներին (Ք.ա. IV հազ. վերջ-III հազ.), որոնք խաղաղ կերպով զբաղեցրել էին Բարեբեր Մասիկի ողջ տարածքը՝ վերահսկելով հիմնական առևտրական ուղիները: Գուցե լեռնաշխարհի այս բնիկներից են ժառանգել հայերը յուրահատուկ «առևտրական ոգին» (Ի.Կանտի՝ հայերի բնույթը սահմանելու համար կիրառված արտահայտություն), ինչը հայ համայնքի էությունը բնորոշող հիմնական չափանիշներից մեկն էր և է: Հին (և կարծում եմ արդի) հայերը գաղթականի, առևտրականի, մշակութային միջնորդի հոգեբանությամբ ճանապարհապաշտ ազգի դասական օրինակ են, իսկ շարժական օջախը (որը, ի դեպ, բնորոշ է եղել նաև կուրարաքսցիներին) հայ կացարանի հիմնական բաղադրիչներից է: Այս հոգեբանության մեջ ակնհայտորեն պահպանվել է Հին Արևելքում լայնորեն տարածված այն ընկալումը, թե «թափառաշրջիկությունը հանդուգն քայլ է աղքատությունից դուրս գալու համար»: Հին հայերը ևս ունեցել են ճ. հովանավորող աստվածներ (օր. Մեհերը, որը էպոսում սպանում է առյուծին, քացում ճ-ը և վերսկսվում է առևտուրը՝ ևս մեկ անգամ համապատասխանելով իրան. Միհրին, որը եղել է նաև փոխանակության հովանավոր: հմտ. նաև հայոց եկեղեցու սրբերին, որոնք փոխարինել են իրենց հեթանոս նախածներին և առաջին հերթին՝ Արա Գեղեցիկ/Վահագնին (→ Սբ.Սարգիս, որի հետ է կապվում «Հարդագողի ճ-ը», նաև → Սբ. Գևորգ), Վանատուրին, որը պանդուխտ-ճամփորդների, քարավանների հովանավորն էր (→ Սբ.Կարապետ): Պետք է հիշել Հերմես/Մերկուրիուսին զուգահեռվող Տիրին ևս (→ հայկ. տոմարի Մարգար), որը, որպես հողիներ տեղափոխող, իր արմատն ուներ ուրարտ. դիցարանում (հմտ. նաև Խուրուփին դիցին):

10. Հինարևելյան մարդու առասպելամիտ աշխարհայացքի առանձնահատկությունը պատմական ընթացքի ուղղագիծ ընկալման մեջ էր, ինչը ստիպում էր զարգացումը նույնացնել ճ-ին: Առարկան և մարդը տարանջատված չէին և ունեցվածքը մի տեսակ անհատի շարունակությունն էր մարմնից դուրս, որտեղից էլ մեծանում էր առևտրականի դերը որպես թարգմանչի՝ առարկայի և մարդու միջև: Մարդու մտածելակերպում ճ-ի գաղափարը արխետիպային մակարդակի է և գրեթե չի փոխվել նախնադարյան ժամանակներից մինչ օրս, կատարելագործվել են միայն փոխադրամիջոցները և կառուցապատման ոճը: Պարզապես հինարևելյան մարդը տվեց պարզ և բարդ ճ-ի առաջին սահմանումը (ներդաշնակ, անվտանգ, սակավ լեռնային ճ-ի իդեալը), որը պիտի ավելի հստակեցվեր հետագայում: Ապահով ճ-ի գաղափարը ուղղակիորեն առնչվում էր այն՝ բնության ցիկլերի հետ համատեղման մտքին: Օր. Ք.ա. II հազ. սկզբի Քանեշյան առևտուրը Անատոլիայի և Միջագետքի միջև չէր գործում ծայրահեղ ամիսներին՝ ձմռանը (→ ցուրտ) և ամռանը (→ շոգ), այլ՝ զարմանը և աշմանը (→ ներդաշնակություն): Այլ խոսքով, հինարևել. երկրների աշխարհագրական, մշակութային և էթնիկ հակադիր պայմանները (Բարեբեր Մասիկ → լեռներ, հյուսիս, ցուրտ, առքարյուններ, հարուստ ընդերք, շուկա և Միջագետք → դաշտավայր, հարավ, շոգ, «քաղաքակիրթներ»), աղքատ ընդերք, շուկայի բացակայություն: գրեթե նույնը գործում է Եգիպտոս → Նուբիա/Լևանտ և Հնդկաստան → Պակիստան հակադրություններում) դրդում էին գտնել հակադրությունների փոխըացման միջանցքը, որը ճ. էր և նրանով կատարվող առևտուրը: Սա հաշտեցնող ոսկե միջինն էր, որը հին հնդիկները ընկալում էին որպես madhyamā pratisad-«միջին ճ.», որով անցնելը ճանապարհորդի և քարավանի գերնպատակն էր:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԷԳԵՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԱՂ ԲՐՈՆՁԻ ԳԱՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՇԱԾՓՈԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական լեոնաշխարհի և էգեյան աշխարհի քաղաքակրթությունները զարգացման զուգահեռները դիտարկվում են հնագույն ժամանակաշրջաններից, ինչպես բնակավայրերի, այնպես էլ կացարանների հատակագծման օրինաչափություններում:

1. Ինչպե՞ք Եփրատի վերի ավազանի Պուլուր (Սարյոլ) բնակավայրի XI-IX հորիզոններում, այնպես էլ Սիրաս կղզու Կասարի և Կրետեի Միրասս բնակավայրերում պաշտպանական գործառույթ ունեին բնակավայրերի հետին պատերը: Այս զուգահեռը կարելի է բացատրել ոչ թե մշակութային փախառնություններով, այլ, ավելի շուտ, սոցիալ-տնտեսական զարգացման միևնույն մակարդակով: Պաշտպանական նման հնարքը օգտագործվել էր նաև միջինասիական Ջեյթուն բնակավայրում (Մասաոն):

Հասարակությունների զարգացման ընդհանրության մասին են վկայում ինչպես պաշտպանական, այնպես էլ բնակելի տան գործառույթ ունեցող շինությունները՝ հայտնաբերված Կասարիի պարսպին կից (Դասումաս), որոնք իրենց զուգահեռներն ունեն Քյուլ-թեփե 2 բնակավայրի «պաշտպանական բնույթի կացարաններում» (Ալի) և Յանիկ-թեփեի «պահակակետի կացարանում» (Բարնեյ): Հայկական լեոնաշխարհի և էգեյան աշխարհի քաղաքակրթությունների ընդհանրականության համար, բնականաբար, որոշակի դեր են խաղացել նաև համանման բնակիչմայական պայմանները (հմմտ. Բրիան և Ուրիշ, Թունանյան):

2. Պուլուր բնակավայրի XI-IX շինարարական հորիզոնները բնորոշվում են միակցված սենյակներից կազմված հստակիքներով, որոնք օղակում էին բլուրը: Բաղկաններում նման պատկեր բացահայտվել է Լեսթոս կղզում գտնվող Ֆերմի բնակավայրում, ինչպես նաև Թրակիայում՝ Էգեթո բնակավայրում: Կառուցապատման այս եղանակը Ք.ա. V հազ. հայտնի չէ ոչ՝ Բաղկաններում, ոչ՝ էլ Եփրատի վերին ավազանում: Հակառակ դրան, այն լայնորեն տարածված է Միդայում և Կիլիկիայում (Հաջիլար), ինչպես նաև Կենտրոնական Անատոլիայում (Գեմիքչիեյոյր):

Կարելի է ենթադրել, որ Ք.ա. IV-III հազ. Կենտրոնական Անատոլիայի և Ասորիքի մշակույթների ազդեցությունը ուժեղ էր ինչպես կուր-արաբյան մշակույթի տարածման արևմտյան շրջաններում, այնպես էլ էգեյան աշխարհում, ինչը վկայում է նաև սիրիական խեցեղենի նմուշների առկայությունը Միկենթում (Էփան) և Եփրատի վերին ավազանում՝ Նորշունթեփե XXIV (Հաուպաման) և Աբրաքեփե VIB1 (Պալ-միերի): Մեր կարծիքով նման զուգահեռները վկայում են ոչ թե միգրացիոն գործընթացների (Մերափրա), այլ մշակութային կապերի մասին:

3. Գեոլ-թեփե բնակավայրի K1-K3 հորիզոններից պեղված խեցեղենի որոշ նմուշներ (կարասներ գունազարդ խեցեղեն) իրենց զուգահեռներն ունեն Միկենթի Վաղ Միդայան II հորիզոններում (հմմտ. Բարթոն-Բրաուն, Էփան): Նույն ժամանակաշրջանում Միկենթում գունազարդ խեցեղենի հետ մեկտեղ հանդես է գալիս ռեղինՖ զարդանախշով խեցեղենը (Էփան): Որոշակի զուգահեռներ կարելի է դիտարկել նաև ճարտարապետության մեջ: Հարկ է հիշատակել կյոռ հառակագծով կացարանների առկայությունը Կասարի և Պանթոն (Նակսոս կղզի) բնակավայրերում հնարավոր է նաև Մեյսս կղզուց հայտնաբերված, փաստորեն, ուղղանկյուն հատակագծով կացարանի ձևերը կրկնող ծխական անոթը: Պետք է նշել, որ քեև որոշակի էքնիկական

քափանցումը չի կարելի բացատրել (Է. Խանգադյան), սակայն այն փաստը, որ խնցեզործության մեջ, ըստ էության շարունակվում են նախորդ դարաշրջանի ավանդույթները, ավելի հավանական է դարձնում մշակութային ներքափանցման փաստը:

Ելնելով վերոգրյալից, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

ա. ինչպես Էգեյան աշխարհը, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը Զ.ա. IV հազ. վերջում-III հազ. սկզբում գտնվում էր Կենտրոնական Անատոլիայի մշակութային ազդեցության ոլորտում,

բ. Հայկական լեռնաշխարհի և Էգեյան աշխարհի մշակութային կապերն արձանագրվում են կուր-արարսյան մշակույթի ողջ ընթացքում:

## ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԻ (ԱԻ)

### ՈՌՈԳՍԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒՐԱՐՏՈՒՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԵՐԵՐՈՒՄ ԸՍՏ «ԼՈՒՎՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԻ»

Հայկական լեռնաշխարհում հազարամյակների պատմությունն ունեցող արհեստական ռոտզումը վկայված է ինչպես հնագիտական և ցայսօր պահպանված հուշարձաններով, այնպես էլ գրավոր մշակույթի՝ այդ թվում նաև սեպագիր դպրության մնուշներով: Վերջիններիս թիվը հասնում է 29-ի՝ ներառելով Զ.ա. IX-VII դարերն ընդգրկող քսանութ ուրարտական և մեկ նորաստրեստանյան արձանագրություն:

Ռոտզման համակարգին վերաբերող ուրարտական տվյալները չափազանց ստույգ են: Արձանագրելով միայն կատարված փաստը՝ ջրանցք(ներ) անցկացնելու մասին (pili/PA<sub>5</sub><sup>(MES)</sup> agu), տեքստերը չեն տարբերակում այլ կարգի ջրաղիներ, եթե միայն <sup>(ID)</sup> muna՝ գետ<sup>(a)</sup> քարզմանվող տերմինը չի արտահայտել նաև մայր ջրանցք, իսկ isi-ն՝ առու իմաստները: Այս առումով ուրարտական դպրությունը հիշեցնում է շումերականը, որում ևս կիրառվել են սահմանափակ բանականությամբ տերմիններ (ID -- մայր ջրանցք, PA<sub>5</sub>/PA<sub>4</sub> - (փոքր) ջրանցք/առու և eg - առու):

Ոլորտն արտահայտող աքքադական տերմինները մոտ են շումերականին և՛ բովանդակությամբ, և՛ գրադեցած դիրքով: Աքքադական (ասսուրա-բաբելոնյան) սեպագիր դպրությունը, միաժամանակ, տարբերակել է ջրատեխնիկական տարբեր բովանդակություն ունեցող առավել մեծ թվով տերմիններ, որոնցից յոթը համոդիպում են նաև ասորեստանյան վերոնշյալ միակ արձանագրությունում՝ Սարգոն II-ի «ուրեղուղ տարվա արշավանքը» նկարագրող «Լուվրի աղյուսակում»:

Միջագետքյան նյութի հետ համադրված ջրատեխնիկական այդ տերմինները (ID, palgu, atappu, hiritu, halilu, hirisu, AB.SIN) գծազրույց են ռոտզման համակարգի հետևյալ պատկերը:

Համակարգի հիմքը կազմել են սնուցման աղբյուրից (գետ, լիճ ևն) տարված մայր ջրանցքները (ID, <sup>(ID)</sup> naru ≈ ուրարտ. <sup>(ID)</sup> muna): Վերջիններից սկիզբ են առել առաջնային նշանակության ջրանցքներ (palgu, PA<sub>3</sub>), որոնք ունեցել են նաև կարգավորիչ ջրամբարներ (<sup>(ID)</sup> hiritu՝) ջրարաշխ կառույցներով (halilu):

Համակարգը շարունակել են երկրորդական նշանակության ջրանցքները (atappu), որոնցից ճյուղավորվել են առանձին տեղամասեր ձգվող ջրատար ուղիներ (անվանումը բացակայում է. ըստ ամենայնի՝ համապատասխանել են PA<sub>4</sub>-ին /առու/): Զրուղիների շղթան եզրափակել են ռոտզող սկոսները (AB.SIN, absinnu), որոնց միջոցով իրականացվել է դաշտերի ամմիջական ռոտզումը: Ինչ վերաբերում է *խանդակ/ջրանցք* իմաստն արտահայտող *hirisu*-ին, ապա այն արձանագրությունում չի կիրառվել «ջրանցք» նշանակությամբ:



«Լուրի աղյուսակում» նկարագրված այս պատկերը, որը վերագրելի է տարածաշրջանի ինչպես որարտական, այնպես էլ մանայական տարածքներին, գտել է իր հավաստումը՝ ի դեմս կառուցվածքով համադրելի և հնագիտորեն վկայված Արագածոտնի ջրաբաշխ համակարգի:

## ԴԱԼԱԼՅԱՆ ՏՈՐԸ (ԵՊՀ)

### ՕՍԵՐԵՆՆ wærm եւլ wæzdan ԲԱՈՒԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Օսերեն wærm (ղլղորական բարբառով՝ wærmæ) «հացահատիկի շտեմարան, փռ» բառը, որը ծագում է հ.-ե. \*war, \*wer «փակել, քաղցնել» արմատից, իր գուգահեռներն ունի տանակյիտում՝ varman «ծածկոց», միջին պարսկերենում՝ warm «անձրևաջրի ամբար» իմաստներով, նաև արդի պարսկերենում՝ barm, որոնք առաջացել են «պահել, պատնեշել» նշանակությամբ (հմմտ. հայ. *քրմ* «պատ» բառը):

Ըստ երևույթին, հ.-ե. այդ արմատին է առնչվում որարտական սեպագրերում հանդիպող 'a-ri (wari) «հացահատիկի շտեմարան» բառը: Հատկանշական է, որ wari բառի նշանակությունը ճշգրտորեն համապատասխանում է միայն օսերենի պարունակած իմաստին: Գուցե պատահական չէ նաև, որ wari բառի տարածման շրջանն, ըստ ամենայնի, առավելապես համընկնում էր Վանի տեղության հյուսիս-արևելյան զավատների հետ. նշված բառը հանդիպում է Կարսի, Արարատյան դաշտի, Վանի վիճագրերում («Արփիլամիշ, Արփի-բերդ, Արմավիր, Պատնոց, Վան»): wari բառի գործածության մեզ հայտնի ծայր հարավային կետն, այսպիսով, Վան քաղաքն է:

Օսերեն wæzdan «ազնվական, ռստանիկ» բառը հստակ ստուգաբանություն չունի, բայց ամենամոտ գուգահեռ ձևերն են՝ հայ. *ռստան* «քաղաքական իստ քաղաք կամ գավառ» և պարս. *ostān* «նահանգ, մարզ» բառերը. վերջինիս հին իրանական և միջին իրանական տարբերակներ հայտնի չեն: Կարծիք կա, որ օսերեն wæzdan բառը փոխառյալ է հայերենից, իսկ արդեն օսերեն ձևից փոխառություններ են համարվում մի շարք կովկասյան լեզուներում առկա տարբերակները՝ հին կարադղիներեն *wasdan*, *wastan* «սպառնալ», ալավերեն *uzdan* «նուրբ, բարեկիրք», նաև հյուսիսային Կովկասի բյուրբական լեզուներում հանդիպող գուգահեռները:

Ըստ երևույթին, wæzdan բառին է առնչվում որարտական 'a-za-ni (Wazani) «երկիրը» Արարսի ձախափնյակում, որտեղ գտնվում էին Արին-բերդի, Կարսի բլուրի և Արմավիրի բերդաքաղաքները: Wazan(i) երկրամասն, ամենայն հավանականությամբ, անվանը և դիրքով համապատասխանում է Այրարատի *Ռստան Հայոց* գավառին, որը հնում կարող էր «Աշխարհացույցի» նշած սահմաններից առավել ընդարձակ տարածք զբաղեցնել և ընդգրկել Արարատյան դաշտի բոլոր մայրաքաղաքները:

Որպես առվածի ամփոփում կարելի է նշել, որ որարտական /a/ սեպախումբը, որի հնարավոր ընթերցումներն են համարվում՝ -ha-, -ya-, -wa-, առնվազն հյուսիս-արևելյան արեալում պետք է որ հնչեր /w/ կիսածայնով, որի կապակցությունը /a/ ձայնավորի հետ հայերենում, հավանաբար, տվել է /u/ (o): Ուշագրավ է, որ օսերենում /w/ կիսածային հաջորդող /O/ և /o/ ձայնավորները հստակ չեն տարբերակվում և նույնիսկ գրության մեջ երբեմն շփոթվում են, ինչպես, օրինակ՝ wæd/wod «այդում»:

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՅՐԱՒՆ-Բ», «ՍՈՒՐԱՐ(ՏՈՒ)», «ՓՈՅՈՒԳԻԱ»  
ՏԵԴԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ազգաբանական շերտում Յրօնքը արամյանների բնօրրանն է (ըստ արամյանների պատկերացումների, «այստեղից ցրվեցին որդիները»): Ն. Աղոնքը հայկական Տարոնի տարածքը նույնացնում է բիայնական Արմե (Ուրմե, Ուրմեուխի) երկրի հետ: Իհարկե, նման նույնացումները ենթադրում են որոշակի մոտավորություն, որովհետև Տարոնի միջնադարյան սահմանները չէին կարող ճշգրտորեն համապատասխանել բիայնական ժամանակների Ուրմեի սահմաններին: Ուսումնասիրողները համերաշխ են, որ սա նույն էին միջագետքյան արձանագրությունների Շուրբան է (վկայված է նաև Շուբուր, Շուբարու, Շուբարուտ, Շուբե-Շուպրե, Շուպրիա ձևերով), ինչի հիման վրա էլ մասնագիտական գրականության մեջ և ուսումնական ձեռնարկներում այն ստացավ Արմե-Շուբրիա բաղադրյալ անվանումը: Մյուս կողմից, Շուբրիա երկրանունն իրավամբ նույնացվում է Բ.ա. 3-2-րդ հազարամյակների Ս/Շուբուր-Ս/Շուբարի-Ս/Շուբարուտի հետ:

Սեզանում Յրօնը ներկայանում է, իբրև պայմանական մի կենտրոն-բնօրրան, որ խորհրդանշում է ամբողջ Արմե-Շուբրիա երկիրը: Յրօն օրանունն ունի զուգահեռ տարբերակ՝ Սփյուտ (Սփիտ): Եթե առասպելի Սիմ տեղանունը նույն Սիմ՝ 28-րդ օրանունն է, ապա Յրօն-ք-ը՝ 25-րդ Յրօն-Սփյուտ օրանունն է: «Հինքն Արամագնեաց», որոնք ներկայացնում են այս պատմությունները, կրում են Արմե-Շուբրիայի Արմե ցեղանունը, իսկ (Յրօն)-Սփիտը զուգահեռվում է Շ/Մուփուր (=Մուբուր, Մուփրիա) տեղական հետ: Մրանից կարող է թիսել երկու՝ միմյանց հակասող եզրակացություն.

1. Մուբուր երկրի բնակիչները և երկրին անուն տվողները հայոց լեզվի կրողներ են, քանի որ (Մուփուր) -*Սփիտ*-ը բնիկ հայերեն բառ է (հնդեվրոպ. \*s-pir նախածնից):

2. Մուփուր և Սփիտ բառերի նմանությունը պատահական է: Նաև պատահական է Սփյուտ-Յրօնքի և Շուբրիայի աշխարհագրական համապատասխանությունը, նաև պատահական է, որ հենց «այստեղից ցրվեցին որդիները»: Հայերն ավելի ուշ են հայտնվել Մուբուրի տարածքում և տեղանունը ենթարկվել է ժողովրդական ստուգաբանության: Տեղի բնակիչները հին անունը փոխել են բացատրել և հասկանալ, և բնականաբար դա արել են իրենց (նոր) լեզվով:

Սեզ ավելի հավանական է թվում առաջին տարբերակը, որովհետև հայերենի հետ մերձավոր ցեղակցություն ունեցող հունարենի կրողները ունեն նույն հնդեվրոպական արմատից սերող տեղանուն՝ *Սպարտա* (=«Սփիտ»): Նաև՝ (սա մեզ համար գլխավոր փաստարկ է ) *սպարտի* (=«սփոված, ցանով») ռազմիկների (ցե՞ղ)անունը, որի ծագումը բացատրվում է առասպելով: Հունական Կադմոսը սպանում է Արեսի որդի Դրակոնին և հողում ցանում վիշապի ժանիքները: «Դրակոնի առամներից բուսնում են *սպարտի (ցանովի) կոչված ռազմիկները*: Նրանք սկսում են կռվել իրար դեմ և բոլորը, բացի հինգից, սպանվում են: Ողջ մնացածները օգնում են Կադմոսին կառուցելու Կադմես և դառնում են Թբեքի *ամենահայտնի տոհմերի նախահայրերը*: Հայոց Կադմես տունը (ըստ ամենահին վկայությունների) Մասնո լեռների ամսիջական հարևանությամբ (հարավ) գտնվող Կադմուխի երկիրն է, իսկ Արմե-Շուբրիայի (ամենամեղ իմաստով) տարածքը հենց այստեղ է (Մասանո լեռներ): *Սպարտա* տեղանունը և *Սպարտի* (ռազմիկների) ցեղանունը (բուն ճշմարտություն է «սփյուտ, ցրոն»), բացարձակ զուգահեռ են Մուբարուտ տարբերակի. Սպարտի-Սպարտա=Մուբարուտ: Նույն Կադմոսի սպանած նույն վիշապի առամները ցանում է նաև Յասունը Այա



երկրում, որ հետազայում հույները նույնացրին Կոլխիդայի հետ: Յանքը տեղի է ունենում մի դաշտում (արտում), որ ձոնված է Արեսին: Այս դաշտ-արտը կա երկնքում, իբրև շումերական համաստեղություն՝ IKU(=«գաշտ, արտ»): Սա համարվում էր Լա-Հայա աստծո կացարան: «Սասնա Շոեր» էպոսի, որ սերում է այս տարածքից, և որի հերոսները սասունցի են, Արտն է սա, որի կողքին ապրում է Արտատեր պառավը: Սպարտի (ցանովի) ռազմիկների ցեղը (որ մենք նույնացնում ենք սուրբիացիների հետ), ահա այստեղ է բուսնում հողից: Այս Դաշտ-արտ համաստեղությունը նույն Տարոնի դաշտն է, որ Աստղիկը (=Քոստ-«Երկնային դիցուհի») համաստեղությունն) մասամբ ծածկում է իր մեզով-մշուշով (մեզ=Անդրոմեդայի միգամածություն և Կաթնոսի): Բացահայտ է, որ Սպարտի ռազմիկները սերում են վիշապից (Կաթնոսն ինքը վերջում դառնում է օձ-վիշապ) և ունեն վիշապի պաշտամունք: Միայն Տարոնում վկայված է միանգամից երկու բաղաձ օձ և Վիշապ անուններով: Երեմյանը ենթադրում է, որ Վիշապաբաձաքը գտնվել է հետազայի Տիրակատար տեղանքում, բայց մենք ավելի հավանական ենք համարում, որ «Տարոնի պատմության» մեջ հիշատակվող այս բաղաձը հենց Մուշն է: Ժողովրդի պատմական հիշողության մեջ մնացել է, որ այստեղ կա Վիշապ անունով բաղաձ: Սա շումերական MUSH-Մուշ (=«օձ, վիշապ») համաստեղությունն է (ժամանակակից՝ Հիդրա):

Սփիռ-Մուփրիա տեղանուն ցեղանվան մեկ այլ տարբերակ է, կարծում են, Փոիգ-Փոիզ (փոիզիացի) ցեղանունը, որ ծագում է նույն *u-փիռ* (փուտ, փո-ել) բառից, -իկ (կամ -ուկ) մասնիկով, ինչպես՝ հայերեն պարս-իկ, հնդ-իկ, այդպես՝ *փիռ-իկ, փիռ-իկ*: Սրանց առասպելական մահապետի՝ Փոիքսի մասին պատմվում է հետևյալը: Կաղմոսի դուստր Ինոն «համոզում էր օրբունեմուհիներին չորացնել ցանքի սերմացուն»: Հետո նա կաշառում է Դելփիք գնացող դեպաններին, որ վերադարձին ասեն հետևյալը. «Աստվածներին զոհիր քո որդի Փոիքսին, և նրանք կրկին արտերը բերրի կդարձնեն»: «Աթամասը վճռեց զոհաբերել իր սիրասուն որդուն»: Եթե առասպելից զանց առնենք կենցաղային բացատրությունները, ապա բացահայտ է, որ մենք գործ ունենք արիայիկ ծեսի հետ, երբ արտերը բերրի դարձնելու նպատակով զոհ էր մատուցվում արտերին, ավելի ճիշտ՝ դրանց հովանավոր աստվածությանը: Փոիքսը, որ հողմերի աստված էրուսի բռն էր և ամպերի աստված Նեփելեի որդին, այստեղ ներկայանում է, հենց որպես ցանքի, արտի հետ կապված աստվածություն: Կաղմոսի դուստր Ինո անունի մեջ մենք տեսնում ենք շումերական *Ին.ան.նա* դիցանունը, որտեղ վերջին *ան.նա* մասնիկը երկինք է նշանակում և հաճախ դրվում է աստղանունների վրա, ինչպես օր. Գուդ.ան.նա (Յուլ երկնքի): Արտ-դաշտ համաստեղության մի կողմում Անումիտ-Աստղիկն է, այսինքն՝ Ինո-Ինանան, մի կողմում Խոյ Կենդանակերպը: «Քրմի դանակի հարվածից պիտի ընկներ Փոիքսը, բայց հանկարծ հայտնվեց *ոսկեգեղձը ոչխարը*՝ Հերմես աստծո շնորհը»: Միջազգային ավանդույթը Խոյ համաստեղությունը (LU.HUN.GA) ուղղակի անվանում է «(աստված) Գումովի»: «Փոիքսն իր բրոջ՝ Հելլայի հետ մտեց ոչխարի վրա, և նա երեխաներին բոցրեց դեպի հյուսիս»: «...հեռուն էր սլանում ոչխարը Փոիքսի հետ և... իջավ Կոլքսի Փասիս գետի ափերին, ուր իշխում էր Հելիոս աստծո որդին»: Փոիքսին փրկող ոչխարի ոսկեգեղձը Էյբոթը կախեց Արեսի սրբազան դաշտում: Հիշենք, որ հենց այս դաշտն է վարում և ցանում Յասոնը, որից բուսնում են ռազմիկներ: Նույն Կաղմոսի սպանած նույն վիշապի ատամներն են, որ ցանում է Յասոնը: Ուրեմն ռազմիկները, որոնք բուսնելուց անմիջապես հետո սկսում են կովել միմյանց դեմ, նույն *սպարտի* (ցանովի, սփռովի) ռազմիկներն են: Իսկ Յասոնը ծնվելուց անմիջապես հետո Պելլոն լեռան վրա ապրում է Քիրոն կենտավորոսի խնամքի տակ և նրա դաստիարակությամբ: Փաստորեն ամեն ինչով նա պարտական է Քիրոնին: Քիրոնը Ադոնավոր Կենդանակերպն է երկնքում: Մրան համապատասխանում է հայկ. Տրե ամիսը (իմամ). Տրի ցանը, Տրի խաբոր, տիր

դնել և այլն): Վաճառման վարտուցանքի աղջ ընթացքը ձեռնված է Տիր սատածում, որ Յրոն-Սփիտ, Փիտ սատվածության տարբերակներից մեկն է: Օրսնունների մեր ցանկում Յրոն-Սփիտ օրսնունին համապատասխանում է Աղեղնավարի ամիսը:

#### ԴԵՄՈՅԱՆ ՀԱՅԿ (ԵՊՀ)

1980թ. ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՇԻՋՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԸ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ

1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը հանրապետական թուրքիայի պատմության մեջ թվով երրորդն էր: Այն 70-ական թ. վերջերին թուրքիայի ներքաղաքական կյանքում լարվածության ուժեղացման և տնտեսության ոլորտներում արձանագծված ճգնաժամային զարգացումների հետևանք էր:

Հեղաշրջումից հետո Բ. Ուլուստի գլխավորած զինվորական կառավարության կազմում մտնեցին վարչապետ Ս. Դեմիրելի տնտեսական գծով խորհրդական թուրքու Օզալի մշակույթում փոխվարչապետ, վկայեց նոր իշխանությունների կողմից Դեմիրելի կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության սկզբունքների պահպանման մասին, որոնք միատեսակողված էին զարգացնելու թուրքական տնտեսությունը շուկայական հարաբերությունների սկզբունքներին և տրամաբանությանը համապատասխան՝ հենվելով 1980 թ. հունվարի 24-ին ընդունված տնտեսության կայունացման ծրագրի վրա: «Հունվարի 24-ի» ծրագիրը ներառում էր հետևյալ կարևորագույն միջոցառումները.

1. Ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ տնտեսական քաղաքականության ձևակերպումը և իշագործումն ավելի արդյունավետ դարձնելու համար,
2. արտասահմանյան տարադրամի ներհոսքի ապահովում,
3. արտաքին առևտրի ազատականացում, արտասահմանից և արտասահման համար արտադրվող ապրանքատեսակների արտադրության համար ներմուծվող ապրանքներից զանձվող մարտատարների վերացում,
4. թուրքական ապրանքների արտասահման համար լրացուցիչ խրախուսիչ միջոցների կիրառում,
5. հարկային քարեփոխումների համար նոր օրենսդրության մշակում,
6. զնազոյացման ոլորտում միջոցառումների իրականացում և պետական ապրանքների իրական զների հաստատում ու զների վերահսկողության կոմիտեի վերացում,
7. պետական տնտեսական կազմակերպությունների համար սրբակցության ապահովում, հիմնական արտադրատեսակների զների նկատմամբ վերահսկողության և պետական աջակցության վերացում,
8. միջոցառումներ եկամուտների բաշխման ոլորտում, շահույթի կարգավորում, հարկերի չափերի վերանայում,
9. օտարերկրյա ներդրումների համար միատեսակ պայմանների ստեղծում,
10. վարչական միջոցառումներ, արտասահման ոլորտում բյուրոկրատական քաշքշուկների և ձևակերպումների պարզեցում, պետական կառույցներում օտարերկրյա կապիտալի ներմուծումը և ներդրումները խրախուսող կազմակերպությունների ստեղծում,
11. պետական մեծաշնորհի վերացում մի շարք ապրանքների արտադրության բնագավառում, հարկային օրենսդրության վերանայում, արտասահման և կապիտալ ներդրումների խրախուսման վերաբերյալ որոշումների մշակում:



1980-1983 թ. Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած զինվորական իշխանությունները կարող է խիստ միջոցառումների կիրառմամբ կարողացան կայունացնել երկրի ներքաղաքական իրավիճակը, ինչը բարեբար ազդեցություն ունեցավ քուրդական տնտեսական վրա՝ այս ոլորտում ազդարարելով որոշակի դրական տեղաշարժեր: Հաջողվեց կայունացնել քուրդական լիրայի արժեզրկման տեմպերը, նախարդ տարիների համեմատությամբ ապահովվեց տնտեսության աճի դրական ցուցանիշներ և այլն:

1980-1983 թթ. զինվորական իշխանությունների տնտեսական քաղաքականությունը, հանդիսանալով քուրդական տնտեսության ազատականացման ուղղված քաղաքականության իրականացման առաջին փուլը, հիմք նախապատրաստեց քաղաքացիական իշխանության վերականգնումից հետո իշխանության եկած Թուրքոյ Օզալի երկու կառավարությունների համար շուկայական հարաբերությունների հետագա խորացման և որակապես նոր տնտեսական ռազմավարություն կիրառելու:

## ՁԲԱՅԱՆ ԱՐՄԱՆԳԱ (ԱԻ)

### ԱՄՈՒՆԱՌԹՅԱՆ ԵՎ ԱՄՈՒՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՉԵՎԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ՄԵՉ

Ամուսնական և ընտանեկան հարաբերությունները հասարակական սոցիալական համակարգի գլխավոր տարրերն են, որոնք կարգավորվում են մահմեդական իրավունքով և սովորույթային իրավունքի հիմունքներով:

1. Ամուսնությունը, իրանական ժողովուրդների պատկերացմամբ, առաջին հերթին սոցիալական պայմանագիր է, որը կնքվում է իրար հավասար անձանց միջև՝ պայմանավորված նրանց ծագումով, հավատքով, կոչումով, երբեմն մասնագիտությամբ և ունեցվածքով, իսկ ամուսնական հարաբերությունները հիմնված են առումալի հիմունքների վրա ( պրակ., տաջիկ. mahir, քրդ., եզդ., գձեմ): Մահմեդական իրավունքի համաձայն, տղամարդը կարող է միաժամանակ չորս կին ունենալ (hāvu) և պարս. մի քանի հարճ, սակայն, իրանական ժողովուրդների մեջ ընտանիքը հիմնականում միամուսնական ընտյք է կրում, իսկ բազմակնությունն ու հարեմները՝ մեծահարստների մենաշնորհն են, ինչն արդեն 19-րդ դ. կեսերից րացատություն է կազմում:

2. Իրանական ժողովուրդների մեջ սահմանված էր ամուսնության երեք ձև՝ մշտական (nikah i-daim), ժամանակավոր (māta կամ siqe) և ստորկնների ամուսնություն (nikah kenizon): XIX դ.- XX դ. սկզբին իրանական ժողովուրդների մեջ նախընտրելի էին համարվում ամուսնությունները հորեղորդ / քեռու և հորաքրոջ / մորաքրոջ երեխաների միջև: Իրանական ժողովուրդների մեջ օրինական ամուսնության տարիքը սահմանված էր աղջիկներին՝ 16, իսկ տղաներին՝ 18: Մական այս կանոնը, մասնավորապես, գյուղական միջավայրում հաճախ չէր պահպանվում: Բազմիցս հանդիպում էին աղջիկների վաղախաս ամուսնության դեպքեր (10-13 տարեկանից): Մեծ մասամբ վաղ ամուսնությունները չէին զրանցվում և սահմանափակվում էին միայն կրոնավորների թույլատրությամբ:

3. XIX դ.-XX դ. սկզբում իրանական ժողովուրդների մեջ գերիշխում էին փոքրակազմ ընտանիքները (ամուսին, կին, երեխաներ): Հանդիպում էին նաև մի քանի ամուսնական զույգից բաղկացած ընտանիքներ (հիմնականում եղբայրները իրենց ընտանիքներով) նահապետի (քրդ. malxe male, պրակ. bozorge xanevade) գլխավորությամբ:

Մահմեդական ամուսնա-ընտանեկան հարաբերությունները ունեն մի շարք բնորոշ առանձնահատկություններ՝

ա/ մինչնախնեղական և ազգա-ցեղային սովաբույրների ու սովորույթների միջև գոյություն ունեցող կապի հաջորդականությունը

բ/ կնոջ ենթակա կարգավիճակը ընտանիքում, ինչը համապատասխանում է մահմեդական ուսմունքին;

գ/ խլամի բեկադրող կարգավիճակների և նրանց գործնական կիրառման միջև խոչը առջարկելի առկայությունը:

4. Դուրանում նախատեսված է ամուսնալուծության երեք ձև «tālāk», «zihār» և «aimān», որոնց բուն էությունը նույնն է, իսկ արտահայտման ձևերը տարբեր:

Դուրանը չի նշում օգնության չափը, որն ամուսինը պետք է հատկացնի կնոջը ամուսնալուծությունից հետո: Սակայն շեշտում է, որ հավատաբարության դեպքում ամուսնալուծված կինը չի կարող օգնություն ստանալ զավակներից և զրկվում է ամուսնու խնամքից: Հատ շարխարի՝ մահմեդական ամուսնալուծության ամենագլխավոր առանձնահատկությունն այն է, որ ապահարզանի նախածնունդությունը գտնվում է տղամարդու ձեռքում, ամուսինը կարող է բաժանվել իր կնոջից՝ ըստ իր ցանկության և հայեցողության: Իսկ կինը կարող է ապահարզան պահանջել հետևյալ ծայրահեղ դեպքերում՝ ա/ ամուսնու հավատաբարության, բ/ նրա անհայտ երկարատև բացակայության (ժամկետը տույզ չի նշվում), գ/ նրա ֆիզիկական լուրջ արատների դեպքում:

XIX դ. վերջում - XX դ. սկզբում իրանական ժողովուրդների և մահմեդականների մեջ առնասարակ ամուսնական հարաբերությունները բացահայտ կրում էին անխրաժահավատար բնույթ ինչպես սեռերի, այնպես էլ սոցիալական խավերի միջև:

ԷԼՈՅԱՆ ԱԼԻԱ (ԵՊՀ)

## ՆԱՍԱՐԻ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Նասարը* (արաբերեն՝ *ծագումնաբանություն*) որպես գրավոր ժանր արաբական գրականության մեջ ձևավորվել է VIII դ. վերջին - IX դ. սկզբին՝ պատմատեմնաբանական գրավոր հուշարձաններում: VIII դ. կեսերից սկսած գրի են առնվել մինչ այդ բանավոր կերպով հաղորդվող տեղեկությունները՝ խաբարները, որոնց բովանդակությունը կապված էր արաբական ցեղերի տեմնաբանության հետ:

*Խաբար* (հոգնակի *խաբար*) նշանակում է *հաղորդում, տեղեկություն, լուր*: *Խաբար* են անվանում նաև պատմական բնույթի արձակ ստեղծագործությունը, որը տեղեկություններ է հաղորդում որևէ կարևոր իրադարձության կամ անձի մասին: Այս բանավոր արձակ պատմությունները անպայման ունեին իրական հիմք, այսինքն՝ տեղեկություններ էին իրական անձանց ու դեպքերի մասին: Խաբարները տեղեկություններ են հաղորդում ոչ միայն խլամի ծագման, Մուհամեդի, նրա զինակիցների, խալիֆայության ձևավորման մասին, այլև պատկերացում են տալիս այն արժեքային համակարգի վերաբերյալ, որոնք ձևավորվել էր արաբական ցեղերի գիտակցության մեջ քն նախախլանական և քն՝ խլամական շրջանում:

Նասարի ժանրի առաջին գրավոր հուշարձանները պատկանում են Հիշամ իբն Քալբին, Աբու Ուրայդային, Աբու Ամր իբն ալ-Ալային: Վերջիններս չեն պահպանվել կամ պահպանվել են ավելի ուշ շրջանի հեղինակների ստեղծագործություններում հատվածաբար:

Նասարի ժանրին պատկանող ստեղծագործությունները, բաղկացած լինելով խաբարներից, դերևս վաղ շրջանում կիրառում են բանավոր ինֆորմացիայի



հաղորդման համակարգին հատուկ տեղեկությունների խսկությունը հաստատող միջոցներ (*խմանդ*): *Խմանդը* (արաբերեն՝ *հաստատում*) անձանց մի շրջանի վկայականություն է, որոնց միջոցով տեղեկությունը փոխանցվել է սկզբնաղբյուրից գրանցողին: Խմանդով էին արձանագրվել Մուհամեդի կյանքի և գործունեության մասին հաղորդումները, որոնք կոչվում էին *հադիսներ*:

Ընդհանուր սինկրետիկ արձակ բանաստեղծական տեքստից գրավոր մշակույթի շրջանակներում պետական մեխանիզմների և հասարակության զարգացման հետևանքով սկսում է ճյուղավորվել և առանձին ժանրերի ձևով արտահայտվել գիտելիքի այդ ժամանակաշրջանի համար ամենաակտուալ մասերը, որոնցից մեկը նմաքն է:

Նասաբի ժանրին պատկանող ստեղծագործությունները է Աբու-լ-Աբաս Ամնադ իբն Յահյա իբն Ջաբիտ Ալ-Բալազուրիի «*Քիրքաբ անսաբ ալ- աշրաֆ*» («*Գիրք շարիֆների ծագումնաբանության մասին*») անավարտ երկը, որը զրի է առնվել հիջրայի III դ. (IX դ.): «*Քիրքաբ անսաբ ալ-աշրաֆ*»-ը տեղեկություններ է պարունակում բազմաթիվ արաբական ցեղերի մասին, մեկնաբանում դրանց ծագումը, ներկայացնում տոհմաձառերը, դրանց անդամների կենսագրությունները, նրանց հետ կապված պատմությունները: Նա մի կողմից համարվում է ծագումնաբանական, իսկ մյուս կողմից՝ պատմական, տեղեկատվական կամ էլ բացատրական երկ:

Սույն աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրելու *նասաբը* որպես գրավոր ժանր և հստակեցնել նրա դերը, տեղը և առանձնահատկությունները արաբական միջնադարյան մշակույթի մեջ:

#### ԹԱԵՎՈՍՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ)

#### ՀԵՐԱԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Այս զեկուցումով փորձ է արվում ներկայացնել ավանդույթներով հարուստ Իրանի դասական գրականության մեջ էական դեր խաղացած Հերաթյան գրական դպրոցի ձևավորման համառոտ պատմությունը, որը 15-րդ դարի ողջ իրանական գրականության զարգացման մեջ իր ուրույն տեղ ունի:

Տարածաշրջանում ստեղծված անկայուն իրավիճակի պայմաններում երբեմնի իրանական մշակութային կենտրոնները՝ Շիրազը և Թավրիզը, կորցրել էին իրենց նախկին դերն ու նշանակությունը: Իրանական տարածքներից Հերաթում ապաստանած գրողների ու բանաստեղծների ավագ սերնդի ներկայացուցիչների շնորհիվ ստեղծված միջավայրում աճեց գրական մի սերունդ, որն ապահովեց իրանական գրականության զարգացման անընդհատությունը:

Զեկուցման մեջ ներկայացված են.

ա) 15-րդ դարի իրանական գրականության առանձնահատկություններն ու բնորոշ գծերը,

բ) Իրանում ստեղծված այն քաղաքական իրադարձությունները, որոնք նպաստեցին հերաթյան գրական դպրոցի ձևավորմանը,

գ) 15-րդ դարում Հերաթում ստեղծագործած հեղինակները (Ջամին, Նավոյին, Շիրազին, Քաթեբին, Հալային, Քաշեֆին և այլոք),

դ) Թյուրքալեզու տարրերի ներխուժումը իրանական գրականության,

ե) Հերաթում գրական ավանդույթների կողքին բուռն զարգացում ապրած մանրանկարչական դպրոցը, առանց որ այդ դարի գրական ավանդույթների ուսումնասիրությունը թերի կլիներ:

ԱՄՆ-Ի ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԳԼՈՒԻՐԱՆԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ  
ՎԵՃԻ ՀԱՐՑՈՒՄ

Մինչև երկրորդ աշխարհամարտը Անգլիան տիրապետող էր ինչպես Իրանում, այնպես էլ առհասարակ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Անգլո-Իրանական Նավթային Ընկերությունը (ԱԻՆԸ) աշխարհի հզորագույն նավթային ընկերություններից մեկն էր: Սակայն II համաշխարհային պատերազմից հետո Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցավ ուժերի վերադասավորում: Եթե մինչև II համաշխարհային պատերազմը ԱՄՆ-ը էական ազդեցություն չունեին Իրանի նկատմամբ, ապա հետպատերազմյան շրջանում նկատվում է այդ ազդեցության էական աճ: Նոր իրողությունների պայմաններում Միացյալ Նահանգներին անհրաժեշտ էին նոր շուկաներ, նավթի ձեռքբերման աղբյուրներ, ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ և այլն: Սակայն առկա էին ԱԻՆԸ-ի հետ կապված բազում խնդիրներ, որոնք հուզում էին Իրանի ողջ ժողովրդին: Երկրում աստիճանաբար հաստատանում էր նավթի ազգայնացման խնդիրը: Անգլիան չէր ցանկանում որևէ զիջման գնալ, ինչն ավելի էր սրում իրադրությունը:

1949թ. աշնան Իրանում ձևավորվեց «Ազգային ճակատը» Մոհամմեդ Մոսադեհի ղեկավարությամբ, որին հարեցին Իրանի բազմաթիվ ազդեցիկ ուժեր: 1951թ. ապրիլի 28-ին «Ազգային ճակատի» և նրա համախոհ ուժերի ճնշման ներքո Իրանի Մեջլիսը ստիպված էր ընդունել նավթայնությունաբերության ազգայնացման վերաբերյալ օրենք: Այդ օրենքի ընդունումից հետո, Անգլիան դիմեց կտրուկ քայլերի: Ամերիկյան մի շարք ազդեցիկ քաղաքագետներ, ելնելով Միացյալ Նահանգներին քաղաքական ու տնտեսական շահերից, քննադատում էին ԱԻՆԸ-ին: Այդ քաղաքականության ենթատեքստը հանգում էր նրան, որ Վաշինգտոնը ցանկանում էր իր բաժինն ունենալ իրանական հարուստ նավթային պաշարներից: Իրանում ևս առկա էին քաղաքական ուժեր, որոնք ԱԻՆԸ-ի դեմ ծավալած պայքարում նպատակահարմար էին գտնում դիմել ԱՄՆ-ի աջակցությանը: Օգտվելով այդ պատեհ առիթից Վաշինգտոնը առաջարկեց իր աջակցությունը անգլո-իրանական նավթային տարածայնության կարգավորման հարցում: 1951 թ. ապրիլի 9-19-ը ԱՄՆ-ի հրավերներով կողմնորոշ ժամանեցին Վաշինգտոն, սակայն էական հաջողության չհասան: Իրավիճակը գնալով բարդանում էր: Անգլիայի փորձերը խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու համար, հանդիպեց ԱՄՆ-ի կտրուկ հակազդեցությանը: ԱՄՆ-ի՝ Իրանի նկատմամբ նման «ժարեհաճ» քաղաքականությունը վկայում է այն մասին, որ Վաշինգտոնում շատ լավ հասկանում էին, թե ռազմական միջամտության արդյունքում, ինչպիսի հնարավորություն կընձեռնվի Խորհրդային Միությանը: Մոսադեհին անհրաժեշտ էր չեզոքացնել ցանկացած միջոցով: Նախագահ Դ. Էյզենհաուսը կտրուկ շրջադարձ կատարելով և հրաժարվելով նախկին վարչակազմի քաղաքականությունից, որոշեց նավթային հարցում աջակցել Մեծ Բրիտանիային: Օգոստոսի 13-ին շահի կողմից Մոհամմեդ Մոսադեհի փոխարեն նոր վարչապետ նշանակվեց գեներալ Ջահեդին: Սակայն Մոսադեհը հրաժարվեց ընդունել շահի այդ վճիռը, այն համարելով ոչ օրինական: Դա անօրինակ կերպով շիկացրեց մթնոլորտը և ի վերջո Մ. Մոսադեհին չհաջողվեց խուսափել ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից՝ «իրեն պարտադրված ճակատագրից»:

Հնդկաստանի սկզբին Վաշինգտոնի աջակցությամբ վերսկսվեցին հարաբերությունները Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև: Ամերիկացիները կարծիք հայտնեցին, որ անհրաժեշտ է միջազգայնացնել իրանական նավթի շահագործման գործը: 1954թ. օգոստոսի 5-ին Թեհրանում և Լոնդոնում տպագրվեցին պաշտոնական հայտարարա-



րություններ, որոնք հստակեցնում էին նավթի հետ կապված նոր պայմանագրի կետերը: Իրենց պրագմատիկ քաղաքականության շնորհիվ Միացյալ Նահանգները, որոնք մինչև II համաշխարհային պատերազմը ըստ էության մասնակցություն չունեին իրանական նավթի շահագործման գործում կարողացան ձեռք բերել Իրանի «սև ոսկու» 40%-ը: Բացի այդ, Իրանում իրենց «մասնագետների» ներկայությունը հնարավորություն էր ստեղծում հարկ եղած դեպքում միջամտել Իրանի ներքին գործերին և ազդեցության հավելյալ լծակներ ձեռք բերել այդ երկրի տնտեսական և քաղաքական կյանքի նկատմամբ:

### ԽԱՍԱՏՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ (ՀԱԽ)

#### **ՆՈՐ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ, ԹԵ՞ ԽՍԲԱՅԻՆ ԻՆՔՆԱՀԱՏՍՈՒՄ**

ՀՀ գյուղաբնակ փախստականության (նախկինում աղրբեջանաբնակ, ներկայումս՝ հայաբնակ գյուղերի բնակչության) միջավայրում ընթացող մշակութային ինքնահաստատման դրսևորումներից մեկը, ինչպես ցույց են տալիս 1999թ. «Հազարաշեն» ազգաբնական հետազոտությունների հայկական կենտրոնի իրականացրած «Փախստականներ և տեղաբնիկներ. հարաբերությունների տասնամյա ընթացքը» ծրագրի շրջանակներում մեր կատարած դաշտային աշխատանքները, կարելի է համարել նոր հուշարձանների, սրբատեղիների և ուխտավայրերի առաջացումը նրանց բնակության ներկայիս տարածքներում:

Նմանատիպ հուշարձաններն ունեն մի շարք առանձնահատկություններ և իրենց մեջ պարունակում են ինչպես տեղական բնակչությունից (տվյալ դեպքում՝ Վարդենիսի և Վայոց Ձորի բնիկները) տարբերակվելու միտում, այնպես էլ «կորուսյալ» աշխարհը (տվյալ դեպքում Աղրբեջանի նախկինում հայաբնակ վայրերը) նոր պայմաններում վերակենդանացնելու ցանկություն: Այս հուշարձանները հետաքրքիր են նաև այն առումով, որ դրանց մի մասը կապված է «նախկին» կյանքի խմբային հիշողության հետ, իսկ մյուս մասն արդեն նոր իրողության մաս է կազմում:

Առհասարակ վերոհիշյալ հուշարձանները, սրբավայրերն ու ուխտատեղիները կարելի է տեսակավորել հետևյալ կերպ.

ա/ նախկին բնակավայրի սրբավայրերից բերված մասունքներ, որոնք տեղադրվում են բակերում կամ նոր գյուղերի կենտրոններում;

բ/ նոր տարածքից «հայտնաբերված» խաչքարեր կամ «մոռացված» մատուռներ, որոնք նոր բնակավայրերի վերահայացման և վերաբրիստոնեացման հետ սկսում են ապրել նոր, երկրորդ կյանքով;

գ/ նոր տարածքներում նոր կառուցվող հուշարձաններ, որոնք վեր են ածվում յուրահատուկ ուխտավայրերի:

Փախստականների բնակության նոր վայրերում առաջացող ուխտավայրերը, իրենց սովորական գործառույթներից բացի, սկսում են կատարել նաև փախստականների միկրոաշխարհի ձևավորման, նրանց խմբային ինքնահաստատման և ներկայիս ու նախկին բնակավայրերի մեջ կապող օղակի դեր:

## ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՈՎԵԼ. ԺԱՆՐԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

“Նովելը հարազատ է ժողովրդին ավելի քան որևէ այլ ժանր, որ գոյություն ունի ժամանակակից արաբական գրականության մեջ, և այն ամենալայն ճանաչումն ունի”, -գրում է եգիպտացի գրականագետ Մահմուդ Ամին ալ-Ալիմը:

Ժամանակակից նովելի առաջին արգասիքների ի հայտ գալը արաբական արձակ գրականության մեջ վերաբերվում է 19-րդ դարի 80-ական թվականներին: Սակայն միայն 20-րդ դարի 30-ական թվականներին նովելը, ստանալով ռեալիստական շարադրանքին հատուկ գծեր, դառնում է առանձին ինքնուրույն ժանր և մի քանի տասնամյակների ընթացքում մնում է ամենատարածվածն ու սիրելին: Այն բավականին նման է արաբական գրականության ավանդական ժանրերին, ինչպիսիք են նադիրան և մականաման: Սակայն նովելի իրական հաջողությունը կապվում է ժանրի նորության և թեմատիկայի արդիականության հետ:

Եգիպտոսում նոր ժանրի հիմքում հին և նոր՝ ավանդական և ժամանակակից գրական նորմերի, մեթոդների և հմարքների միախառնումն էր: 19-րդ դարի 80-ական թթ. այս սինթեզի քիչ նկատելի գործընթացը հետագայում արագանում է: 19-րդ դարի վերջից մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակաշրջանում այս գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել 2 փուլի: Առաջինի համար խորհրդանշական է ավանդական սկզբնաձևի գերիշխող դերը, որի սահմաններում տեղավորված է նոր ոճ, նոր բովանդակություն: Երկրորդ փուլի ընթացքում արդեն նկատվում է հետագում ավանդական նորմերից և գեղարվեստական արտահայտման նոր միջոցների և ձևերի կիրառման ձգտում:

Եգիպտական նովելի զարգացման առաջին քայլերից դարձավ կարճ պատմվածքի՝ մականամայի դասական ձևի կիրառումը: Եգիպտացուն հոգեհարազատ ձևով են գրված Ալի Մուբարաքի “Ալամ ադ-Դինը”, Իբրահիմ ալ-Մուվեյյիհիի “Մուսա իբն Իսամի պատմվածքը” (“Հադիս Մուսա իբն Իսամ”), նրա որդու՝ Մուհամմադ ալ-Մուվեյյիհիի “Իսա իբն Հիշամի պատմվածքը, կամ Ժամանակի մի հատվածը”: Ժամանակագրական առումով առաջինը համարվում է Ալի Մուբարաքի “Ալամ ադ-Դինը”, որը հրատարակվել է 1882թ. Ալեքսանդրիայում:

Վաղ նովելները՝ գրված էին ճանապարհորդական օրագրերի և Եգիպտոսին հուզող հիմնահարցերի շուրջ գրույցների և խրատական օրինակների կոմպոզիցիայով: Այս օրինակներին կարելի է ավելացնել Հաֆեզ Իբրահիմի “Մատինի գիշերները” Ալիշա Թեյմուրի նովելները և այլն:

Իբրև գրականության զարգացման և նովելի ժանրի ձևավորման նախադրյալ է հանդես գալիս նաև թարգմանչական գործի կտրուկ զարգացումը:

Վերոհիշյալ ժամանակաշրջանի նշանակությունը կայանում է նրանում, որ կարճ գեղարվեստական շարադրանքի ձևը սկիզբ է առնում իր գեղարվեստական և գաղափարական հնարավորություններով սահմանափակ միջնադարյան նովելից, անցնում կիսագեղարվեստական և կիսահրապարակախոսական պատմվածք-ակնարկի միջով, կլանում թարգմանչության ձեռք բերած եվրոպական առանձնահատկությունները և դառնում առանձին գեղարվեստական ռեալիստական ստեղծագործություն՝ իր ժանրային բոլոր վառ արտահայտչամիջոցներով:



**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԷՐԵՆՈՒՄ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Թուրքերեն փոխառությունների առյուծի բաժինը պատկանել է արաբերեն և պարսկերեն լեզուներին: Սա իհարկե կարելի է համարել բնական երեւոյթ, հաշվի առնելով վերոհիշյալ լեզուների մշակութային հենքը, բառապաշարի հարստությունը և մի բանի այլ առավելություններ, որոնք ունեցել են այս լեզուները թուրքերենի և, ընդհանրապես, բյուրբական լեզուների նկատմամբ: Սակայն «Թանգիմաթի» շրջանում Թուրքիայի կողմնորոշումը դեպի Եվրոպա և, հատկապես, Ֆրանսիա նպաստեց նրան, որ թուրքերենում սկսեցին նկատվել Ֆրանսիական փոխառություններ: Ֆրանսերեն փոխառությունների ներթափանցմանը նպաստեց այն, որ Օսմանյան կայսրությունում այդ ժամանակ հսկայական աշխատանք էր տարվում վերացնելու այն մեծ տարբերությունը, որ կար խոսակցական և գրական լեզուների միջև: Առաջարկվում էր խուսափել արաբերեն և պարսկերեն փոխառություններից, իսկ թուրքերենը չունենալով դրանց համարժեքը, այն վերցնում էր մեծ մասամբ Ֆրանսերենից: Իհարկե առաջին հերթին Ֆրանսերենից վերցվում էր լեզվամտածողությունը և ավելի հաստ լինելու համար մատուցվում էր՝ նույնը արաբերեն և պարսկերեն փոխառություններով. օր.<sup>՝</sup> (Ֆր.) *relations internationales*, (թրք.) *medeniyet binyelmele*, (հայ.) միջազգային հարա-բերություններ: Եվ վերջապես Ֆրանսերեն փոխառությունների ներթափանցմանը նպաստեց այն, որ այդ ժամանակաշրջանում Եվրոպայում դոմինանտ էր Ֆրան-սիական մշակույթը:

Դասակարգելով ֆրանսերեն փոխառությունները, պետք է նշել, որ դրանց մեծ մասը գոյական անուններ են, այդ թվում՝ գիտությունների անվանումներ, գիտական տերմիններ: Հատկապես գերակշռում են բաղաբազմաբան և պատմագիտական տերմինները. օր.<sup>՝</sup> (թրք.) *etnografi*, (Ֆր.) *ethnographie*, (հայ.) ազգագրություն: Մեծ թիվ են կազմում կենցաղային իրերի անվանումները. օր.<sup>՝</sup> (թրք.) *garderob*, (Ֆր.) *garde-robe*, (հայ.) զգեստապահարան; արվեստի հետ առնչվող բառեր, երաժշտական գործիքների անվանումներ, օր.<sup>՝</sup> (թրք.) *bale*, (Ֆր.) *ballet*, (հայ.) բալետ; հագուստ, կտորեղեն, գործվածքներ, զարդեղեն, օր.<sup>՝</sup> (թրք.) *frak*, (Ֆր.) *frac*, (հայ.) Ֆրակ; բույսերի և կենդանիների անվանումներ, օր.<sup>՝</sup> (թրք.) *antilop*, (Ֆր.) *antilope*, (հայ.) այծքաղ:

Ֆրանսերենից թուրքերեն են թափանցել նաև բառակապակցություններ, բացականչական բարացած ձեւեր. օր.<sup>՝</sup> (թրք.) *antreparantez*, (Ֆր.) *entre parenthèse*, (հայ.) չակերտավոր, չակերտների մեջ, (թրք.) *komilfo*, (Ֆր.) *comme il faut*, (հայ.) ինչպես որ պետք է, հարկ եղածին պես:

Կան մի շարք բառեր, որոնք կազմված են Ֆրանսերեն արմատից և թուրքերեն ածանցից *biletzi*-տոմսավաճառ, *aktiflik*-ակտիվություն: Հատկանշական է թուրքերեն *uydurmasıyon*-հնարք, գյուտ բառը, որը այն եզակի բառերից մեկն է՝ կազմված թուրքերեն արմատից՝ *uydurmak*-հնարել և *tion* Ֆրանսերեն ածանցից:

Առանձին պետք է խոսել *alafranga* (արեւմտյան, եվրոպական) և *alaturka* (թուրքական) բառերի մասին: Չնայած, որ այս արտահայտությունները քաղկացած են Ֆրանսերեն քերականական ձեւերից (a-նախդիր, la-որոշյալ հոդ), սրանք թուրքերեն բառեր են և Ֆրանսերենում ընդհանրապես չեն գործածվում: Իսկ այն հանգամանքը, որ վերոհիշյալ բառերը կազմվել են Ֆրանսերեն քերականական ձեւերից, թերևս, պայմանավորված է նրանց իմաստով:

## ՀԱՅ-ԹԱԹԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇՈՒՐԶ

Կովկասյան էթնիկ ու դավանական խայտաբղետ միջավայրում հիշատակվում է նաև «հայ-թաթեր», «թաթ-հայեր», «թաթախոս հայեր» կամ «թաթ լուսավորչականներ» անունով հայտնի խումբը: Այս խմբի էթնոպատկանությունը, ծագումնաբանական, ինքնության խնդիրները գիտության կողմից դեռևս հստակ պարզված չեն:

Հայտնի է, որ հայադավան այս խմբի մոտ 19-րդ վերջին և 20-րդ դ. սկզբին տարածված էր թաթերեն լեզուն: Նրանք էթնոմշակութային մի շարք առանձնահատկություններով տարբերվում էին թե՛ հայկական միջավայրից, թե՛ շրջապատի այլ էթնոսներից: Այս ամենի հետևանքով խիստ բարդացնում են այս խմբի ծագումնաբանական և էթնոպատկանությունը խնդիրները:

Հայ-թաթերի ինքնության պարզաբանման տեսակետից կարևորվում է նրանց լեզվական մշակույթի խնդիրները, այսինքն՝ նրանց միջավայրում տարածված երկլեզվության, եռալեզվության (կամ բազմալեզվության) դրսևորումները, տարածված լեզուների (թաթերեն, բուլղերեն, հայերեն...) օգտագործման ոլորտները և այլն:

Այս խմբի զգալի մասը 18-րդ դ. վերջին (1796թ.) Արևելյան Այսրկովկաս արշաված ռուսական զորքերի հետ միասին հեռանում է իր բնակության տարածքներից՝ Դերբենտ, Մուշկուր, Ղուբա, հաստատվում հիմնականում Հս. Կովկասում՝ Ղզլարում և նրա շրջակայքում, Սբ. Խաչում, Եղեսիայում և այլուր: Արևելյան Այսրկովկասում վերջիններս մնում են հիմնականում Մաղդասա, Ջիվլար, Խաչմաս գյուղերում:

Հայ-թաթերի մասին հայտնի փոքրաթիվ ուսումնասիրությունները և տեղեկությունները սովորաբար թվագրվում էին 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած: Այսօր կարող ենք ասել, որ կան 18-րդ դ. վերջի և 19-րդ դ. առաջին կեսի վկայություններ (խոսքը վերաբերում է բացառապես լեզվի մասին հիշատակություն պարունակող աղբյուրներին):

19-րդ դ. երկրորդ կեսից սկսած հայ և օտար աղբյուրներում այս խմբի մասին տեղեկությունները համեմատաբար ավելի բազմազան ու հանգամանալից են: Առանձին հեղինակներ իրենց աշխատությունների մեջ ներկայացնում են նաև հայ-թաթերից զրառված որոշ քառեր, տեքստեր (թաթերեն լեզվով):

Հետաքրքրական տեղեկություններ են հանդիպում նաև պարբերական մամուլում, արխիվային վավերագրերում:

Եթե ի մի բերենք հայ-թաթերի լեզվական մշակույթի հետ կապված բոլոր տեղեկությունները և հիշատակությունները, ապա առայժմ կարելի է հավանական համարել, որ 18-րդ դ. - 19-րդ դ. առաջին կեսում նրանց միջավայրում տարածված էին թաթերեն, բուլղերեն լեզուները:

19-րդ դ. երկրորդ կեսից սկսած հայ-թաթերի բնակավայրերում հայկական դպրոցների բացումը նպաստեց նրանց միջավայրում հայոց լեզվի տարածմանը:

Թեև եղած նյութերը առայժմ հնարավորություն չեն տալիս անդրադառնալու հայ-թաթերի լեզվական մշակույթի հետ կապված բոլոր խնդիրներին (տարածված լեզուների օգտագործման ոլորտները, դրանց իմացության և գործածման աստիճանը տարբեր սեռա-տարիքային խմբերում և այլն), այնուամենայնիվ, աղբյուրների տեղեկությունները ցույց են տալիս եռալեզվության (թաթերեն- բուլղերեն- հայերեն), երկլեզվության (թաթերեն - բուլղերեն) դրսևորումների մասին հայ-թաթերի միջավայրում 19-րդ. վերջին - 20-րդ դ. սկզբին:



ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՈՐԾՈՆԸ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ  
ԵԳՆԱԺԱՄՈՒՄ (1970-1990 թթ.)

Լիբանանյան ճգնաժամի հիմքում ընկած են մի շարք գործոններ՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և կրոնական: Երկրի յուրահատուկ քաղաքական կառուցվածքը, նրա առջև ծառացած սոցիալական խնդիրները, 1960-70-ականներին լիբանանյան դուռգների և շիաների ակտիվացումը, ինչպես նաև 1960-ական թթ. պաղեստինցիների մեծ ներհոսքը Լիբանան նպաստեցին երկրում հաստատված փխրուն հավասարակշռության խաթմանը, առաջացրեցին քրիստոնյա մարդմեների դժգոհությունն ու գործնական հակազդեցությունը, որոնք փորձում էին մասնատել Լիբանանը և ուղղակիորեն համագործակցում ու օժանդակություն էին ստանում Իսրայելից:

Ներկայացվող խնդիրը գիտական քննարկման է ենթարկվել Ն. Հովհաննիսյանի, Ռ. Կարապետյանի, Ե. Պրիմակովի, Լ. Վոլնովի, Պ. Սիլի, Ի. Ռաբինովիչի, Հ. Քոբբանի, Զ. Սալիբի, Հ. Շարաբի, Ա. Դավիշյանի և այլոց կողմից:

Լիբանանյան իրավիճակի շիկացումը հանգեցրեց նրան, որ 1975թ. ապրիլին երկրում բռնկվեց քաղաքացիական պատերազմ, որը որոշ ընդհատումներով տևեց մոտ 15 տարի: Սիրիան չէր կարող անմասն մնալ Լիբանանում կատարվող դեպքերին, քանի որ այն Լիբանանը մշտապես համարել է «Մեծ Սիրիայի» անբաժան մաս: Սիրիայի գործողությունները Լիբանանում հիմնականում ուղղված էին Լիբանանի միասնականության ու անկախության, ինչպես նաև, հենց իր՝ Սիրիայի ազգային անվտանգության ապահովմանը: Այդ իսկ պատճառով Սիրիան 1976թ. հունվարին անմիջականորեն միջամտեց լիբանանյան իրադարձություններին՝ Լիբանան ուղղարկելով ՊԱԲ-ի (Պաղեստինյան Ազատագրության բանակի) Յարմուկ բրիգադի ջոկատներին: Սիրիան Լիբանանում որդեգրեց «լա դալիք վա լա մադլուբ» (ո՛չ հաղթող և ո՛չ պարտվող) կարգավորման տարբերակը: Այսինքն՝ Սիրիային ձեռնտու չէր ո՛չ Լիբանանի ձախացումը և պաղեստինյան ուժերի հաղթանակը, ո՛չ էլ քրիստոնյա մարդմեների կողմից ղեկավարվող Լիբանանի գոյությունը: Լիբանանի ներքաղաքական փխրուն հավասարակշռությունը պահպանելու Դամասկոսի հենց այդ շահագրգռվածությունն էր, որ վերածեց նրան de-facto և ավելի ուշ de-jure Լիբանանում կայունություն ապահովող միակ գործնական և օրինական ուժի:

Իսրայելը դեռ վաղուց փայփայում էր հարավային Լիբանանում «անվտանգության գոտի» ստեղծելու նախագիծը: 1972-ից սկսած Իսրայելը վարում էր «չհայտարարված պատերազմ» Լիբանանի հարավային շրջանների դեմ, որտեղ հաստատվել էին պաղեստինցիների զինված ջոկատները: 1978թ. մարտի 15-ին իսրայելյան 30 հազարանոց բանակը ներխուժեց հարավային Լիբանան և գրավեց մինչև Լիտանի գետն ընկած ողջ տարածքը: Իսրայելի զորքերը Լիբանանի տարածքը լրեցին միայն 1978թ. հունիսին և սահմանի ողջ երկայնքով 10 կմ գոտին փոխանցեցին ոչ թե ՄԱԿ-ի ուժերին (ինչպես դա նախատեսվում էր 1978թ. մարտի 19-ի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թ. 425 որոշմամբ), այլ՝ Ս. Հադադին, որը աջ քրիստոնեական ուժերի հրամանատարն էր Լիբանանի հարավում: 1982թ. սեպտեմբերի 14-ին սպանվեց Լիբանանի նախագահի պաշտոնը դեռ չստանձնած Բաշիր ժմայելը, ինչն իրականացվեց Իսրայելի հատուկ ծառայությունների կողմից և, որում Իսրայելը մեղադրեց պաղեստինցիներին: Սա նախապատրաստական քայլ էր 1982թ. սեպտեմբերի 15-ին արևմտյան Բեյրութ իսրայելյան զորքերի ներխուժման համար: 1982թ. սեպտեմբերի 17-ին զիշերը պաղեստինյան փախստականների Սաբրա

և Շատիկ ճամբարներում Իսրայելյն աջ բրիտանացիների միջոցով իրականացրեց հազարավոր պաղեստինցիների դաժան սպանությունը: Այս պայմաններում ԱՄՆ-ի ճնշման տակ Լիբանանի կառավարությունը 1983թ. մայիսի 17-ին ստորագրեց լիբանանա-իսրայելյան «խաղաղության մասին համաձայնագիրը», որը չեղյալ հայտարարեց միայն 1984թ. մարտին: Այդուհանդերձ Իսրայելի զորքերի դուրս բերումը Լիբանանի տարածքից (բացառությամբ հարավում «անվտանգության գոտուց», որտեղից բոլոր իսրայելյան զորքերը դուրս բերվեցին 2000թ. մայիսի 24-ին) ավարտվեց միայն 1985թ. հունվարին: Արաբների մեծամասնությունը կարծում է, որ լիբանանյան ճգնաժամը ամենաշատը ձեռնաստու էր Իսրայելին: Դա ժամանակ շահելու և Սինայ – 2 (երկրորդ եգիպտա-իսրայելյան) համաձայնագրի ստորագրումից արաբների ուշադրությունը շեղելու հնարավորություն էր ընձեռում Իսրայելին:

Այսպիսով Լիբանանը, որին մինչև այժմ հաջողվել էր զերծ մնալ արաբա-իսրայելյան հակամարտությանը ուղղակի մասնակցությունից և գրավել չեզոք դիրք, վերը նշված հանգամանքների շնորհիվ ամբողջությամբ ներքաշվեց մերձավորարևելյան հակամարտության մեջ: Այսօր էլ մերձավորարևելյան հակամարտության ցանկացած շիկացում իր բացասական հետևանքներն է ունենում Լիբանանում, որը հղի է ներքին հակասությունների սրմամբ:

## ՀԱՆՁՆԱԿՑԱՆ ՀԱՄԱԽԿ (ԱԻ)

### ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԵՅՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՎԵՐՋԱՄԱՆՑՆԵՐԻ

Հիմք ընդունելով Ն.Վ.Հարությունյանի «Топонимика Урарту» աշխատությունը, /որտեղ քննարկված են ուրարտական պետության սահմանների և հարակից շրջանների բնակավայրերի, վարչական ու քաղաքական միավորների անունները, ինչպես նաև կատարված է դրանց տեղադրությունը/ մենք փորձել ենք այդտեղ ընդգրկված տեղանունների մի մասը դասակարգել ըստ տարածաշրջանների. այնուհետև՝ ըստ վերջածանցների, պարզելով, թե որ տարածաշրջանում տվյալ վերջածանցով տեղանունը ի՞նչ հաճախականությամբ է հանդիպում: Պետք է նշել, որ այս աշխատությունում տեղ են գտել վերջածանցների միայն որոշ մասը: Նրանց առանձնացման համար հիմք է ծառայել Ա. Ղարիբյանի «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը» հոդվածը, որում գիտնականը սեպակազիր աղբյուրներում հանդիպող մի խումբ տեղանվանակերտ վերջածանցների գուգահեռներն է առանձնացնում հոյոց լեզվի հոգնակիակերտ վերջածանցների մեջ:

Դրանք են.

սեպակազիր արձանագրության մեջ

Ani

Uni

Eni

Ini

Ni

(uhi), ahi

ti, di, te

հայերեն հոգնակի

անի

ունի

ենի

(ի)նի

նի

ք

տի, տ



Մենք փորձել ենք, մնալով այս շարքի շրջանակներում, դասակարգել այդ տեղանունները ըստ նրանց տարածման շրջանների և հանդիպման հաճախականության: Այս շարքին հարող վերջածանցները հետևյալն են.

1. ահի, իհի, հա, հի, սհա, սհի;
2. անի;
3. յանի, յանի;
4. ենի, ինի, նի;
5. իա, ա;
6. da, di, ad, te, ti, tu;
7. սոն, սոն, սոն;

Կոնկրետ վերջածանցների տարածման շրջանները.

1. Մեծ Ջաբ և Փոքր Ջաբ գետերի վերին հովիտ – սո(ի), իա, du;
2. Հայկական Տավրոսի լեռներ /Ուրուատրի/ – սո(ս), հի, (ն)իա, t/dua;
3. Դիարբեքիի դաշտ /Բիթ-Ջամանի/ – իա, նիա, du;
4. Խարբերդի դաշտ /Էնզիտե-Անձիտ/ – ինի, te;
5. Ծովք /Ծուպանի/ – անի;
6. Մալաթիայի դաշտ /Մելիտա-Մելիտո/ – անի, te, du;
7. Ուրմիա լճի ավազան – անի, յանի, ենի, ինի, նի, սոն, (ն)իա, իա, իա;
8. Վանա լճի ավազան – անի, ենի, ինի, նի, սոն, (ն)իա, դի, du(a);
9. Բասենի դաշտ – նի, սոն;
10. Զլդր լճի ավազան – անի, սոն, հա, հի, (ն)իա;
11. Բարձր Հայք /Դիառնիսի/ – նի, հի, սհի, հա;
12. Արաքս գետի հովիտ և Շիրակ – յանի, յանի, (ս)հի;
13. Սյունիք – (ա)ոն;
14. Սևանաս լճի ավազան – սոն, անի, հի, հս;
15. Կոտայք – սոն, (ն)իա, յանի.

Այսպիսով նշանակալից ընդհանրություններ են դիտվում.

1. Մեծ Ջաբ և Փոքր Ջաբ գետերի հովիտների, Դիարբեքիի դաշտի և Վանա և Ուրմիա լճերի ավազանների տեղանվանակերտ վերջածանցների միջև;
2. Ուրուատրիի և Մալաթիայի տեղանվանակերտ վերջածանցների միջև;
3. Զլդր լճի ավազանի, Բարձր Հայքի, Շիրակի, Սևանա լճի ավազանի, Կոտայքի, Սյունիքի և Արաքս գետի հովիտի տեղանվանակերտ վերջածանցների միջև;

Այսպիսով գծագրվում է երեք մեծ տարածաշրջան.

1. Հարավ-արևելյանը՝ Մեծ Ջաբ և Փոքր Ջաբ գետերի հովիտներ, Վանա և Ուրմիա լճերի ավազաններ:
2. Հարավ, հարավ-արևմտյան՝ Ուրուատրի, Մալաթիայի դաշտ:
3. Հյուսիսայինը՝ Եփրատյանը:
4. Դիարբեքիին բնորոշ է թե առաջին և թե երկրորդ կետերում առկա վերջածանցները:

Ինչպես ակնառու է, մեր դիտարկած վերջածանցները ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի ոչ բոլոր շրջանները՝ խնդիր, որ առանձին ուսումնասիրության քննա է քվում: Ինչ վերաբերում է այս վերջածանցների ծագման և փոխառությունների հարցերին, ապա դա ավելի խոր ու մանրագին ուսումնասիրության կարիք ունի:

ԱՄՆ-ի ԴԵՐԸ 1993թ. ՕՍՒՆՅԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քլինթոնի դեմոկրատական վարչակազմը, որն ԱՄՆ-ում իշխանության եկավ 1992թ., իր նախորդ վարչակազմից խրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման գործում բավականին լուրջ ժառանգություն էր ստացել: 1991թ. Մադրիդի կոնֆերանսը և դրան հաջորդած խրայելա-պաղեստինյան և արաբա-խրայելական երկկողմ բանակցությունների ամենակարևոր արդյունքն այն էր, որ առաջին անգամ բանակցություններին ինքնուրույն կարգավիճակով (ճիշտ է կոնֆերանսի սկզբում հորդանանյան պատվիրակության կազմում) մասնակցեց Պաղեստինի Ազատագրության Կազակերությունը (ՊԱԿ-ը): Կոնֆերանսի նախաձեռնման և կազմակերպման գործում մեծ դեր ունեցավ ԱՄՆ-ը: Իսրայելի և ՊԱԿ-ի կողմից միմյանց քաղաքական իրավունքների փոխադարձ ճանաչումը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ի առաջարկով, 1993թ. մայիս 15-ից հունիսի 1-ը, պաղեստինյան պատվիրակությանը առանձնացավ հորդանանյան պատվիրակությունից և հանդես եկավ առանձին: Մադրիդի գործընթացի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ Օսլոն: Այստեղ, 1993թ. սեպտեմբերի 9-ին Իսրայելը և ՊԱԿ-ը հայտարարեցին փոխադարձաբար միմյանց ճանաչելու մասին: Հաջորդ օրը Նորվեգիայի արտգործնախարար Յոհան Յորգեն Հոլսթի միջոցով Արաֆաթը համապատասխան նամակ ուղարկեց Ռաբինին, որից հետո Ռաբինը ստորագրեց ՊԱԿ-ի ճանաչման վերաբերյալ փաստաթուղթը:

1993թ. սեպտեմբերի 13-ին Մերձավոր Արևելքի պատմության մեջ նոր էջ բացվեց: Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը և ՊԱԿ-ի գործկոմի անդամ Աբու Աբասը Վաշինգտոնում պաշտոնապես վավերացրին Օսլոյում ձեռք բերված համաձայնությունները: Համաձայնագիրը ստորագրվեց Քլինթոնի, Բուշի, Քարտերի և 3000 հյուրերի ներկայությամբ: Ռաբինը և Արաֆաթը միմյանց ձեռք սեղոնեցին: Համաձայնագիրը կնքվեց նույն սեղանի շուրջ, որտեղ 15 տարի առաջ ստորագրվել էր Քեմփ-Դևիդի համաձայնագիրը: Համաձայնագիրը կրում էր հետևյալ վերնագիրը՝ «Հռչակագիր ժամանակավոր ինքնավարության սկզբունքների մասին»: Սկզբունքների հռչակագրի ուժի մեջ մտնելուց հետո, քան Խորհրդի ընտրությունների նախաշեմին տեղի ունեցան իսրայելական զորքերի դուրսբերումը արևմտյան ափի և Ղազայի նախատեսված շրջաններից: Հռչակագրի ուժի մեջ մտնելուց 2 ամիս հետո կողմերը պայմանագիր կնքեցին Ղազայից և Երիրովից իսրայելական զորքերի դուրսբերման մասին: Հետագա դուրսբերումները պետք է ի կատար ավելին աստիճանաբար և պաղեստինյան ռափկանության կողմից այդ տարածքների պատասխանատվության ստանձման և ներքին կարգավիճակի ապահովման հետ համատեղ:

Օսլոյի համաձայնագիրը նոր հեռանկարներ բացեց իսրայելա-պաղեստինյան հետագա համագործակցության ու խորացման համար և հանդիսացավ այն բազան, որի հիման վրա 1994թ. ապրիլի 29-ին Փարիզում ՊԱԿ-ի և Իսրայելի միջև կնքվեց տնտեսական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր: 1994թ. մայիսի 4-ին Կահիրեում կնքվեց համաձայնագիր ՊԱԿ-ի և Իսրայելի միջև, որը նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում Ղազայի և Երիրովի շրջաններից: Իսկ մինչև 1999թ. մայիսի 4-ը որոշվելու էր Պաղեստինի վերջնական կարգավիճակի և անկախության հարցը: Օսլոյի համաձայնագիրը հնարավորություն տվեց նաև 1994թ. հուլիսին Իսրայելի և Հորդանանի միջև կնքել խաղաղության համաձայնագիր և վերջ տալ երկու երկրների միջև պատերազմական վիճակին: Երկար տարիների բացակայությունից հետո Արաֆաթը վերադարձավ Պաղեստին,



ինչն անշուշտ հնարավորություն տվեց նրան անմիջականորեն ղեկավարել պաղեստինցիների պայքարը: 1994թ. օգոստոսի 24-ին Էրեց վայրում Իսրայելի և ՊԱԿ-ի միջև կնքվեց իշխանության փոխանցման վերաբերյալ համաձայնագիրը, որը հնարավորություն տվեց ՊԱԿ-ին ստանձնելու իրական իշխանություն: Եվ վերջապես 1995թ. սեպտեմբերի 24-ին Վաշինգտոնում կնքվեց այսպես կոչված Օսլոյի 2-րդ համաձայնագիրը: Պաղեստինյան ազգային խորհրդի ընտրությունները նշանակվեցին 1996թ. հունվարին և նշված ժամկետում էլ տեղի ունեցան: Ինչպես տեսնում ենք այս ամենը կատարվում էր 1993թ. Օսլոյի համաձայնագրի հիման վրա: Յայսօր չի իրականացված համաձայնագրի միայն մեկ կետը, 1999թ. մայիսի 4-ին պաղեստինյան անկախ պետություն հռչակելու հարցը:

Փաստորեն Օսլոյի համաձայնագիրը, հանդիսացավ ոչ միայն յուրօրինակ հռչակագիր, այլև «սահմանադրություն» Իսրայելի և ՊԱԿ-ի համար, որի դրույթների և հոդվածների ի կատար ածումը միայն կարող են վերջնականապես լուծել այս հակամարտությունը:

### ՂԱՐԻԲԶՆԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԵՊՀ)

#### **ՄԻԻՆԱՅՈՒՄ ՈՒՂՂԻՉ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՈՐՈՇ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

1966թ. փետրվարի 23-ին Սիրիայում իշխանության եկած Արաբական Կերածնունդ Սոցիալիստական կուսակցության (ԱԿՄԿ կամ Բաաս) ծախ ուժերը իրենց կառավարման շրջանում թույլ տվեցին ներքին և արտաքին քաղաքական մի շարք սխալներ և բացթողումներ, որոնք բավականին ծանր հետևանքներ ունեցան Սիրիայի համար: Որոնք էին այդ սխալները.

1. Չախբասականները վարում էին ապաշնորհ տնտեսական քաղաքականություն, որի հետևանքով երկրի տնտեսությունը գտնվում էր մահաքնի վիճակում:

2. Պաղեստինյան հիմնահարցի լուծման այն իրատեսական մոտեցումը, որը ենթադրում էր Իսրայելի նկատմամբ հասնել ռազմական առավելության և միայն դրանից հետո անցնել ակտիվ պայքարի, ժախբասականների կողմից գնահատվում էր որպես պարտավորական և վճռական կերպով մերժվում էր: Նրանք շեշտը դնում էին հայրուկային մեթոդներով ազգային-ազատագրական պայքարի վրա, իսկ այդպիսի միջոցներով, ԱՄՆ-ի կողմից Իսրայելի բազմակողմանի օգնության և աջակցության պայմաններում, նրա դեմ հաղթանակի հասնել գրեթե անհնարին էր:

3. 1967թ. «վեցօրյա» արաբա-իսրայելյան պատերազմում կրած պարտությունից հետո, սիրիական ղեկավարությունը, ի հակակշիռ 1958թ. ստեղծված առավել ուժեղ և հեղինակավոր «Ֆաթահ» կազմակերպության, որոշում ընդունեց ստեղծել պաղեստինյան նոր զինված կազմակերպություն՝ «աս-Սախկա» («Կայծակ») անունով, որն իր պրակտիկ գործունեության մեջ ամբողջովին պետք է հեմվեր բասականության քաղաքական-գաղափարական կողմնորոշումների վրա: Փաստորեն ՊԱԿ-ի համակարգում ի հայտ եկան մրցակցող կազմակերպություններ, իսկ սիրիական ղեկավարությունը կոնֆլիկտի մեջ մտավ «Ֆաթահ» կազմակերպության ղեկավար, ՊԱԿ-ի ապագա առաջնորդ Յասեր Արաֆաթի հետ:

4. Հովանավորելով պաղեստինյան տարբեր խմբավորումների ու կազմակերպությունների և նպատակ ունենալով նրանց միջոցով պայքարել Իսրայելի դեմ՝ երկրի ղեկավարությունը գրեթե ուշադրություն չէր դարձնում պետության պաշտպանունակության ամրապնդման ու բանակի վրա, որը 1967թ. «վեցօրյա» պատերազմից հետո խորը բարոյական և հոգեբանական ճգնաժամ էր ապրում, իրեն զգում էր դավաճան-

ված քաղաքացիական առաջնորդների կողմից: Լինելով հասարակության հայելին՝ բանակն արտացոլում էր Սիրիայում տիրող դժգոհությունն ու անվստահության մթնոլորտը իշխանության նկատմամբ:

5. Չմասնակցելով Արաբական պետությունների լիգայի և այլ համաարաբական հանդիպումներին, շրջադրվելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քիվ 242 բանաձևը և անհաշտ կեցվածք ընդունելով Սաուդյան Արաբիայի, Զուվեյթի և Շոցի մյուս միապետական երկրների հանդեպ, ինչպես նաև կուսակցական խնդիրներով մրցակցելով Իրաքի հետ՝ Սիրիան իրեն մեկուսացման մեջ դրեց արաբական աշխարհում, իսկ առանց մավթարդյունահանող հարուստ արաբական պետությունների ֆինանսական օգնության Սիրիային չափազանց դժվար կլիներ դիմակայել Իսրայելին:

6. Սիրիայի ձախբասական դեկլարությունը մերժեց Ազգային առաջադիմական ճակատի և Ժողովրդական ժողովի (պառլամենտ) ստեղծման վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաև երկրում սահմանափակեց դեմոկրատական ազատությունները:

1969թ. ԱՎՄԿ-ի սիրիական մասնաճյուղում ձևավորվեցին պետության ներքին և արտաքին քաղաքականության մեջ տարբեր սկզբունքներ և մոտեցումներ դավանող երկու խմբակցություններ՝ քաղաքացիական, որը գլխավորում էր Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար Սալահ Ջադիդը, և զինվորական, որի ղեկավարն էր պաշտպանության մախարաբ, զենքալի-լեյտենանտ Հաֆեզ ալ-Ասադը: Նա դեմ էր երկրի մեկուսացմանը արաբական աշխարհում, կոչ էր անում ավելի սերտ համագործակցել Եգիպտոսի, Իրաքի և Հորդանանի հետ, իսկ տնտեսության և բանակի ամբխիթար վիճակը բացատրում էր կառավարության ոչ ճիշտ քաղաքականությամբ:

1970թ. հոկտ. 30-ին իր աշխատանքներն սկսեց ԱՎՄԿ-ի Սիրիայի երկրամասային 10-րդ արտահերթ համագումարը, որի ընդունած բազմաթիվ որոշումներից մեկով Հաֆեզ ալ-Ասադը ազատվում էր պաշտպանության մախարաբի պաշտոնից:

Նման պայմաններում երկիրը քաղաքական և տնտեսական ճիշտ ուղու վրա դնելու և իր հակաճգնաժամային ծրագրերն իրականացնելու համար Հաֆեզ ալ-Ասադը բանակի օգնությամբ իրականացրեց պետական հեղաշրջում՝ Սիրիայում ամբողջ իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելով: 1970թ. նոյեմբերի 16-ին նա հիմնադրեց «ուղղիչ շարժումը», որը նոր էջ բացեց Սիրիայի նորագույն շրջանի պատմության մեջ:

## ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԻՆԱ (ԵԿԶ)

### AL-AMIL WA-L-MA'MUL ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

#### ԱԼ-ՋՈՒԲԱՆԻԻ “AL-AWAMILU-L-MI'A” ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1. Արաբերենում խոսքի կառուցվաբանին մոդելը կարելի է ներկայացնել մեկ ուղղությամբ՝ զարգացող շարահյուսական շղթայի տեսքով, որի բաղկացուցիչ օղակներն են հանդիսանում al-kalima (լեզվական միավորները): Դրանք ըստ անվանի արաբ լեզվագետ Սիբավեյիի որոշակիորեն հարադրված և ձևավորված են մեկը մյուսի նկատմամբ:

2. Խոսքի մեջ ցանկացած բառի ձևափոխությունը պայմանավորված է իրենից առաջ ի հայտ եկող մեկ այլ բառով, որը համարվում է կառավարող (al-amil): Նա է որոշում ինչպես հաջորդող բառի առաջացումը խոսքի մեջ, այնպես էլ նրա ձևը:



3. Մեկ այլ անվանի միջնադարյան արաբ լեզվագետ Ալ-Ջուրջանին իր “Al-’awamilu-l-mi’a” ըրեականական աշխատության մեջ, ներկայացնելով կառավարող և կառավարվող բառերի միջև շարահյուսական հարաբերակցության հիմնահարցը, առաջարկում է օգտագործել “Al-’amil” (կառավարող լեզվական միավոր, գործոն) և “Al-ma’ mul” (կառավարվող լեզվական միավոր, գործոնի ազդեցությունը կրող) տերմինները:

4. Ալ-Ջուրջանին բաժանում է գործոնները 2 հիմնական խմբի՝ al-lafziyya (ըստ բառածնի համապատասխանության) և al-ma’ nawiiyya (իմաստաբանական համապատասխանությամբ): Տվյալ բաժանման հիմքում ընկած է հետևյալ իմացաբանական սկզբունքը՝ տեքստում տեղակայված ցանկացած լեզվական միավորի արտահայտչական և բովանդակային առանձնահատկությունների վերլուծական նկարագիրը:

5. Հաշվի առնելով վերը նշված հիմնադրույթները, ինչպես նաև արդի լեզվաբանական մոտեցումը չեքստային միավորների գնահատման գործում, մենք կարող ենք անել հետևյալ եզրակացությունը՝ խոսքի սահմաններում al-’amil wa-l-ma’ mul հարաբերակցության ձևավորումը հանգեցնում է ավարտուն խոսքի սահմաններում գոյություն ունեցող արտահայտչական միջոցների շղթայված համակարգի դրսևորմանը, որն իրականանում է անմիջական կամ միջոցորդված ձևերով:

#### ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ (ԱԻ)

#### ԱՐ. ՕԶԱԼԱՆԻ ԲԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՅԱՅԷՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի նախկին ուսանող, ազգությամբ քուրդ Աբդուլլահ Օջալանը 1978թ. նոյեմբերին իր մի քանի համախոհների հետ հիմնում է «Քրդստանի աշխատավորական կուսակցությունը» (PKK): Հիմնադիր համագումարում Օջալանը, ըստ կուսակցության փաստաթղթերի, միաձայն ընտրվում է նախագահ և իր վրա վերցնում կուսակցության գաղափարախոսության, ծրագրային փաստաթղթերի մշակման և քաղաքական գործունեությունը կանոնակարգելու հարցերը:

Հարելով մարքսիզմ-լենինիզմի մաոիստական-կաստրոյական քնին՝ Օջալանը սկզբնապես կուսակցության գաղափարախոսության հիմքում դնում է սոցիալիստական հեղափոխության ճանապարհով Սիասնական Անկախ Քրդստանի ստեղծման գաղափարը. «Քրդական հեղափոխությունը առաջին հերթին իր նշանառության տակ է առնելու թուրք գաղութարար ռեժիմը, որը զրկել է քրդերին քաղաքական անկախությունից և իր գործողություններն ուղղել քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի և լեզվի խալառ ոչնչացմանը: Այդ հեղափոխության խնդիրն անկախ և ժողովրդավարական Քրդստանի ստեղծումն է»:

1980թ. զինվորական հեղաշրջումից հետո, երբ քրդերի նկատմամբ քաղաքական հետապնդումները զանգվածային բնույթ են կրում, Օջալանը իր կողմնակիցների հետ անցնում է Սիրիա և այստեղ հիմնում կուսակցության գլխավոր շտաբը:

Համոզվելով, որ թուրքական իշխանությունները երբեք չեն ընդունի երկրում քուրդ ազգաբնակչության գոյությունը և քաղաքական լուծում չեն տա քրդական պրոբլեմին՝ Օջալանը մշակում և իրականացնում է զինված պարտիզանական գործողությունների ծրագիր, որը 1984-ից կարճատև դադարներով տևում է մինչև 1998 թվականը. «Մենք պաշտպանում ենք խաղաղության գաղափարը և պնդում առանց արյունի կոմֆլիկտի լուծման անհրաժեշտությունը: Քրդական շարժման այսօրվա ներուժը թույլ կտա մեզ շարունակել պատերազմը մինչև 2020թ.: Եթե խաղաղության

մեր կողք անտեսվի, ապա մենք կսկսենք դիվերսիան պատերազմ ամբողջ Թուրքիայի տարածքում...»:

Ասպարեզ գալու առաջին պահից Օջալանը անհաշտ դիրքորոշում է դրսևորում ինչպես Թուրքիայում, այնպես էլ Իրաքում և Իրանում գործող մյուս քրդական քաղաքական կուսակցությունների նկատմամբ՝ հայտարարելով, որ «PKK շարժումը առաջացել է գաղութարարների հետ նրանց համաձայնողական քաղաքականության բացահայտման հետևանքում»:

1998թ. Թուրքիայի ճնշման տակ Սիրիան դադարեցնում է իր աջակցությունը Օջալանին և նրա կուսակցությանը: Զրկվելով հովանավորությունից՝ Օջալանը փորձում է հարմարվել քաղաքական նոր պայմաններին: Նա հայտարարում է զինադադարի և PKK-ի վերակազմավորման և զաղափարախոսության փոփոխության անհրաժեշտության մասին: Միասնական Անկախ Բրդստանի ստեղծման գաղափարից անցում է կատարվում քուրդ-քրդական դաշնության գաղափարին: Օջալանը հայտարարում է, որ քրդական հարցի լուծման ամենաօպտիմալ տարբերակը, որ կրավարարի բոլոր ժողովրդին «պսոթ առկա Թուրքիայի սահմանների տարածքում քուրդ-քրդական դաշնային պետության ստեղծումն է: Բրդերը կստանան իրավունքներ՝ չխախտելով Թուրքիայի տարածքային ամբողջականությունը»:

1999թ. փետրվարի 15-ին քուրդական հատուկ ծառայություններին հաջողվում է իրականացնել Օջալանի ձերբակալությունը: 1999թ. հունիսի 29-ին Թուրքիայի Ազգային անվտանգության դառարանը նրան դատապարտում է մահապատժի՝ հայրենիքի դավաճանության և անջատողական գործունեության մեղադրանքով: Դատարանում իր պաշտպանական ճառի ժամանակ Օջալանը նոր գնահատական է տալիս իր կուսակցության գաղափարախոսությանն ու 15ամյա պարտիզանական պայքարին: «Մշակելով գործունեության նոր ստրատեգիա՝ PKK-ն չպետք է փակի աչքերը իր սխալների վրա: Վերանկառության բացակայությունը կարող է հանգեցնել կուսակցության թուլացմանը... Ամեն դեպքում ինչպես PKK-ին, այնպես էլ քուրդ ժողովրդին օղի պես անհրաժեշտ է խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել... Քուրդ ժողովրդի գոյության, նրա պատմության, մշակույթի և լեզվի դե ֆակտո և դե յուրե ճանաչումը կօգնի փոխադարձ համաձայնության գալ... Այս կոնֆլիկտը ծագել է երկու եղբայր ժողովուրդների միմյանց նկատմամբ անարդարացի և անպատասխանատու վերաբերմունքի հետևանքով: Այդ իսկ պատճառով առաջին րայրը դեպի խաղաղություն պետք է լինի հենց եղբայրական մղումով... Ինքը պատերազմը ցույց տվեց իր ոչ պիտանիությունը քրդական հարցի լուծման ճանապարհին: Այս ապստամբությունը պետք է ընդունել որպես վերջին ապստամբություն. ահա այսպիսին պետք է լինի նրա ճիշտ մեկնությունը...»:

Միասնական Անկախ Բրդստանի, այնուհետև քուրդական պետության շրջանակներում դաշնային հիմունքներով քրդերի ինքնավարության և, վերջապես, տակ ներքին ինքնավարության պլանմաններից իրաժարումը հատկանշական է ծայրահեղական, ոչ իրապաշտ քաղաքական ծրագիր և գործերակերպ ունեցող կուսակցական առաջնորդի համար, որպիսին Օջալանն է:

Կիրականացվի՞ Օջալանի մահապատիժը, քե՞ն ոչ. հարցին դժվար է պատասխանել, սակայն այսօր արդեն ակնհայտ է, որ նրա ձերբակալումով Թուրքիային զոհե առժամանակ հաջողվեց չեզոքացնել քրդական պրոբլեմը:



ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ «ՀԱՅԿ և ԲԵԼ» ՎԻՊԱՍԶՈՒՄ

Գարեբ շարունակ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» անփոխարինելի սկզբնաղբյուր է եղել ոչ միայն հայ ժողովրդի, այլև հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Պատմահայր վեր հանած հիմնասկզբների բազմազանությունը և իրադարձությունների վերլուծության խորությամբ այսօր էլ շարունակում է զարմացնել գիտական հասարակությանը:

Այս տեսանկյունից առանձնանում է Հայկի ու Բելի պատերազմի մասին վիպասը, որն առհասարակ հայտնի լինելով հանդերձ՝ տակավին ուսումնասիրության կարևոր է: Մասնավորապես, մինչ օրս ուշադրության չի արժանացել «Հայոց պատմության» մեջ Բարեթնի բանակի ռազմարվեստի արտացոլման հիմնահարցը: Հայկ-գորավարը յլրավացիորեն փառաբանվելով՝ աչքաթող է արվել Բել-գորավարի գործողությունների գնահատման խնդիրը: Մինչդեռ պատերազմի համակողմանի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ճշտելու, քե Հայաստանում 5-րդ դարում ռազմական գործիչները ինչ չավով էին վերլուծում ռազմական իրադրությունը:

Հայկի սպառնալուծության, ապա նաև ծագած պատերազմի ռազմավարության ու մարտավարության հարցերը Պատմահայրը քննում է այնքանով, որքանով դա հայել է համարում ժողովրդի պատմությունն ամբողջացնելու համար: Հավանաբար, այս հանգամանքով է պայմանավորված ռազմարվեստի պատմության վերաբերյալ Խորենացու հաղորդած տեղեկությունների սակավությունը: Մակայն հակամարտությունը նկարագրելիս Խորենացին համակարգված մոտեցում է ցուցաբերում և ռազմական գործողությունների նկարագրման ժամանակ կարևոր հարցերը աչքաթող չի առնում: Իրադրության զարգացումը ներկայացվում է բավականին լայն շրջանակով, որով հիմնականում բացահայտվում է Բելի գործողությունների տրամաբանությունը:

Խորենացին հաջորդաբար շարադրում է.

1. Բելի կողմից պատերազմին նախապատրաստվելը. նրա կազմակերպած զորահավաքը: Պատմահայրը համակրում է Հայկին և բնավ չի ձգտում դա քայքայել, սակայն Բելի զորքի մասին խոսելիս անկողմնակալություն է ցուցաբերում: Դրանով ցույց է արվում, քե ինչպիսի բացասական հետևանքներ կարող է ունենալ հակառակորդին թերագնահատելը: Այսպես. Բելի զինվորների մասին կարդում ենք. «յուսեծիք քաջօր և երկնաղիզօր հասակօր սկայիք մրցողօր», «սրսնց գորատրաց» և այլն: Իսկ Բելի բանակը ներկայացնելիս Խորենացին շեշտում է, որ այն բաղկացած էր միայն հետևագործից («Տխսանհանն Բէլ ամբոխիս հետևակ գորաց»):

2. Բելը ռազմական գործողությունները սկսում է Հայկի թոռ Կաղմոսի իշխանության տակ զանվող տարածքների («առնն Կաղմոս») վրա հարձակումով և նահանջող Կաղմոսին հետապնդելով: Պատմահայրը բազմիցս նշում է, որ Բելը ձգտում էր առավելագույն օգտագործել մեծաթիվ զորքի հնարավորությունները: Տրամաբանական է, որ դա նկատի ունենալով՝ Բելը ձգտելու էր Հայկին վճռական ճակատամարտ պարտադրել ու հնարավորին չափ արագորեն ավարտել պատերազմը («փութայր հասանել ի սահմանն բնակութեանն Հայկայ»):

3. Նկարագրվում է Բելի ռազմական հանդերձանքը, որը ևս օգնում է լուսարանել ռազմարվեստին վերաբերվող որոշ հարցեր: Բանն այն է, որ բանակի սպառազինությունն ու ռազմարվեստը ոչ միայն փոխկապակցված են, այլև պայմանավորում են միմյանց զարգացումը:

4. Վճռական ճակատամարտի մասին Խորենացու հաղորդած տեղեկությունները մեզ հնարավորություն են տալիս ամբողջացնելու ռազմական գործողությունների

սլատկերը: Խորենացին ակնարկում է, որ Բելը ժամանակ է ունեցել ճակատամարտին նախապատրաստվելու համար և կատարել է մարտադաշտի դիտում ու տեղագրություն: Այլ խոսքերով, ճակատամարտին նախապատրաստվելով Բելը հնարավորություն է ունեցել զննահատելու մարտավարական իրադրությունը և անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ կարող էր խառափել մարտից:

5. Ճակատամարտի ընթացքում Բելի գործողությունների մասին Խորենացու հաղորդած տեղեկությունները էլ ավելի աղբյուրիկ են, սակայն որոշակի նյութ կա նաև մարտի մտահղացումը բացահայտելու, Բարեղնի բանակի մարտակարգը ճշտելու և հարակից մի շարք հարցեր պարզաբանելու համար:

#### ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀՅԹԻ)

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅԶԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ  
ՇՈՒՐՁ 1916 թ.

Թուրքիայի հետ մղվող բոլոր սլատերագմների ժամանակ Ռուսաստանի համար մշտապես ծագել է Թուրքիայի բաժանման հարցը, սակայն բոլոր դեպքերում էլ գործին միջամտել են Ֆրանսիան և Անգլիան: Այս երեք պետությունների մշտական բանակցությունների առարկա է եղել «հիվանդ մարդու» ժառանգության բաժանման հարցը, բանակցություններում ի հայտ են եկել խոր հակասություններ այս պետությունների միջև: Բաժանման նախագծի կազմման ժամանակ յոթնեց զգացնել էին տալիս Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի շահերի բախումները՝ ազդեցության ոլորտների հետ կապված: Այս հարցն օրակարգի մեջ մտավ նաև Առաջին համաշխարհային ժամանակ և անգամ կազմվեց համաձայնագրի նախագիծ, որը հավանության արժանացավ երեք կառավարությունների կողմից, և որին հետագայում միացավ նաև Իտալիան: Բնական է, որ Թուրքիայի բաժանման ծրագրերը կամա քե ակամա առնչվում էին նաև Արևմտյան Հայաստանի տարածքներին, և դրանք նույնպես դառնում էին բաժանման առարկա: Թուրքիայի բաժանման ծրագիրն Առաջին համաշխարհային տարիներին հայտնի է համաձայնագիրը կազմողների, անվան տակ՝ Մայքս-Պիկտի համաձայնագիր: Նրանք 1916թ. սկզբին մշակեցին և ներկայացրին բաժանման նախագիծը:

Պայքար էր ընթանում Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև. վերջինս ձգտում էր իր գոտով մխրճվել ֆրանսիական և անգլիական գոտիների միջև, ինչը մեծ քաղաքական հետևանքներ կրպցեր Ռուսաստանի առջև, սակայն նույնը ձգտում էին անել նաև դաշնակիցները, ինչը դժվարացնում էր Ռուսաստանի ծրագրի իրագործումը: Ռուսաստանն իր համար ավելի կարևոր էր համարում Ուրմիայի շրջանին և Բիթլիսի անցողիներին տիրանալը, քան քե ունենալ Սվազ-Խարբուռ-Կեսարիա հայաբնակ եռանկյունին: Սվազ-Կեսարիա-Խարբերդ հայաբնակ եռանկյունու փոխանակման իմաստը Հայքյարի քրդաբնակ շրջանի հետ, կայանում էր նրանում, որ Ռուսաստանը հարավում փորձում էր սահման ունենալ ոչ քե ֆրանսիական գոտու հետ, որը սկզբնական տարբերակով պետք է անցներ Ուրմիա-Վան-Բիթլիս գծով, ինչն ավելի էր մոտեցնում ֆրանսիական գոտին բուն Ռուսական կայսրության սահմաններին, այլ այս ձևով փորձում էր հեռացնել ֆրանսիական գոտին իր անմիջական սահմաններից և արդյունքում հարավում գործ ունենալ արաբական պետության հետ, եթե անգամ այն լինեք ֆրանսիական ազդեցության ոլորտում: Նշված եռանկյունին զիջելու գաղափարը Պետրոգրադի համար ընդունելի էր այնքանով, որ Ռուսաստանը տիրապետում էր Սև ծովի հարավային առափնյա շրջաններին և րացի դա Ռուսաստանին էին անցնելու Կ.Պոլիսը և նեղուցները, հայաբնակ եռանկյունի կազմող տարածքը կենսական



անհրաժեշտության տեսակետից հնարավոր էր համարվում փախստական, բանի որ այլ ապրերակ Ֆրանսիայի համար ընդունելի չէր լինի:

Սայրս-Պիկոյի համաձայնագրով նախատեսվում էր ստեղծել հինգ գոտիներ. «կապույտ», որն ընդգրկում էր Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան՝ հարավ-արևելյան Անատոլիայի (Այնթափ, Ուրֆա, Մարտին, Դիարբեքիր և Հայքյարի) հետ, և անցնում էր Ֆրանսիային; «կարմիր» գոտի, որն ընդրկում էր Հարավային և Կենտրոնական Իսրայը, Պաղեստինի Հայֆա և Ալկա նավահանգիստները և անցնում էր Անգլիային. «դարձագույն» գոտում (Պաղեստինի մնացած մասը) Ռուսաստանի և մյուս երկրների համաձայնությամբ հաստատվում էր միջազգային կառավարում: Արևելյան Սիրիան ու Մոսուլը մտնում էին Ֆրանսիայի ազդեցության ոլորտի մեջ («A» գոտի); Անդրիտոլանն ու Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը՝ Մեծ Բրիտանիայի ազդեցության գոտու մեջ («B» գոտի): Ռուսաստանին անցնող տարածքները՝ Արևմտյան Հայաստանը, Կ.Պոլսը, նեղուցներն ու շրջակա տարածքները պետք է կազմեին «դեղին» գոտին: Սկզբնական շրջանում այս համաձայնագիրը զաղտնի էր պահվում, ինչը բացատրվում էր երկու պատճառներով, առաջին՝ պատերազմը դեռ չէր ավարտվել և իմաստ չուներ հրապարակել այն համաձայնագրի պայմանները, որն իրականանալու էր միայն հաղթանակից հետո և երկրորդ՝ Անտանտի պետությունները հռչակել էին իրենց ազատարարներ և հրապարակայնորեն հայտարարում էին, որ պատերազմում են փոքր Ժողովուրդների իրավունքների համար: Այս պայմանագիրը զաղտնի էր պահվում Անտանտի մնացած պետություններից: Իտալիայի հետախուզությունն իմացավ այդ մասին և առաջադրեց իր պահանջները, սակայն դրանք հաշվի չէին առնվում մինչև որ նա պատերազմ չհայտարարեց Գերմանիային:

Փաստորեն Սայրս-Պիկոյի համաձայնագրի ամբողջական իրագործման դեպքում Օսմանյան լայնածավալ կայսրությանից գրեթե ոչինչ չէր մնալու, նրա մեծագույն մասը, պատերազմը դեռ չավարտված, արդեն բաժանվել էր Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև կամ տիրապետման գոտիներին, կամ էլ ազդեցության ոլորտների ձևով: 1916թ. ապրիլի 13/26 համաձայնագիրն ուժի մեջ մտավ ռուսական կառավից հուլսգրի, իսկ Ֆրանսիական կառավից նոտայի փոխանկություն հետևանքով, Ռուսաստանին էին անցնում իրեն սահմանակից Էրզրոմի և Վանի վիլայեթները, Տրապիզոնի և Բիթլիսի վիլայեթների արևելյան մասերը և Դիարբեքիրի, Խարպուտի ու Սվազի վիլայեթների չնչին մասերը: Ֆրանսիացիներին էին անցնում Սվազի, Խարպուտի և Դիարբեքիրի վիլայեթների մեծագույն մասերը, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթի արևմտյան մասը, Կիլիկիան և նրան հարակից շրջանները:

Հայ գործիչները կոստում էին, որ կոնկրետ Արևմտյան Հայաստանի հետ կապված ինչ-որ բանակցություններ էին ընթանում: Դեռևս 1915թ. ընթացող Թուրքիայի բաժանման նախնական բանակցություններից հայ գործիչները զիստեին, որ Ֆրանսիան հավակնություն է ցուցաբերում Կիլիկիայի հանդեպ: 1915թ. հայ գործիչները միանալու կերպով փորձում էին Լոնդոնում, Փարիզում և Պետրոգրադում համոզել, որ ստեղծվի ինքնավար Հայաստան Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հովանավորության ներքո, չգիտակցելով այն հանգամանքը, որ այս երեք տերությունները ծրագրում էին իրար մեջ բաժանել Թուրքիան և այդ բնում Արևմտյան Հայաստանը:

Սայրս-Պիկոյի համաձայնագիրն իրականացավ միայն Անգլիայի և Ֆրանսիայի համար, իսկ Ռուսաստանը, որը դրանից հետո զանվում էր հեղափոխական ցնցումների մեջ, դուրս մղվեց այն պայմանագրի շրջանակներից. սրա համար առիթ մատչեց նաև այն, որ բուլշևիկները հրապարակեցին նաև Սայրս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի պայմանները՝ հրաժարվելով դրանցից: Այսպիսով, փոքր

ժողովուրդների շահերը կրկին զոհաբերվում էին մեծ տերությունների քաղաքական օրագրերի ու նախատակների համար:

ՍԻՐԱԶՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ԵՊՀ)

ՀԱԳԻՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ ԱԼ-ԲՈՒԽԱՐԻԻ (810-870) «ՍԱՀԻՀ»-Ը

Ղուրամում շարադրված «Աստվածային կանոնները», անգամ դրանց մանրամասն և հմարամիտ մեկնաբանման ղեկարար, բավարար չէին մուսուլմանների նոր սերունդների առջև հայտնվող բազմազան հարցերի լուծման համար: Լրացուցիչ կանոնների կարիք էր զգացվում, որոնց աղբյուրը և հանդիսացավ Ալլահի Մարգարեի սմենեօրյա պրակտիկան՝ արարքներին ուղղված նրա արարքները, խասքը և խոսքերը:

Մարգարեի խոսքերի և արարքների մասին պատմությունները, հաղորդակցությունները այն պարագաների մասին, որոնցում նրանք տեղի էին ունեցել, կազմեցին մուսուլմանական գրականության առանձին և բավականին ծավալուն ճյուղը: Հաղիս կոչվող յուրաքանչյուր այդպիսի հաղորդակցությունը ամրապնդվում էր ինանդալ՝ հաղորդիչների շղթային եղումով: Այն հաղիսը, որը հաղորդվել էր իսլամի մեջ հայտնի և հեղինակավոր մարդկանց միջոցով, համարվում էր սաույզ (սահիհ): Այն ղեկավարում, երբ հաղիսի հաղորդիչների շղթան ինչ-որ մի թերություն ուներ հաղիսը անվանվում էր լավ (հասան): Իսկ եթե հաղորդիչների շղթայում հայտնվում էին հարգանք և վստահություն չունեցող անձանց անուններ, ապա հաղիսը կոչվում էր բույլ (գահիֆ) և ոչ սաույզ էր համարվում: Մուսուլմանական օրենսդրության իմը կազմելով՝ հաղիսները կարևորագույն դեր էին խաղում միջնադարյան մուսուլմանական հասարակության ողջ կյանքում:

Հաղիսների հավաքագրումը համարվում էր աստվածահան գործ և Մուհամադի կյանքի մասին ավանդությունների փնտրատմներին նվիրվում էին տասնյակ տարիներ: Առաջին հերթին հարցաքննվում էին Մուհամադի մտերիմները (Աբու Բաքր, Օմար, Ալիս, Աբու Հուրեյրա, Աբդուլլահ իբն Մաստուրը և այլն) և զինակիցները, իսկ նրանցից հետո բոլորն, ձվեր այդ պատմությունները լսել էր Մուհամադից կամ նրա զինակիցներից: Այսպես առաջացավ սուննա-մուսուլմանների սուրբ ավանդությունը կամ հաղիսների հավաքածուն:

Մարգարեի սուննան Ղուրանից հետո Իսլամի դավանության երկրորդ աղբյուրն է: Ի տարբերություն Ղուրանի, որի հեղինակությունն անվիճելի է համարվում, սուննայի հավաստիությունը մինչ օրս լուրջ վեճերի առարկա է: Այդ բանավեճերի հիմքում դրված է հաղիսների բավանդակության՝ Մուհամադի կյանքի, խոսքերի և արարքների, ճշգրիտ լինելու խնդիրը: Հաղիսների ընտրությունը, գրանցումն ու դասակարգումը VIII (II) դարի երկրորդ կեսին վերածվեց մի լայն շարժման, որն առաջացավ «կրոնական գիտելիքի որոնում անունը» (տալար ալ-իլմ):

IX դարի երկրորդ կեսին, երկարատև վեճերի արդյունքում, համաձայնության եկան, որ հաղիսների վեց ժողովածուներ պարունակում են սաույզ հաղիսներ և իրավունք ունեն սուննայի աղբյուր համարվելու: Այս ժողովածուները բավականին ծավալուն են և դրանց ձեռագրերը բազմաթիվ հատորներ են կազմում: Հաղիսների ժողովածուները մեկնաբանվում էին և արդյունքում ստաջանում էին աշխատություններ, որոնք երկու կամ երեք անգամ գերազանցում էին մեկնաբանվող բնագրերը: Տարածված էին 40 հաղիս պարունակող ժողովածուները (դա այն միևնույն



քանակն էր, որը պարտադիր պիտի իմանար յուրարանշտուր հավատացյալ մահմեդականը:

Սաուլյո հաղիաներ պարտմակող ժողովածուներից երկուսը անվանվեցին «սահիխներ» (ալ-Սահիխեյն), որանց հեղինակներն էին ալ-Բուխարին (810-870) և Մուսլիմը (817 կամ 821- 875) և դրանց բովանդակության խկությունը անվիճելի է համարվում: Դրանցից մեկը՝ «Սահիխ ալ-Բուխարին», փաստորեն, Դուրանից հետո խլամի երկրորդ սմենահեղինակավոր աղբյուրը դարձավ:

Դարաշրջանի մուսաղիսներին հատուկ քննադատությամբ, հանրահայտ սուննի մուհադիս Մուհամադ իրն Իսմայիլ Աբու Աբդալլահ ալ-Ջուֆի ալ-Բուխարին ստուգեց, քն ինչպես են փոխանցվել 600 հազար հադիս, որոնք այդ ժամանակ շրջանառության մեջ էին և 200 հազար, որոնք նա լսել էր իր ուսուցիչներից և տեղեկատվությունից: Ավանդությունների այս ահեղի քանակությունից նա, որպես «ամպարասվելի» ընտրեց միայն 7400 հադիս, որոնք էլ կազմեցին իր «Ալ-Ջամի աս-Սահիխ» աշխատությունը: Ժողովածուն աչքի է ընկնում առաջին անգամ հադիսների դասակարգման «մուսանաֆ» (այսինքն՝ ըստ բովանդակության) կարգով: Դասակարգման այս միջոցը բույլ ավեց ալ-Բուխարիին իր աշխատության մեջ ներառել տարբեր բովանդակություն ունեցող (իրավագիտություն, բժշկություն և այլն) հադիսներ:

#### ՄԻՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅՆՆԵ(ԵՊՀ)

#### ԵՐՈՒՍԱԳԵՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏՐՎԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ

Մուհամեդ մարգարեին վերագրվող այսպես կոչված արտոնագրերի վերաբերյալ բավականին հարուստ նյութեր, ձեռագրեր կան Մատենադարանում, որոնց իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են մի շարք հետազոտողներ՝ Հ. Անասյանը, Հ. Փավստյանը, Բ. Կյուլենեյանը:

Մուհամեդ մարգարեին վերագրվող և հայկական համայնքներին տրված արտոնագրերը պատմության մեջ հայտնի են «Ալի-Մանշուր» (հրովարտակ) անունով: Դրանցից մեկը 8-րդ դարում Սահակ Զորավորեցի կաթողիկոսի՝ Հայաստան արշավող Մուհամեդ գորավարին ուղղված նամակի հիմքի վրա վերջինիս կողմից հայերին տրված հրավարական է, մյուսը՝ Մուհամեդ Մարգարեին վերագրվող և 7-րդ դարով թվագրված պայմանագիրը:

Նմանատիպ հրավարականներ կան տրված Երուսաղեմի հայությանը, որոնք վերագրվում են Մուհամեդ մարգարեին, Օմար խալիֆին և անգամ ավելի ուշ դարերում՝ Մալահ Էդ Դինին:

Նրանց մասին հանդիպում ենք հիշատակությունների Տիգրան Մավալանյանի «Պատմություն Երուսաղեմի» աշխատության մեջ, Մադարիա Արքեպիսկոպոս Օրմանյանի «Ազգասպատում» երկում, Սկրուիչ Եպիսկոպոս Աղավանու երկերում, Մատենադարանում պահվող «Տօմար Ս. Տեղաց և կալածածոց վերաբերյալ հրավարականաց և հաստատվողոց» վավերագրերում:

Ըստ Տ. Մավալանի «Երուսաղեմի նվաճումը» գրքի, հայոց Արքանան պատրիարքը, 620-ական թ.թ., տեսնելով խլամի հաջողությունները Մուհամեդի օրոք, ուզում է նրանից ստանալ ապառհովության փաստաթուղթ, որպեսզի ապահովի քաղաքում բնակվող քրիստոնյա ազգաբնակչության խաղաղ կյանքը: Մարգարեն ընդառաջում է նրա ցանկությամբ «տալով իր ձեռքին դրոշմը կառ հավատարմագիր մը, վասնզի ինք անգրագետ էր»: Այդ արտոնագրով ապահովության երաշխիք է

տրվում նաև դպրիներին: Սակայն այժմ, գրում է հեղինակը, սխառլիսրբութանի դիվանատանը կ'ա հիշյալ հավատարմագիրը, այլ դրա փախարեն, հին բոքի վրա կ'ա գրած մի հրավարտակ, «որ բնագիրին պատճենը ըլլալ կրոյի և երեսուն վկաներու ստորագրութիւնը կը կրէ, որոնց մէջ է նաև Օմարի անունը»: Այն «հիւճրէրի հաստատութիւնն առաջ գրուած է, ուստի բուսական ալ չի կրէր»:

Այնուհետև, երբ հետազայում սկսվում են արարական արշավանքները, և Օմարը գրավում է Երուսաղեմը, նրան ներկայացվում է մարգարէի՝ Երուսաղեմի հայտարարը տրված արտոնագիրը, որի հիւճրի վրա Օմարը եւ արտոնագիր է տալիս տեղի հայտարարը: Այնուհետև Սալսի աղ Դիւնը ավելի ուշ դարերում հաստատում է այդ արտոնագիրը:

Տիգրան Սավալանյանը նշում է, որ իր «Երուսաղեմի սլաւոմոթյունը» շարադրել է ըստ «Արաբացի պատմագիր Ջէրի Էդ Դիւնի «Երուսաղեմի հաղթութեան գրքի»: Երբ տրվում է, որ այս հեղինակը ստեղծագործել է ուշ միջնադարում:

Մուսամեդ Ալի Հուրիյէի «Այսրերեն-հայերեն գրքերի ստաջին ցուցահանդէս» գրքում հիշատակւոթյուն կ'ա Տ. Սավալանյանի վերահիշյալ աշխատութեան մասին, որտեղ հեղինակը Տ. Սավալանյանից մեծ մեջբերումներով ներկայացվում է հիշյալ արտոնագրի իրողութեանը:

Այս առումով հետաքրքիր է նաև դոկտ. Ֆուադ Շարատի «Արտասահմանցիների իրավունքի կենտրոնը Միքիայում» երկը, որտեղ հեղինակը բերում է Օմարի՝ Երուսաղեմի հայտարարը տրված արտոնագրի տեքստը, որը որոշակի տարբերութեաններով հանդերձ՝ համընկնում է Սավալանյանի հիշատակած պայմանագրի հետ:

Վերջում բերվում են պայմանագրի կնքմանը ներկա եղածների անունները, նշվում են եկեղեցիները, որոնք պիտի տրվէին հայերին:

Անդրադառնալով մանատիպ պայմանագրերի ստեղծման պատմութեանը, Լեռն նշում է, որ մատուցմանական ծանր լծի տակ գտնվող բրիտանյա ազգաբնակչութեանը շատ հաճախ ստեղծում էր մարգարէի և նրան հաջորդած խալիֆների անուններով փաստաթղթեր, որոնք պիտի թեթեւցնէին նրա վիճակը: Մուսամեդ մարգարեն երբեք չի պատերազմել Արաբական բերսկոգոց դարս, հետեաբար մնամ պայմանագիր չէր կարող տալ հայերին:

Մեր կարծիքով, այս ախիի բոլոր փաստաթղթերը պատմական իրական հիւճր չունեն, ստեղծվել են միայն հետագա դարերում: Եվ Արաբական միջնադարյան պատմագրութեան ներկայացուցիչներից ալ Բալաշտրին, ալ Վակիլիւն, ալ Տարաբին, անդրադառնալով Երուսաղեմի նվաճման պատմութեանը բնականաբար, չեն արձանագրել հայկական համայնքին տրված այդ «առանձնաշնորհման արտոնագրերը», քանի որ դրանք պատմական հիւճր չունեն, ստեղծվել են հետագա դարերում և գործածութեան մեջ ախիի մտնէին միայն ավելի ուշ դարերի քաղաքական կյանքում որպէս մի փաստաթուղթ, որ կոչված պիտի լինէր կարգավորելու բրիտանեա-մատուցմանական հարաբերութեանները:

Նման պայմանագրերի ստեղծման հիւճրում, մեր կարծիքով, ընկած է Մուսամեդի կողմից Բեն Հարիֆ ցեղին և Նեջրանի բրիտանյա ազգաբնակչութեանը տրված պայմանագիր-արտոնագրերի իրողութեանը, որոնց բովանդակութեանը հետագայում օգտագործվել է այդ ախիի կեղծ պայմանագրերի ստեղծման համար:



ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱՄԱՇՏՈՅՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՇՈՒՐՉ

Նախամաշտոցյան Հայաստանի դպրության մասին պահպանվել են մատենագրական բազմաթիվ հաղորդումներ (Փիղոստատոսի տեղեկությունը Արշակ արքայի (I դար) նվիրաբերած հայագիր թույլա ժանյակի մասին, Հիպպոլիտիսի 234-235 թթ. գրված «Ժամանակագրության» մեջ հայերի նշվելը սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում, Ագաթանգեղոսի հաղորդումները հայալեզու նշանագրության և նախաքրիստոնեական Հայաստանում դպրության ասածո՝ Տիբի պաշտամունքի վերաբերյալ, Մովսես Խորենացու հաղորդումը II-III դարերում Դարանաղյաց Անի ամրոցում, մենեագրական պատմագրության արխիվի մասին, որից աստիճանաբար Բարդուղիմեոսը բարձրագույնություններ է կատարել աստերեն ու հունարեն և այլն)։ Դրանցից գատ, հնագիտական պեղումների շնորհիվ այսօր ունենք հսկայական փաստական նյութ։ Հայկական լեռնաշխարհում գրի ծագման ու զարգացման մասին այսօր կարելի է ասել հետևյալը։

Քարի դարում սկիզբ է առնում գրի զարգացման նախափուլը («ասարկայական գիր», ժայռապատկերներ), որում ստվա են մտքերի հաղորդման պարզունակ և վաղագույն ձևեր։ Ք.ա. V-III հազարամյակներում Հայաստանում ձևավորվում է պատկերագրությունը, որն իր արտահայտությունն է գտնում ինչպես ժայռապատկերների, այնպես էլ զանազան իրերի վրա։

Ք.ա. III հազարամյակում պատկերագրերի զարգացմամբ և պարզեցմամբ ստեղծվում է գծային գրերի մի համակարգ (բաղկացած 400-ից ավելի նշաններից), որը կիրառվում է մինչև Ք.ա. I հազ. սկիզբը։ Այս համակարգով կատարված շուրջ 300 արձանագրություններ են գտնվել Հայաստանի տասից ավելի հնավայրերից, որոնք դեռևս վերծանված չեն։

Ք.ա. XII-VIII դարերում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում, կիրառվում են խեթա-թուրքական հիերոգլիֆները՝ գրված լուվիերենով։ Դրային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 հիերոգլիֆներից, ունեցել է գրության բուստորոշիչ (ամեն հաջորդ տողը նախորդին հսկողական) ուղղություն։

Վանի քաղաքությունում (Բիսինլի, Ուրարտու, Արարատ) գործածվել են երեք գրային համակարգեր։ Տեղական ծագում ունեցող վանյան (բիսինա-ուրարտական) մենեագրությունը բաղկացած է շուրջ 300 մենանշաններից (հիերոգլիֆներից), որոնք գրվել են աջից ձախ և վերից վար ուղղությամբ։ Ներկայումս վերծանված ու մեկնաբանված են շուրջ 60 մենեագրեր, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ վանյան մենեագրության լեզուն հնագույն հայերենն է։ (Հատկանշական է, որ միջնադարյան հայկական մատյաններում պահպանված մեծ թվով նշանագրերը, որոնք ըստ հիշատակարանների՝ ստեղծվել ու կիրառվել են «նախնեաց մերոց» կողմից, քե՝ արտաքին տեսքով, քե՝ իմաստով մտա, իսկ երբեմն էլ նույնանում են խեթա-թուրքական և ուրարտական հիերոգլիֆներին)։

Վանի քաղաքությունում լայն կիրառություն են ունեցել սեպագիր համակարգերը։ Մարդուրի Ա արքայի օրոք (Ք.ա. մոտ 840-825թթ.) կանգնեցվել են ասորեստանյան սեպագրերով (շուրջ 600 նշան՝ ձախից աջ գրությամբ) աստերեն գրված արձանագրություններ։ Այդ արքայից հետո աստերենով բնագրերը հաճախում են ուրարտական արձանների երկլեզու կողողներում՝ գրված ուրարտական տեքստերից հետո, բարձրագույն վերջիններիս։

Իշխութիւնի արքայի օրոք (Ք.ա. մոտ 825-810թթ.) ստեղծվեց տեղական սեպագրային համակարգը (ավելի քան 200 նշան՝ ձախից աջ գրաւորւմով), որով մեզ են հասել շուրջ 600 մեծ ու փոքր արձանագրութիւններ:

Վանի քաղաքութիւնը անկումից մինչև քրիստոնէութեան ընդունումը Հայաստանում գործածվում են այբբենական գրային համակարգեր (ի տարբերութիւն նախկինում գործածված քառային ու վանկային համակարգերի):

Ք.ա. III դարից սկսած գործածվում է հունարենն՝ իր գրով (ձախից աջ գրաւորւմով, 24 տառ), որը քրիստոնէութեան պետական կրօն հռչակումից հետո լայն կիրառութիւն է ստանում Հայաստանում, հատկապէս, կրօնական քարագործութեան նպատակով:

Ք.ա. II - Ք.հ. II դարերից մեզ են հասել արամեատառ արձանագրութիւններ (աջից ձախ գրաւորւմով), որոնց վերծանութիւնը և լեզվի խնդիրը չի կարելի համարել վերջնականապէս պարզված:

Քրիստոնէութեան պետական կրօն հռչակումից հետո հունարենին զուգահեռ քարագրական նպատակներով Հայաստանում լայն կիրառութիւն է ստանում ասորերենը: Պարսկաստանի ազդեցութեամբ, ապա տիւրապետութեամբ պայմանավորված՝ Հայաստանում գործածվում է նաև պահլավերենը (միջին պարսկերենը): Թե՛ ասորական և թե՛ պահլավական գրերի եկմամբ ընկած է արամեական այբուբենը (22 տառ՝ աջից ձախ գրաւորւմով):

Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից գտնվել են քաղմարիվ գրակիր ատարկաներ, որոնք այստեղ են հայտնվել ռազմական, առևտրատնտեսական, մշակութային ու այլաբնույթ հարաբերութիւնների արդյունքում (օր՝ Նարամ-Սուենի կտորը Դիարբեքիի շրջանում, եգիպտական հիերոգլիֆներով կնիքները, միջագետքյան սեպագրերով ատարկաները, արեմնեյան Բսերքսես արքայի արձանագրութիւնը, հռոմեական բանակների Հայաստանում բռնած լաւաններէն արձանագրութիւնները և այլ նյութեր): Սրանք թեպէս չեն կազմում հայաստանյան դպրութեան մասը, սակայն մտնում են նախամշտոցյան Հայաստանի գրային հուշարձանախմբի մեջ:

Նախամշտոցյան Հայաստանից հայտարարված գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել ըստ մի քանի բնութագրական հատկանիշների: Ըստ ծագման և պատկանելութեան՝

ա) Հայաստանում ստեղծված պատկերագրային համակարգեր,  
բ) օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառված գրային համակարգեր (հատուկ ուշադրութեան են արժանի դրանց կիրառման տեղական առանձնահատկութիւնները),

գ) Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված գրակիր հուշարձաններ:

Ըստ գրային համակարգի բնույթի՝ ա) քառային, բ) բառ-վանկային, գ) այբբենական:

Ըստ գրանշանների արտաքին տեսքի՝ ա) պատկերանշանային (այդ թվում՝ հիերոգլիֆ), բ) գծանշանային, գ) սեպանշանային, դ) տառային:

Նախամշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել նաև ըստ գրանշանի, արձանագրութիւնների բովանդակութեան, գրութեան ուղղութեան և այլ հատկանիշների:

Հագարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծված գրավոր մշակույթը չէր կարող անհետանալ կորչել և մշտոցյան դպրութեան կատարելութիւնը պայմանավորված էր նաև նախամշտոցյան շրջանում արմատավորված գրային մտածողութեամբ:



ԱՐԱՐԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արարական լեզվաբանական ավանդույթում նկատվում է բավականին հետադարձ մեկ իրողություն. միջնադարյան քերականական ուսմունքներում օգտագործվող լեզվական հասկացությունները, որպես կանոն, որոշակի սահմանումներ չեն ստանում (համեմայեցե՛ք այնպիսի սահմանումներ, ինչպիսիք ընդունված են ժամանակակից լեզվաբանության մեջ), այլ տվյալ կոնկրետ լեզվական հասկացության նախնական, ընդհանուր բնորոշումն ու սահմանումը ապահովում է հենց որպես լեզվաբանական տերմին օգտագործվող այս կամ այն բառի արտահայտած ընդհանուր անվանողական խնայող:

Հասկացությունները արար միջնադարյան քերականագետների համար սերտորեն առնչվում էին տերմինների, իսկ տերմիններն էլ իրենց հերթին բառերի ընդհանուր անվանողական խնայողի հետ: Արարական լեզվաբանությունը համգում էր լեզվական իրողության և դրա բնութագրային ապարատի սինկրետիկ միասնությանը, ինչը ժամանակակից լեզվաբանության բնագավառում բավականին հազվադեպ երևույթ է:

Որպես տերմիններ ընտրված բառերի ընդհանուր լեզվական խնայող տալիս է գուտ այն նախնական ձևերն ու գաղափարները, որոնց օգնությամբ նկարագրվում է արարերեն լեզվի համակարգը: Որպես տերմին հանդես եկող բառի հենց այդ անվանողական խնայողը, այլ կերպ ասած, լեզվական հասկացության սահմանմանը ուղղված այդ նախնական ձևերն ու գաղափարներն էլ, տեսական որոշակի համատեքստում օգտագործման ընթացքում մասնակիանալուց, կոնկրետանալուց, հետո միայն հնարավորություն են ընձեռում պարզաբանել սահմանվող հասկացության ինչպես «ներքին կառուցվածքը», այնպես էլ համակարգային էությունը:

Արարական միջնադարյան քերականական ուսմունքներում տերմինարանությունը մեծ մասամբ ներկայացված է, ոչ թե առանձին, մեկուսի տերմինների, այլ «տերմինարանական բնեթի» միջոցով: Տերմինների մեծ մասը գոյություն ունի մեկ ընդհանուր արմատից ձևավորված այլ տերմինների շրջապատում, օրինակ՝ *kalima-kalam-mutakallim, murakkab-tarkib, 'amil - 'amal - ma'mul*:

Այսպիսով, արարական լեզվաբանական ավանդույթում որպես տերմին օգտագործված բառի ընդհանուր լեզվական, անվանողական խնայող և լեզվի տեսական համակարգում վերջինիս օգտագործման համատեքստը արդեն իսկ պարունակում է անհրաժեշտ այն ինֆորմացիան, որը հնարավորություն է ընձեռում ըմբռնել սահմանվող հասկացության էությունը:

Ուշադրություն դարձնում եմ ինչպիսի վիպագիրներից է, որն իր ստեղծագործություններում արտացոլել է թուրք իրականությունը մեր դարի 10-30-ական թվականներին, խիստ ընդգծելով բարոյականության խնդիրները:

«Տերևաթափը» (1930) ծավալով ոչ մեծ ստեղծագործություն է, ուր մատնացույց է արվում երիտասարդության՝ որպես նոր տնտեսական հարաբերությունների կրողի և հին թրծվածքի մտավորականության փոխհարաբերությունները:

Վեպի գլխավոր հերոսը՝ Ալի Ռիզա Բեյը մտավորականության ներկայացուցիչ է: Հեղինակը կարեկցում է նրան, կիսում նրա տագնապը, նրա հետ բողոքում, բայց ինչպես և հերոսը, չի հասկանում, թե ինչ է կատարվում, ինչպես կարելի է պայքարել «այս դժգոհ և անադարացի կյանքում»:

Հեղինակը ընդգրկում փիլիսոփայական և քաղաքական եզրահանգումներ չի անում, նրա առաջարկած լուծումները հասարակության վերակառուցման և մարդու վերադաստիարակման գործում համեստ են և սահմանափակված լուսավորչական աշխարհայացքով:

«Տերևաթափի» հերոսը ներկայացնում է Թուրքիայի անցյալը, նա անկարող է որևէ բան փոխել կյանքում և հեղինակը ոչ մի պահանջ չի ներկայացնում նրան:

Վեպին հատուկ հեզմանքն ու ձաղկումը կարծես օգնում են հեղինակին պատմելու իր հերոսի պատմությունը, քանի որ Ալի Ռիզա Բեյի նախապաշարմունքը «տնտեսական նոր հարաբերությունների» նկատմամբ հեղինակը լիովին կիսում է:

#### ՇԱԳՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ՀԱԻ)

#### **ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍՈՒՄ**

Հայոց հարսանիքում պահպանված «եզն մորբեքի» ծեսը լավագույնս արտահայտում է *տոս* բառի ստուգաբանությունը, որն արծածված է հինյ. *carpi-* ձևից և նշանակում է «զոհ»: Այն հանգում է *dâ- dē-* արմատների՝ «բաժանել, մաս մաս անել» իմաստով: Նույն արմատային խմբին են պատկանում նաև հայերեն տի (տարիք, հասակ իմաստով) և տուար (արջառ իմաստով) բառերը: «Տի» բառի հինյ. ստուգաբանությունը *dî-* *dîti-* արմատներից, որոնց ժառանգներն են նաև. *heq. zit*, անգլ. *time*, գերմ. *Zeit*, անգլ. *time* արմատները՝ «ժամանակ, ժամանակաշրջան» իմաստով, և արտահայտում է «ժամանակ» հասկացության և տոնի կապը: Վերջինս հաստատում է, որ հենց տոնական պարբերականությունից են ծնունդ առնում *ժամանակի* հետ կապված առաջին պատկերացումները: Հայոց ավանդական հարսանիքն ևս ըստ տարեկան տոնացույցի որոշ պարբերականության է ենթարկվել: Հարսանեկան ծիսաշարը երբեմն ձգվում է մի քանի ամիսներից մինչև մի քանի տարի: Այն ժամանակային առումով կարող է հարմարեցվել ժողովրդական, վերջին ժամանակներս նաև պետական տոներին, ինչպես և նորապսակների ծննդյան օրերին՝ ինչը կրկին փաստում է, որ հարսանյաց ծիսաշարի հիմքում ընկած է տոնական ինվարիանտը: Այսպիսով, հատուկ խնդիր է հարսանեկան ծեսերի և ժողովրդական տոների միջև եղած համապատասխանեցումը (նշանադրության օրվա նախընտրությունը Մաղկազարդին և Վարդավառին, նավասարդյան իսկ այժմ՝ ամանորյա հարսանիքները, Տրեղեգին օժիտ բերելը և այլն):

Կարևոր հարց է ոչ միայն տոնն իբրև ժամանակային հատվածներ պարբերացնող երևույթ, այլև տոնի սկիզբն ազդարարող պահը: Նման «պահ-ազդարարը» հիմնականում արտահայտվել է հնչյունային եղանակով (հմտ. լտ. *calendae /ամանոր/* բառի *calo' /կոչել/* բայի արմատը): Երբեմն տվյալ պահի համար այս կամ այն մշակույթը կարող է ամրագրել որոշակի մեղեդի (ինչպես հայկական ծիսալեզվում՝ Մահարին): Սակայն պետք է նշել, որ երբեմն դժվար է որոշել տոնի և ծեսի սկիզբն ու վերջը, քանզի, ծեսի նախապատրաստական աշխատանքները ևս



ծիսականացված են: Շփոթություն է առաջանում մաս ժամանակի ընթացքում ծեսի կրած փոփոխությունների պատճառով: Օրինակ, հարսանյաց հաց թխելու ծեսը և դրա հետ կապված տան առաստաղն ալյուրով մախշագարդելը Եղեգնաձորում կատարվում էր չորեքշաբթի օրը: Որոշ տեղերում հաց թխելու օրը հինգշաբթին է: Հաշվի առնենք, որ Տուպորովի և Իվանովի վերականգնած հիմնական առասպելի հենց չորրորդ օրն է «մենամարտի» օրը (հաց թխելու ծեսում ևս ուրվագծվում են այդ առասպելաբանության որոշ արտացոլումներ): Ասվածից կարելի է ենթադրել, որ հայոց չորեքշաբթին, որպես հայկական շաբաթի չորրորդ օր, հարսանյաց շաբաթի հնարավոր սկիզբն է: Երբ պսակադրության համար ընտրվում է շաբաթ օրը, ապա մնացած ծեսերի հերթականությունը սկսվում է հարմարեցվել դրան: Խորհրդային շրջանում հարսանիքի համար շաբաթ և կիրակի օրերի մախընտրությունը, ինչպես հայտնի է, պայմանավորված էր չորանց ոչ աշխատանքային օր լինելով: Հարսնառի արարողակարգում, փեսայի տարածքային տեղափոխությունները կատարվում են վտանգավոր «այլ աշխարհի» տարածքի՝ հարսի կողմի առասպելաբանական ընկալմամբ, որպես մութ, գիշերային և այսպիսով վտանգավոր ճանապարհ (հմտ. հարսնառի ժամանակ լապտերի պարտադիր առկայությունը, «սիմիների» մոմերով զարդարելը, ինչպես մաս ժամանակակից հարսանյաց մեքենաշարի վառած լույսերը):

Ամուսնական ծեսում շեմի, անցման շեշտված գաղափարը յուրովի արտացոլվում է մաս «հարսանեկան ժամանակում»: Այսպես, հարսի՝ մախկինում մոմերով, իսկ այժմ՝ մեծ մասամբ միակ շաբաշով պարը, երբեմն փորձում են համընկնեցնել գիշերվա ժամը 12-ին՝ ընդօրինակելով Ամնորյա գիշերվա անցումային պահը:

Հարցերի վերջին խումբը կապված է հարսանիքի տևողության հետ. «յոթ օր-յոթ գիշերի» նվազումը մինչև եօթյա և ապա մեկ կամ երկուրդ հարսանիքի, որի երկրորդ օրն այժմ համատեղվում են «ջահելների թեֆը» և «գլուխ լվանալու» ծեսերը: Վերջինս ավանդական հարսանիքում մախտեսված էր կատարել պսակից մի շաբաթ հետո: Տնտեսական ճգնաժամի պայմաններում ծիսական «մոտաժի» նման բավականին ճկուն մեխանիզմը «մպաստում» է հարսանյաց ծիսաշարի առավել կարևոր պահերը «գտելուն»:

## ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ԱԻ)

### ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ-ԲՈՅԱՆՆԵՐԻ ԳԱՐՏՆԱԼԵԶՎՈՒՄ

Հայ-բոշաների (ինքնանվանումը՝ *լոմ*)՝ դարեր առաջ ինքնուրույն ազգ հանդիսացած, սակայն այսօր արդեն ամբողջովին հայկական էթնիկ ինքնագիտակցությամբ մեր ժողովրդի այս չափազանց հետաքրքիր հատվածի գաղտնալեզուն՝ *լոմավրենը*, վերջին անգամ հետազոտության առարկա է դարձել 1907թ. հրատարակված գերմանացի հայագետ-արևելագետ Ֆ.Ն.Ֆինկի հանրահայտ աշխատության մեջ:

Այս՝ այժմ արդեն մեռնող գաղտնալեզուն հանդիսանում է, փաստորեն, միակ՝ անկատար, բայց միևնույն ժամանակ վտառիկ աղբյուրը, որի վերլուծության շնորհիվ մեր առջև է հանում հայ-բոշաների պատմական անցյալը:

Զեկուցման մեջ էթնո-լեզվաբանական ստուգաբանության միջոցով, առաջին անգամ համակողմանիորեն քննելով հայ-բոշաների գաղտնալեզվում առկա իրանական փոխառությունները, փորձ է կատարվում լույս ափելու հայ ժողովրդի այս բաղկացուցիչ մասի մախինների պատմական գաղթի ուղիների հարցի, մերձավորարևելյան և արևմտյան գնչուական լեզուների ու բարբառների հետ հիշյալ գաղտնալեզվի ունեցած ծագումնաբանական առնչակցությունների վրա:

Գաղտնալեզվի ներկայացվող ողջ բառապաշարը, որում առկա են նաև ցարդ լույս ընծայված նյութերում երբևիցե չվկայված բառեր, արդյունք է վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի և Վրաստանի հայ-բոշմաների շրջանում իրականացրած մեր դաշտային հետազոտական աշխատանքի:

## ԱՄՀԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ՀՅԹԻ)

### ՄԱՄՈՒԼԻ ԳՐԱԶՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԻԲԱՅՈՒՄ ՄԵՆ ԵՂԵՈՒՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Մամուլի Օսմանյան գրաքննությունը սկիզբ է առել 19-րդ դարի 60-ական թ. և խոր կնիք դրել երկրում հրատարակվող պարբերական մամուլի զարգացման ու նկարագրի վրա: Պարբերական մամուլի զարգացմանը զուգընթաց, մամուլի իրավական դրության վերաբերյալ ձեռնարկվեցին մի շարք օրենսդրական միջոցներ: 1864թ. դեկտեմբերի 31-ին ընդունված արտաքուստ ազատամտության հավակնող տպագրական օրենքն անհամապատասխան էր հենց իրենց՝ իսկ թուրքական կառավարողներին, քանզի 1876թ. օսմանյան սահմանադրության ու դրան հաջորդող մի կարճ ժամանակաշրջանում Թուրքիայում հրատարակվող պարբերականները ընդհանրապես և, արևմտահայ մամուլը մասնավորապես, օգտվելով որոշ թողտվությունից և բացահայտելով հարստահարվող գաղափարի իրավիճակը՝ արտահայտել էին ազգային ինքնորոշման միտումներ: Այնինչ, Աբդուլ Համիդը երկրի համար արտաքին բարենպաստ մթնոլորտ ստեղծելուց հետո, 1880-ականների սկզբից հաստատեց նախնական դաժան գրաքննություն, որը տևեց մինչև երիտթուրքերի հեղափոխությունը:

1908թ. երիտթուրքերը վերանախալային հեղափոխություն կատարեցին և, վերականգնելով 1876թ. սահմանադրությունը, առժամանակ երկրում հաստատեցին մամուլի ազատություն: Սա զգալիորեն խթանեց երկրում պարբերական մամուլի զարգացումը: Մակայն, այս իրավիճակը շատ կարճ տևեց, և երիտթուրքերը, մոռացության տալով հեղափոխության մեջ իրենց դաշնակցած Թուրքիայում քնակվող ազգերի ներկայացուցիչներին տված խոստումները, իրենց ուշադրությունը կենտրոնացրեցին երկրում խոսքի ազատության սահմանափակման վրա: 1914թ. հուլիսի 21-ին երկրում հաստատվում է սեֆերիյիք (գորահալաք) և իրդեհի ուրֆի (պատերազմական վիճակ), որին ամմիշապես հաջորդում է հաղորդակցության և տեղեկատվության շարժի արգելում: Բնակչությունը զրկվում է կառավարության գործողությունների մասին տեղեկատվությունից: Ավելին, երբ 1914թ. հոկտեմբերին Թուրքիան ստավ համաշխարհային պատերազմի մեջ Եռյակ դաշինքի կազմում, ինչպես նշվում է մամուլում, «ամեն կյանք ու շարժում կաշկանդման դատապարտվեցին»: Դադարեցվեց լրատվության հոսքը արտաքին աշխարհից, ռազմաճակատներից: Արդեն 1914թ. օգոստոս-հոկտեմբերին պատրիարքարանը, առաջնորդարաններն ու ազգային վարչությունները հարկադրվեցին լույս և դրվեցին խիստ հսկողության տակ: Թուրքիայում հրատարակվող պարբերականները վերածվել էին խղճուկ, դժգույն թերթոնների, որոնք լեցուն էին իրական վիճակի վերաբերյալ կեղծ լուրերով, հեյրույանքներով և ազգամիջյան քշմամանք սերմանող հոգվածներով: Հիմնական լրատվությունը ստացվում էր գերմանական «Վոլֆ» հեռագրական գործակալությունից, որը ապակողմորոշող նյութեր էր սփռում՝ թողարկելով պատերազմում Եռյակ դաշինքի



պարտությունները: Թուրքիայում հրատարակվող թերթերի զգալի մասը, հիմնականում ոչ թուրք ազգին պատկանող, մեծ արագությամբ զրաբեմության կողմից արգելվում էին, մյուսները մի կերպ քարշ էին տալիս գոյությունը՝ իրենցից ոչինչ չներկայացնելով, իսկ մի մասն էլ իրենց ներկայացնում էին իբրև գերմանասեր և դրան ստանալով գերմանական դեսպանությունից, թուրքական կառավարությունից և իշխող «Ժթիհադ վե թերագզը» կուսակցությունից՝ փաստորեն դառնում էին նրանց խոսափողը: Թերթերում իսպառ բացակայում էին նյութեր Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված արևմտահայերի զանգվածային կոտորածների մասին: Այսպիսի իրավիճակը նպաստում էր ժողովրդի մեջ զանազան լուրերի տարածմանը: Սրա վառ օրինակն էր Թալեթաթ փաշայի թելադրանքով տարածված այն լուրը, թե իրենց դեմ Կովկասյան ռազմաճակատում կռվում են ոչ թե ռուսական զորքերը, այլ հայ կամավորների 70.000-անոց բանակը:

## ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ՄԻ)

### ԶՈՐԱՅ ՔԱՐԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԻ ՇՈՒՐՁ

Զորաց քարեր (Զորաքարեր) մեզայիթյան հուշարձանը, որ հայտնի է նաև Դիք (-դիք) քարեր, Ցից (-ցից) քարեր, Շրիվարաց դաշտ, Քարահունջ, Քարենիշ անուններով, գտնվում է Սիսիան քաղաքից 3 կմ հյուսիս:

Այն հյուսիսից հարավ ձգվող քարասյուների համալիր է, կենտրոնում արևելք արևմուտք երկար առանցք ունեցող ձվաձև «հենջով» (քարասյուներով կառուցված օղակաձև շինություն), որի ներսում տեղակայված է կրոնիկն ունեցող քարաբլկային դամբարան (Ք.ա. 10-8-րդ դ.դ): Հենջից հյուսիս-արևելք ձգվում է քարուղին. հարավային թևը սկսվում է դարբասով: Քարասյուների գիծը հենջի ներսում անցնում է արևելյան կիսաշրջանով կրոնիկային հարելով դրսից: Կառույցի բազալտակոտ կոթողների մի մասի վրա բացված են անցքեր, որոնք եզակի երևույթ են մնամատիկ հուշարձանների համար: Այս կառույցը և ձորը շրջագծում են մի տարածություն, որը Ք.ա 3-1-ին հազարամյակներում օգտագործել է որպես նեկրոպոլիս (մեռյալների քաղաք) և բնակավայր:

Սիսիանի մեզայիթյան այս կառույցի վերաբերյալ հետևյալ կարծիքի ենք.

1. հուշարձանն արտացոլում է մախնյաց պատկերացումները կապված կյանքի և մահվան հավերժական հերթագայության և պտույտի հետ, որը սերտորեն զուգահեռված է բնության մեջ պարբերաբար կրկնվող երևույթների՝ գիշերվա և ցերեկվա, տարվա եղանակների հերթափոխությանը երկնային լուսատուների շարժում: Այն պաշտամունքային, միաժամանակ աստղագիտական տեսանկյունից կիրառելի կառույց է.

2. հյուսիսից հարավ ձգվող մենհիրների շարքը հանդիսանում է կյանքի և մահվան խորհրդանշական սահմանագիծ, «հենջը» ցուցանում է նրա կենտրոնում գտնվող դամբարանի հանգուցային՝ այդ սահմանագիծը հատած լինելու հանգամանքը: Արևելք արևմուտք ձգվածությունը խարիրդանշում է այդ շարժը: Դամբարանի մուտքը ուղղված է դեպի արևմուտք, իսկ ուղղանկյունաձև դամբարանախուցը՝ հյուսիս- արևելք, քառուղու ուղղությամբ.

3. քարուղին ձգվում է ամառային արևադարձի օրը, արևածագի ուղղությամբ և խորհրդանշում է կյանքի վերածնունդը.

4. 52-րդ քարը, որ գտնվում է «հենջի» միջով անցնող լարի վրա, ունի եռանկյունաձև կառուցվածք և այնպիսի դիրք, որը հարմարավետ է նրա վրա միջահասակ մարդու պառկելու և արևածագին հետևելու համար: Այդ դիրքով «հենջի»

7-րդ և 9-րդ քարերի գագաթների միաժամանակ կարող ենք համապատասխանեցնել հորիզոնի գծի հետ: Նման եղանակով ամրագրված են զարնամային (աշնամային) գիշերահավասարի և ձմեռային արևադարձի արևածագի կետերը: Նկատվող շեղման անկյունը չափելով հնարավոր է որոշել հուշարձանի տարիքը:

5. հարավային բևեռի կառուցված դարպասը «գրանցում է» արեգակնային կոլմինացիան՝ 60, 62 քարերի անցքերի և նրանց համադրված 63-րդ քարի սրածայր գագաթի, ինչպես նաև նշված քարերի ստվերների միջոցով: Դարպասի երկու քարերը տեղակայված են ձմեռային արևադարձի օրը, արեգակնային կոլմինացիայի ժամանակ, 62 և 63-րդ քարերի միաձուլված ստվերների երկարության չափով: Որ քարերի ստվերների երկարությունը օգտագործվել է որպես չափման միավոր, փաստվում է նաև զարնամային (աշնամային) գիշերահավասարի օրը «հենցի» արևմտյան քարի ստվերի երկարությամբ, որը հասնում է մինչև կենտրոնական դամբարանի մուտքը:

6. Քարերի վրայի անցքերը սկզբնապես հավանաբար արվել են քարերը տեղաշարժելու համար, սակայն հետագայում կորոզների անցքեր են բացվել նաև աստղադիտական նպատակներով, չի բացառվում, որ դրանք ունենային նաև խորհրդանշական իմաստ՝ կապված երկնային լուսատուների պաշտամունքի հետ:

7. քարայրումների գիծը հյուսիսային ծայրում ունի այնպիսի կառուցվածք, որ հիշեցնում է փոքր արջի համաստեղությունը:

8. կառույցը կապված լինելով կյանքի և մահվան պատկերացումների հետ հավանաբար կառուցվել է այն ժամանակ, երբ նրա արևմտյան տարածությունը օգտագործվել է որպես դամբարանադաշտ,

9. տեղի բնակչությունը հուշարձանը կոչում է «Ջորաց քարեր (գորաքարեր)» կամ «Դիբ (-դիբ) քարեր» (Աստվածային քարե՞ր). հետևաբար անվանակոչման հարցում պետք է առաջնորդվել դրանցով. մնացյալ անունները արհեստածին են:

## ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ)

### ԱՀՄԱԳ. ՍԱՀՄՈՒԴԻ «ՀԱՐԵՎԱՆՆԵՐ» ՎԵՊԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Մահմուդի «Հարևաններ» վեպը ունի հասարակական-քաղաքական հինչեղություն: Վեպի գործողությունները տեղի են ունենում Իրանի հարավային նախաքաղաքներական շրջաններից մեկում: Այն արտացոլում է պատմական հետաքրքիր մի ժամանակահատված՝ 1949-53թթ. երբ առկա էին ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-դասակարգային հակասություններ: Թերեւս հարազատ մնալով պատմական իրողություններին՝ Ա. Մահմուդը իր հերոսների դրամատիկ, ծիծաղաշարժ վարքագծով փորձել է ստեղծել հումորով եւ իրականությամբ շաղախված մի համայնապատկեր:

1. Ա. Մահմուդի «Հարևաններ» վեպը իր իսկ բնակիչների ճակատագրերի, բարքերի հայացքների պատկերավորումների միջոցով ի հայտ է բերում պատմական ժամանակի և իրողությունների մեջ հասունացող սոցիալ հոգևոր նոր բովանդակային եզրեր:

2. Ներկայացնելով «Հարևաններ» վեպը՝ հեղինակը բնավ հակված չէ դեպի կյանքի այս կամ այն եզրագծի շեշտումը: Նա ներկայացնում է կյանքն իբրեւ անընդհատ շարունակվող ընթացք, անկախ Իրանում ծավալված պատմական



դեպքերի հաստատումից, ուր կա մարդկային վարքաճեւերի մի ամբողջություն. խիղճ, զգացմունք, սեր, ատելություն, հավատ, մաքառում...

3. Ա. Մահմուդը ռեալիստորեն նկարագրում է Իրանի հարավի վարք ու բարքի նյութական մանրամասները: Նա ժողովրդական ակունքների մեջ հայտնագործում է ճշմարտության, բարու, գեղեցկության, խղճի չափանիշները, դիմելով գլխավոր հերոսի՝ 15-ամյա Խալեդի հոգեկան աշխարհին, մտորումներին, ինքնագիտակցությանը, որով էլ նա գնում է դեպի ինքնահաստատում, հերոսացում, ազգային արմատներ:

4. Վեպի գեղագիտական առանձնահատկությունները ընդգծում է նաեւ կոմպոզիցիոն-քենատիկ շարադրանքը, որը բնորոշ է «շրջանակված արձակին»: Պատումից պատում, դեպքից դեպք ավելի ճկուն են դարձնում սյուժեի ներքին զաղափարական բովանդակությունը: Բակը դա ինքնատիպ մի աշխարհ է, մարդկային ճակատագրերի մի շրջա, ուր աճեն ինչ փոխվում է, վերածնվում, ուր երեսույթները ներքին թելերով կապված են միմյանց, որոնց բազմազանությունը համագեցնում է մեկ ընդհանրացման:

Ա. Մահմուդը իրականության անմիջական դիտորդն է և նույն իրականության անմիջական մեկնաբանը: Նա որպէս գեղագետ-հետազոտող ստեղծել է գեղարվեստական համադրությունների մի ամբողջ շարք, բովանդակություն, խոսք, լեզու, պատումնային ոճ, որի մեջ զուգակցվում է լացն ու ծիծաղը, ողբերգա-կատաղերգության շղարշը:

#### ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ (ԵՀԱՀ)

### **ԲԱՀԱՅԻՆԵՐԻ ՏՈՍԱՐԸ, ՍՈՒՐԲ ՕՐԵՐԸ ԵՎ 19-ՐԴ ՕՐԿԱՆՍՈՒԱԿԱՆԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ինչպէս հայտնի է, աշխարհի մեծագույն կրոնները՝ բուդդայականությունը, քրիստոնեությունը, մահմեդականությունը, ունեն իրենց ուրույն տոմարը: Նորագույն կրոններից մեկը՝ բահայականությունը, որը ծագել է 19-րդ դարում Պարսկաստանում, ևս ստեղծել է իր տոմարը, որով ներկայումս առաջնորդվում են աշխարհի տարբեր երկրներում բնակվող շուրջ 6,5-7 միլիոն բահայիները: Բահայական քվարկությունը սկսվում է 1844 թվականից՝ իր առաքելության մասին Բաբի ավետումից, և ըստ այդմ, ներկայիս 2001թ. համապատասխանում է բահայիների 157-158 թթ.:

Բաբը, լինելով մոր կրոնի հիմնադիր, սահմանեց մոր տոմար, որը հայտնի է Բադի կամ Բահայի օրացույց անուններով: Ըստ Բաբի ստեղծած օրացույցի տարին կազմված է 19 ամսից, յուրաքանչյուրը՝ 19 օրից: Լրիվ տարվա համար չի հերիքում 4 օր (նահանջ տարում՝ 5): Այդ օրերը կոչվում են Այանե Հա (Նշանակովի օրեր, Միջանկյալ օրեր) և դրվում են 18-րդ (Մուլը-իշխանություն) ամսվանից հետո և 19-րդ (Ալա-վսեմություն) ամսից առաջ: Այսպիսով, բահայական օրացույցը համապատասխանեցվում է արեգակնային տարվան:

Բաբը Ալա ամիսը սահմանել է որպէս պատի ամիս, որը տևում է մարտի 2-ից մինչև մարտի 20-ը ներառյալ: Պատի ընթացքում հավատացյալները պետք է արևածագից մինչև մայրամուտ հրաժարվեն սննդից, ջրից և ծխախոտից:

Պատից ազատվում են մինչև 15 և 70-ից բարձր տարիք ունեցողները, հղի և կերակրող կանայք, ծանր աշխատանք կատարողները, հիվանդները և ճամփորդողները:

Բաբը 19 ամիսներին տվել է արաբերեն անուններ (Բահա-վեհություն, Ջալալ-փառք, Ջամալ-գեղեցկություն, Ազամաթ-հիասքանչ, Նուր-լույս, Ռահմաթ-գթություն, Քալիմաթ-բարեր, Քամալ-կատարելություն, Ամա-անուններ, Իզգաթ-գործություն,

Մաշինաք-կամք, Իլմ-գիտություն, Դուրդաք-ուծ, Դաուլ-խոսք, Մասաիլ-հարցեր, Շարաֆ-պատիվ, Մոլթան-տիրապետություն, Մուլք-իշխանություն, Ալա-վսենություն), որոնք արտահայտում են Աստծո որոշ հատկանիշներ: Շաբաթվա յուրաքանչյուր օրը ևս ունի իր անվանումը (Ջալալ-փառք (շաբաթ), Ջամալ-գեղեցկություն (կիրակի), Քամալ-կատարելություն (երկուշաբթի), Ֆաղլ-գթասրտություն (երեքշաբթի), Աղլ-արդարություն (չորեքշաբթի), Իսփիլալ-վեհություն (հինգշաբթի), Իսփիլալ-անկախություն (ուրբաթ)), որը նույնպես Աստծո որոշ հատկանիշների բնութագրումն է:

Բահայիների օրը սկսվում է արևամուտից (երեկոյան ժամը 18. 00) և տևում մինչև հաջորդ օրվա մայրամուտը:

Բահա ամսվա առաջին օրը (մարտի 21-ը) բահայիների Նոր տարին է՝ Նորուզը, որը Բաբը հայտարարեց տոն:

Բահայական հավատում գոյություն ունեն 9 սուրբ օրեր, որոնց ընթացքում չի կարելի աշխատել: Այդ օրերն են՝ Նորուզը, Ռիզվանը (Ռիզվանի առաջին, իններորդ և տասներկուերորդ օրերը), Բաբի և Բահաուլլահի ծննդյան օրերը, Բաբի հայտնության օրը, որը համընկնում է Աբդուլ-Բահայի ծննդյան օրվան, Բաբի նահատակման, ինչպես նաև Բահաուլլահի համարածման օրերը: Նշվում են նաև երկու տարեկիցներ՝ Պատգամի օրը և Աբդուլ Բահայի մահվան տարեկիցը, որոնց ժամանակ աշխատանքը չի դադարեցվում:

Բահայիների մեծագույն տոնը Ռիզվանն է, այսինքն՝ այն տասներկու օրերը (ապրիլի 21-ից մայիսի 2-ը), որոնց ընթացքում Բահաուլլահին ավետեց իր առաքելության մասին: Բահաուլլահի ավետումն ամեն տարի նշվում է որպես 12-օրյա Ռիզվանի տոն, որը Շողի էֆենդին անվանել է «բահայի տոներից ամենատարբեր և նշանակալիցը»: Այս տոնի ընթացքում են տեղի ունենում բահայիների Հոգևոր ժողովների ընտրությունները:

Բահայական օրացույցի յուրաքանչյուր ամսվա առաջին օրը բահայիները նշում են 19-րդ օրվա տոնակատարությունը: Այն բաղկացած է երեք՝ աղոթքի, վարչական և սոցիալական մասերից: Առաջին մասում կարդացվում են աղոթքներ և հատվածներ բահայիների, ինչպես նաև այլ կրոնների սուրբ գրքերից (Աստվածաշունչ, Դուրան): Վարչական մասում հավատացյալները բնարկում են համայնքի գործերը, ամցկացնում խորհրդակցություն: Եզրափակիչ՝ սոցիալական մասը, նվիրվում է հյուրասիրությանը և ընկերների հետ շփմանը:

Հայաստանում 1992թ. նույնպես կազմավորվել է բահայիների համայնք, որը 2000թ., ըստ Ազգային Հոգևոր ժողովի տվյալների, ուներ 500 անդամ և 23 Տեղական հոգևոր ժողով, որոնցից 7-ում (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արմավիր, Ստեփանավան, Ապարան, Արդանիշ), ամեն ամիս նշվում էր 19-րդ օրվա տոնակատարությունը: Ներկայումս համայնքն ունի 350-400 անդամ: 2001թ. ապրիլի 21-ի ընտրություններին ընտրվել է 15 Տեղական հոգևոր ժողով (Երևան, Գյումրի, Ապարան, Էջմիածին, Արմավիր, Ստեփանավան, Արթիկ, Գորիս, Կապան, Թալին, գ.Արդանիշ, գ.Ուտուտ, գ.Մելիք, գ.Բերքառատ, գ.Նիգավան): Հայաստանի բահայիները, ինչպես աշխարհի իրենց հավատակիցները, նույնպես նշում են բահայական վերոնշյալ տոները և սուրբ օրերը:



ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ  
20-ԲԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. 19-րդ դ. սկզբին Արևելյան Հայաստանի անցումը Ռուսաստանին սպառնացն հայերի ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլև քնականն զարգացումն ու հետագա բարգավաճումը:

19-րդ դ. երկրորդ կեսին ամրապնդվեցին հայերի սոցիալ-տնտեսական դիրքերն Անդրկովկասի երկու խոշոր քաղաքներում՝ Թիֆլիսում և Բաքվում:

2. Թեպետ 19-րդ դ. վերջերին հայկական ազգայնականությունն աղղված էր բացառապես արևմտահայերի չափազանց խնդրին և Ռուսաստանում ոչ մի քաղաքական նպատակներ չէր հետապնդում, այնուամենայնիվ, Ռուսաստանում սկսեց տարածվել «հայկական սեպարատիզմը» գոյության մասին վարկածը:

3. Հայկական ազգայնականությունը, սպառնալով Թուրքիայի ամբողջականությունը, առաջացրեց նաև ռուսական արքունիքի զայրույթն ու անբարյացակամ վերաբերմունքը, քանի որ ցարական կառավարությունը ինքն իրեն էր համարում Արմ. Հայաստանի տերն ու տիրակաճը և սպազայում հույս ուներ տիրաճալու դրան: Այ. Խատիսյանը գրում էր, որ 1906թ. Թիֆլիսում արևելահայերի առաջին համագումարից հետո, ինքը ռասիականապետին է. ներկայացրել համագումարի ռոշումները և նշել, որ հայերը ռուսական պետական շահերի դեմ ոչ մի որոշում չեն կայացրել և զբաղված են բացառապես քրքրահայ դաժնով: Ի պատասխան դրան ռուսականապետը ասել է. «Տաճկահայկական վիպյէքները ազատ չեն: Անո՞ք ունին իրենց սպազայ տէրը: Դա Ռուսաստանն է, առանց որո՞ւ գիտութեան եւ խորհրդի պէտք չէ, որ դուք գրադուխը այդ հարցով: Ահա թէ ինչու մենք կը հետապնենք Հ. Յ. Դաշնակցական կուսակցութիւնը»:

4. 19-րդ դ. երկրորդ կեսին ռուսական կառավարության կողմից ստեղծված ՌԴդափառության վերականգնման վարչության գործունեության անհաջողությունները հայերին դավանաւիտիս անելու գործում, սպառնացեցին հայերի մոտ ցայտուն արտահայտված էքնիկ ինքնագիտակցության առկայությունը: Թեպետ վաքականազն դիմում էր զանազան միջոցների՝ հող էր խառտանում սակավահող հայ գյուղացիներին կամ աջակցություն արևմտահայ խնդիրների լուծման գործում, այնուամենայնիվ, հավատարացությունը հայերի շրջանում չտարածվեց, այլ սահմանափակվեց 2-3 դեպքերով միայն:

5. Հայերի սոցիալ-տնտեսական հզորացումը տարածաշրջանում, արտահայտված էքնիկ ինքնագիտակցությունը, կազմակերպված կուսակցությունների առկայությունը, ազգայնականության դրոշակակիր հանդիսացող հայկական բուրժուազիայի ձևավորումը և արևմտահայ խնդրին հետամուտ լինելը հանգեցրեցին ռուսական վարչակազմի՝ հայերի հանդեպ վերաբերմունքի կտրուկ վատթարացմանը:

Հակահայկականությունը սկսեց տարածվել ամենուր, հատկապես տեղական և մայրաքաղաքային մամուլում:

6. Միաժամանակ սրվեցին հայ-վրացական և հայ-թաթարական հակասությունները:

Երե հայ-վրացական հակասությունները սահմանափակվեցին միայն սոցիալ-տնտեսական գործունեությամբ, ապա հայ-թաթարականը՝ սոցիալ-տնտեսականից զատ սնվում էր նաև կրոնական, հոգեբանական, պատմական աղբյուրներից:

Ի տարբերություն հայ-վրացականի, հայ-թաթարական հակամարտությունը դուրս եկավ ազգային վերնախավի շրջանակներից և ընդգրկեց երկու ժողովուրդների բոլոր խավերին, տեղափոխվեց ազգամիջյան հարաբերությունների հարթություն:

7. Թաքարների շրջանում հալսահայկականությունն ակտիվ սնվում էր նաև պանթոքրիզմի և պանիսլամիզմի հայաջինջ ծրագրերով, որի անմիջական հետևանքները եղան 1905-1906 թթ. Անդրկովկասում ծայր առած հայ-քաքարական արյունահեղ ընդհարումները:

8. Փաստորեն, հայերին բուլացնելու ցարական վարչակազմի ձգտումները արձագանք գտան նախ վրաց ազգայնական վերնախավի շրջանում, չվերածվելով հայ-վրացական հակամարտության, իսկ այնուհետև՝ քաքարների շրջանում, քանի որ լիովին համապատասխանում էր նրանց պանթոքրիստական նկրտումներին:

#### ՎԻՐԱՔՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊԷ)

### **ՀՈՐԴԱՆԱՆՅԱՆ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՄԻԱՅՅԱԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂՃՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման ամենահայտնի նախագծերից մեկը Հորդանանի Հուսեյն թագավորի 1972թ. առաջ քաշած ծրագիրն է: Այն նախատեսում էր խնդրի խաղաղ կարգավորում՝ Հորդանանի և Պաղեստինի միացյալ թագավորության ստեղծման միջոցով:

Միացյալ թագավորության հռչակման գաղափարը ունի բավականին խորը արմատներ: Այն առաջին անգամ արտահայտվել է 1936թ. Փլիի հանձնաժողովի և 1948թ. Պաղեստինում ՄԱԿ-ի դիտորդ Բերնադետի կողմից: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ուղղված իր զեկույցում Բերնադետը առաջարկել է ՄԱԿ-ի կողմից Պաղեստինում արաբական պետության համար հատկացված տարածքների ազգաբնակչության հետ լիարժեք փոխըմբռնման ղեկավար հիշյալ տարածքների և Անդրհորդանանի միավորում: Սակայն 1948-49թթ. արաբա-իսրայելյան պատերազմը և Իսրայելի կողմից Պաղեստինում արաբական պետության համար հատկացված տարածքների մեծ մասի զբաղումը արգելակեցին Բերնադետի նախատեղծությունը:

1950թ. այդ գաղափարին անդրադարձավ Հորդանանի Արդալլահ թագավորը: Անդրհորդանանում և Պաղեստինում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքում ընտրված պատգամավորները պետք է վերջնական պաշտոնական որոշում ընդունեին պաղեստինյան տարածքների հետագա ճակատագրի վերաբերյալ: Նույն թվականի ապրիլի 23-ին հռչակվեց Հորդանանի Հաշիմյան թագավորությունը, որը ներառում էր Անդրհորդանանը և Հորդանան գետի Արևելյան ափի պաղեստինյան շրջանները: Նորահռչակ թագավորությանը անմիջապես ճանաչեց Մեծ Բրիտանիան, իսկ այնուհետև, ի պատասխան Բրիտանիայի կողմից Իսրայելի ճանաչմանը, նաև ԱՄՆ-ը:

Միացյալ թագավորության գաղափարը կրկին դարձավ օրակարգային 1967թ. արաբա-իսրայելյան պատերազմից հետո, երբ Իսրայելը զբաղեց Հորդանան գետի Արևմտյան ափը և Սինայի թերակղզին: Այս անգամ նախատեղծությունը իսրայելյան կողմին էր՝ հիշյալ ճանապարհով խնդրի կարգավորումը ներառվեց Իսրայելի Աշխատանքի կուսակցության քաղաքական ծրագրում:

Այնուհետև այս գաղափարին անդրադարձավ Հուսեյն թագավորը 1972թ. Բաժման դրակում արած իր հայտնի հայտարարության մեջ, երբ առաջարկեց «Միացյալ Արաբական թագավորության» ստեղծում: Սակայն այս առաջարկը մերժվեց ՊԱԿ-ի կողմից:

1977թ. հորդանանյան իշխանությունները կրկին առաջ քաշեցին միացյալ թագավորության ստեղծման գաղափարը, սակայն նորից ստացան ՊԱԿ-ի քաղաքական պատասխանը:



1982թ. Հորդանանի կազմում պաղեստինյան ինքնավարության ստեղծման միջոցով խնդրի խաղաղ կարգավորման իր նախագիծն առաջարկեց ԱՄՆ նախագահ Ռեյգանը: Հուսեյն քազավորը առիթը օգտագործեց պաղեստինցիներին Հորդանանի և Արմ. ափի կոնֆեդերացիայի գաղափարը ևս մեկ անգամ առաջարկելու համար: 1983թ. Ալժիրում Պաղեստինի Ազգային խորհուրդը ընդունեց հորդանանապաղեստինյան կոնֆեդերացիայի սկզբունքները, սակայն պայմանով, որ ֆեդերացիայի յուրաքանչյուր անդամ լինի անկախ պետություն: 1985թ. Հուսեյն քազավորը և պաղեստինցիները հասան փոխամստություն: Առաջ քաշվեց ՄԱԿ-ի սկզբունքների և ֆեդերացիայի գաղափարի վրա հիմնված մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման համատեղ նախաձեռնություն: Սակայն այն բախվեց քանակություններին պաղեստինցիների մասնակցության վերաբերյալ ԱՄՆ-ի և Իսրայելի անհանդուրժողական վերաբերմունքին: Բացի այդ, հակասություններ կային նաև Հորդանանի կառավարության և ՊԱԿ-ի միջև ՄԱԿ-ի ԱՆ 242 բանաձևի շուրջ: Արդյունքում խաղաղ կարգավորման այդ համատեղ նախաձեռնությունը մատնվեց ձախողման:

Հուսեյն քազավորի մահվանից անմիջապես հետո միացյալ պետության գաղափարին անդրադարձավ Յասեր Արաֆաթը:

Չնայած միացյալ պետության գաղափարը բավականին կենսունակ է և հաճախ է դառնում քննարկման առարկա, այն անիրականանալի է մի շարք պատճառներով: Նախևառաջ, պաղեստինյան ազգային իշխանությունների կողմից միացյալ պետության հռչակումը դիտվում է միայն որպես անկախություն միջոց: Ինչ վերաբերում է Հորդանանին և Իսրայելին, ապա առաջին դեպքում առանց այն էլ երկրի բնակչության մեծամասնություն կազմող պաղեստինցիների թվաքանակի աճը կարող է չվերականգնվող հետևանքներ ունենալ Հաշիմյան վարչակարգի համար: Իսրայելի դեպքում, չնայած որ զբաղյալ տարածքների կարգավիճակի վերջնական որոշումը կենսական անհրաժեշտություն է, եթե համադրենք հրեաների կողմից Իսրայելի գոտա հրեական պետության ընկալմանը և զբաղված տարածքների արար բնակչության աճը, նման գաղափարի իրականացումը կրկին լուրջ խոչընդոտների է բախվում: Այդպես, չնայած թե՛ Աշխատանքի կուսակցությունը, և թե՛ Լիքուդը սկզբունքորեն դեմ չեն հորդանանա-պաղեստինյան միացյալ պետության գաղափարին, սակայն տարբեր կերպ են պատկերացնում նրա արտահայտությունը: Աշխատանքի կուսակցությունը դեմ չէ նաև Պաղեստինի անկախ պետության հռչակմանը, սակայն միայն այն դեպքում, երբ դա ընդամենը Հորդանանի հետ միացյալ պետության ստեղծման նախարան է: Իսկ Լիքուդը, կտրուկանապես մերժելով պաղեստինյան անկախ պետության հռչակումը, դեմ չէ պաղեստինցիների ինքնավարությանը և նրա ներառմանը Հորդանանի կազմում, քանի որ Հորդանանը, Լիքուդի տեսակետով, նաև ալյընտրանքային հայրենիք է պաղեստինցիների համար:

#### ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱԶՍ (ԱԻ)

### **ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅՈՒՆ ԵՄԵՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՏՈ**

Սառը պատերազմի ավարտից հետո Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) գործունեության մեջ զգալի փոփոխություններ տեղի ունեցան, ինչը թելադրում էր նոր աշխարհակարգի ստեղծումը: Արեխատական գաղափարախոսությունը սկզբունքորեն մերժող Իսլամական կոնֆերանսը ողջունեց ԽՍՀՄ-ի փլուզումը, որի մեծարանակ իսլամ ազգաբնակչությունը, դեռևս խորհրդային տարիներին, եղել է կազմակերպության տեսադաշտում: Գործաշավյան վերակա-

ռուցման շրջանում ամրապնդվում են կազմակերպության մշակութային, գլխավոր, տնտեսական կառույցների շփումները Միջին Ասիայի համրապետությունների և Ադրբեջանի հետ, որոնց անկախացումից հետո Իսլամական կոնֆերանսը ռազմավարական նոր մոտեցումներ է որդեգրում: Թուրքիայի, Իրանի, Սաուդյան Արաբիայի միջև մրցակցություն է սկսվում հիշյալ երկրներին կազմակերպության մեջ ներգրավելու ուղղությամբ, որոնց համար բացառիկ հնարավորություն էր ստեղծվել մերձեցալու իսլամական արժեքներին և ԻհԿ-ի քաղաքական, տնտեսական և գաղափարական օժանդակություն շնորհիվ լուծել սեփական խնդիրները: Իսլամական կոնֆերանսի ամբիոնը լավագույնս օգտագործեց Ադրբեջանը՝ աջակցություն ստանալով Լեռնային Ղարաբաղի հարցում:

Իսլամական ինտեգրացման գործընթացները նոր փուլ քնակոխեցին սառը պատերազմից հետո, երբ կազմակերպությանն անդամակցեցին Կենտրոնաֆիական հանրապետությունները, Ադրբեջանը, նաև՝ Ալբանիան, իսկ Հարավարևելյան տրոհումից հետո կազմակերպության հետ սկսեցին համագործակցել Բոսնիան և Հերցեգովինան: Այժմ ԻհԿ-ին անդամակցում են 56 իսլամադավան պետություններ:

Հիշյալ ժամանակահատվածում ուշադրության է արժանի նաև կազմակերպության քաղաքականությունը անդամ-պետությունների միջև տնտեսական ինտեգրացում իրականացնելու ուղղությամբ: Այս հարցում մեծ է Ջարգացման իսլամական բանկի (ՋԻԲ) ներդրումը: ՋԻԲ-ը մասնակցում է կառուցողական ծրագրերի և մախաճեռությունների ֆինանսավորմանը, աջակցում անդամ երկրներում առևտրի, էներգետիկայի, նաև՝ տեխնիկական զարգացմանը, տեխնոլոգիաների փոխանակմանը: Բանկը հիմնում է հատուկ ֆոնդեր, որոնք մախաճեռված են անդամ-երկրների տնտեսական, սոցիալական, ֆինանսական զարգացման համար, ներառյալ ոչ իսլամական երկրներում իսլամական փոքրամասնությունների օգնությունը: Մշակվում են պարտքերը մարելու, տնտեսական վնասները կանխելու ծրագրեր, հետազոտություններ են անցկացվում անդամ երկրներում ֆինանսական և բանկային գործունեության ծավալելու համար:

Տնտեսական համագործակցության միասնակ ինտեգրացված իսլամական համայնքն է, համաշխարհային տնտեսական համակարգում նոր բյուրեղի ստեղծումը, որը բոլր կառ իրականցնել ընդհանուր իսլամական շուկա ստեղծելու գաղափարը՝ եվրոպական շուկայի օրինակով:

Սառը պատերազմի ավարտից հետո Իսլամական կոնֆերանս կազմակերպության ուշադրության շրջանակում հայտնվեցին խնդիրներ, որոնք լուրջ սպառնալիք էին ոչ միայն իսլամական պետությունների, այլև ամբողջ աշխարհի համար, ինչպես, օրինակ, միջազգային ահաբեկչությունը, տարածաշրջանային ծայրահեղականությունը, միջուկային սպառնալիքները: Ավելի համախափիացան այն փաստաթղթերի ընդունումը, որոնք կոչված էին կոորդինացնելու ռազմական հակամարտությունները կանխելու, տարածաշրջանային կայունություն ու անվտանգություն հաստատելու՝ անդամ-պետությունների համագործակցությունը:

Չմոռանալք նշել, որ 1999թ. ԻհԿ շրջանակներում ստեղծվեց նոր կառույց՝ Իսլամական պաշտպանության միությունը, որի նպատակներից մեկը իսլամական համերաշխության և համագործակցության ամրապնդումն է, անդամ պետությունների միջև միջպարտանձնական փորձի փոխանակումը:

Նոր աշխարհակարգի ձևավորումը, սակայն, չվերացրեց իսլամական աշխարհում գոյություն ունեցող հակասություններն ու խնդիրները: Շարունակում են չլուծված մնալ իսլամական աշխարհի համար կարևորագույն համարվող Պաղեստինի, Երուսաղեմի, արաբական գրավյալ տարածքների, առանձին իսլամական հակա-



մարտությունների հետ կապված հիմնահարցերը: Ինչ վերաբերում է անտեսական ինտեգրացման քաղաքականությանը, ապա այն դեռևս հեռու է իրական լինելուց:

## ՕՂԱՆՅԱՆ ՄՈՒՐԱԴ

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԵԴԶԱԿԱ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ (ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ)**

Տարաբնույթ տվյալների համաձայն, հին և միջնադարյան Հայաստանը իր գոյության ըստ էության բոլոր փուլերում, զերագոյնություն է ունեցել Կովկասյան լեռներից մինչև Իրան, Միջագետքի հյուսիսն ու Փոքր Ասիայի արևելքը ընդգրկող տարածաշրջանում: Այս երկրամասը ներկայացրել է մի դաշնակցային միավոր, որը գլխավորել է Հայաստանը: Դա ուղակիորեն վկայում է Պյոտարքոսը, ըստ որի Հայաստան մտած հռոմեական զորքին ղեմավորում է «դաշնակից թագավորների մի մեծ թագմություն, որոնց մեջ հզորագույնը Արտավազդ Արմենն է»:<sup>1</sup> Նույն եղանակի ու Ասյահանոսի համաձայն, նախորդ՝ Տիգրան Մեծի ժամանակներում Հայաստանի հպատակության տակ են գտնվել թագմաթիվ երկրներ, որոնք ունեին «Արքայից-արքային» ենթակա իրենց թագավորները: Պյոտարքոսի համաձայն՝ առաջնություն է տրվել 4 հպատակ թագավորների, որոնք ամենուր ուղեկցել են Տիգրան Մեծին: Նա հիշատակում է թագավորներ ունեցող 3 հպատակ երկրներ, որոնք են Մարաստան-Ատրպատականը, Ալիարենեն և Կորդուրը: Պյոտարքոսը խառնում է նաև Տիգրան Մեծի բանակում իրենց զորամիավորումները ունեցող արքանների, իբրեւների, ասորպատականցիների ու մարդերի մասին, բայց անորոշ է դրանց կարգավիճակը:

Տարածաշրջանում նույն դաշնակցային կարգավիճակի գոյությունը հաստատում է վրաց պատմագրությունը, որի համաձայն, ամենամախմուկ ժամանակներից Հայաստանը և մերձակա երկրները ստեղծել են մի ռազմա-քաղաքական դաշնակցային միավոր, որը պահպանվել է մինչև Սասանյան ժամանակները: «Թարգամոսյան» կոչված այս դաշնությունն ընդգրկել է Հայաստանը, Վիրքը, Արվանդը, ռոջ Կովկասը, Կասպադովկիան նկատի առնող «արևմտյան այլ և այլ տոհմականներին», ինչպես նաև «առնամանակից այլ ժողովուրդներին»:

Հունահռոմեական և վրաց աղբյուրներին էսկանում համաձայնում է հայ պատմագրությունը, ըստ որի նույն տարածաշրջանը որպես մեկ ռազմա-քաղաքական և քաղաքակրթական միավոր է ներկայացնում նախնական ժամանակներից ընդհուպ մինչև Հայոց թագավորության անկումը: Դա ընդգծված արտահայտված է հատկապես տարբեր պատերազմներում հայոց բանակի կազմը ցույց տվող Խորենացու, Ագաթանգեղոսի, Թովմա Արծրունու հետևյալ վկայություններում:

Տիգրան Երվանդյանի (Ք.ա. VI դ.) բանակը. «զգորս Կապադկացուց, զՎրաց և զԱդունից և զամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքրոց», կամ. «զգորս Կապադկացուց, զՎրաց և զԱդունից և Այրարատեան զազանամարտիկ զանճռնի զօրսն և զբոլոր բովանդակեալ զունդս»:

Երվանդ Վերջինի (Ք.ա. III դ.) բանակը. «զգորս Հայոց, զՎրաց և զկողմանցն Կեսարու, այլ և զՄիջագետացն»:

Արտավազդ II-ի (Ք.ա. I դ.) բանակը. «զբիրատորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լեռինն Կապկասու հանդերձ Ադունիւր և Վրօք»:

Խոսրով-Տրդատ II-ի (III դ.) բանակը. «զգորս Ադունից և Վրաց, ... Լփիւր, Դիւղայր, Կասայր և այլ ես որ ի սմին կողմանց, ... զօրս Հռմաց»:

Վրաց պատմագրության համաձայն, Թարգամոսյան դաշնության առաջին թագավոր է հռչակվել հայոց նախահայր Հայկ-Հայոսը և այս դաշնության

գերիշխանությունը ընդհանրապես պատկանել է Հայաստանին. «Եվ այս յոթ հսկաների կառավարիչն ու տերը Հատն էր: Եվ այս բոլորը հպատակ էին Հատնին: ... Իսկ Աղերկիից մինչև սրանց թագավորելը սոմելաների (հայերի) թագավորների հպատակության ներքո էին (քարքվելները): Եվ առավելապես արձագեցի թագավորներն օգնում էին սոմելաներին նրանց բոլոր բշնամիների դեմ: ... ուխտ ու պայման դրվեց, և ստրկացնելով քարքվելներին ու օսերին, սոմելաների արքան զմայց: ... նվաճված է Սոմխերը, որից կալված էր մեր թագավորությունը»:

Նույն աղբյուրում Հայաստանի առաջնությունը արտահայտված է նաև այն վկայությամբ, որ Քարթլիում Նաբոթոթոնոսոթ II-ի ժամանակներից (Ք.ա. VI դ.) ընդունված 6 լեզուներից առաջինը, որով խոսում էին «վրաց բոլոր թագավորները, արք և կանայք», հանդիսացել է հայերենը (սոմխտրի), որը մինչ այդ հանդիսացել է «Թարգամոսյան դաշնության» միակ կիրառական լեզուն: Սա միաժամանակ վկայում է Դաշնության ընդհանուր հաղորդակցության լեզվի գոյության մասին:

Հայ միջնադարյան աղբյուրների համաձայն՝ այս դաշինքը առկա է եղել նաև Հայոց թագավորության գոյության սոմենավերջին շրջաններում: Փափսոս Բուզանդը «ի թագաւորեն Հայոց» ապստամբած և Մուշեղ սպարապետի կողմից կրկին ենթարկված Հայաստանի սահմանային աշխարհների շարքում հիշատակում է նաև Աղվանքը, Վիրքը և «գտուն թագաւորին Հայոց» Ասորպատականը: Նույն մատեցմամբ, Ագարակեղոսը ներկայացնում է Հայաստանի նախածեռնությամբ քրիստոնեության տարածման հետևյալ արեալը. «ընդ սմենայն երկիրն Հայոց, ի ծագած մինչ ի ծագս ... ի Ստառղացոց քաղաքն մինչև առ աշխարհան խաղաւեց, մինչև առ Կադաբքօթ, մինչ ի սպառ ի սահման Մասքթաց, մինչև ի դրոնս Արանաց, մինչ ի սահմանս Կասայից, ի Փայտակարան ... և յԱնդացոց քաղաքն մինչև առ Մծրին քաղաքաւ, քերք առ սահմանօքն Ասորոց առ Նոր Շիրական երկրաւն, և առ Կորդուօթ մինչև յամուր աշխարհն Մարաց, ... մինչև յԱսորպատական: Սա ըստ էության Հայաստանի գլխավորած ողջ դաշնության արևալի սահմանումն է: Նույն արեալն են ներառում Հայոց սահմանային 4 գահերեց-բղեշխությունները՝ Նոր Շիրականը, «յԱսորեստանեաց կողմանէն», Արտաստանը և «Մասքթաց կողմանէն»: Վերջինիս փոխարեն Խորենացին և Փավստոսը հիշատակում են Գուգարաց բղեշխությունը, որը բնդգրկել է Հայաստանի հյուսիսային երկրամասերը և ողջ Վրաց աշխարհը: Զրիստոնեության տարածման տարածաշրջանի մեջ էր բնդգրկված նաև Հյուսիսային Կովկասը, որտեղ ավելի վաղ ժամանակներում Հայաստանի ունեցած գերիշխանության մասին, վրաց աղբյուրների հետ, համախոսում է հայ պատմագրությունը:

Մեկ դար հետո, երբ Հայաստանի գլխավորած դաշինքը քաղաքականորեն այլևս գոյություն չուներ, իսկ Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի ու Հռոմի միջև, «գրեթե գոյաթը» նույնպես Հայաստանից բացի ապրածվում է նույն արեալում, ընդ որում, Հայոց թագավորի հրամանով և Վիրքի, Աղվանքի թագավորների ու Բյուզանդիայի կայսեր համաձայնությամբ, ինչը վկայում է այս տարածաշրջանում Հայաստանի ազդեցության որոշ իրավունքների ճանաչման մասին:

Հսկաստանի կողմից Դաշնության մեջ ծագած ապստամբությունը ճնշելուց և սահմանային վեճերը կարգավորելուց հետո, կողմերի միջև կնքված պայմանագրի հետևյալ մտուրը, որը հայտնի է վրաց պատմագրության հեղինակությամբ, որոշակի պատկերացում է տալիս այս դաշնության իրենաբար կանոնադրության վերաբերյալ.

«Եթե որևէ բշնամի հանդես գա ձեր դեմ և պատերազմի ձեզ հետ այն կողմերում, մենք՝ երկու թագավորներս էլ անձամբ մեր զորքով կլինենք ձեր կողմից ու կօգնենք, իսկ եթե այդ կողմերում որևէ մեկի հետ պատերազմեք, հազար-հազարական սպառազինված ռազմիկներով ձեզ կօգնենք»: Եվ այս էլ խոստացան քարքվելները, որ «այս մեր քաղաքում դրամն Արտաշան արքայի պատկերով կհատենք»:



Պայմանագրի այս գլխավոր կետերը քվեումց հետո «Քաղաքի Յխտվերան» ավելացնում է. «Եվ այսուհետև եղան բարեկամ և սոմեխները և բարբվելներն ու օտերը: Եվ երեքն էլ միասնաբար էին կովում քշմամիների դեմ»: Սա վկայում է, որ Հայաստանի գլխավորած դաշինքի հիմնական կողմերի միջև փոխհարաբերությունները կարգավորված են եղել պայմանագրերով ու օրենքներով:

Հայաստանի գլխավորած ռազմա-քաղաքական դաշինքն, ըստ էության, պահպանվել է նաև Հայոց թագավորության վերացումից հետո: Այն հանդես է գալիս Սասանյանների դեմ ծավալված կրոնական պատերազմում, երբ, ըստ Եղիշեի, գործել է «մխարանութին աշխարհին Վրաց, Հայոց և Աղուանից»: VI դարի առաջական պատմագրությունը, հաստատելով հայ պատմագրության տվյալները, Հայաստանը, Վիրքը, Աղվանքն ու մինչև Կովկաս ձգվող Կասպը ներկայացնում է որպես մեկ կրոնական միավոր, ենթակա Գլխումն մատող ընդհանրական կաթողիկոսին: Այս դաշնության փառաց ձևավորված սահմանների քերադրության արդյունք պետք է համարել Արարական խալիֆայության «Արմինիա» նահանգի առկայությունը, որը ընդգրկել է ոչ միայն Հայաստանը, այլև Վիրքը, Աղվանքը և այդ Այսրկովկասը: Այն «Արմինիա-Հայաստան» է կոչվել դեռևս մինչև արարները: Ասորի պատմագիր Ջաբարիս Հոնադը Վիրքն ու Աղվանքը ներկայացնում է սեփական թագավորներ ունեցող, բայց աշխարհագրորեն «Հայաստան աշխարհում» գտնվող երկրներ: Այս առումով աներաձեշտ է նկատել, որ Ագարանգեղոսը նույնպես այս դաշնությունը ընդգրկող տարածքը համարում է «ընդ ամենայն երկիրն Հայոց»: Ալեհայտ է, որ ոչ միայն արարական, այլև դրան նախորդող ժամանակներում, այս դաշինքը կրել է ընդհանրական՝ «Արմինիա-Հայաստան» անվանումը:

Հայաստանի գլխավորած ռազմա-քաղաքական դաշինքը քաղաքականորեն վերականգնվում է, երբ Պարսկաստանն ու Բյուզանդիան գրաված էին տարածաշրջան ներխուժած արարներով: Աշոտ Ա Բագրատունին 862 թվին ճանաչվում է Հայոց, Վրաց և Աղվանից, այսինքն՝ Արմինիա փոխաբայության «իշխանաց իշխան»: Անկախություն ձեռք բերելով, հայ Բագրատունիները արդեն ճանաչվում են որպես նույն երկրների «Ֆեռդյալական կոնֆեդերացիայի» «շահնշահ», այսինքն՝ «արքայից արքա»:

Ներկայացված աղբյուրների համաձայն, տարբեր ժամանակներում թագավորության կարգավիճակով «Արմինիա-Հայք» ֆեդերացիայի մեջ ընդգրկված են եղել հետևյալ միավորները. Մեծ Հայք, Փոքր Մարաստան-Առաքատական, Կասպ-Փայտակարան, Կորդուք, Աղխարենե, Ասորիք-Եղեմիս, Շոփ, Կասպադովկիս, Փոքր Հայք, Վիրք, Աղվանք, Մասրութք, Արսեր-Օսր, Կովկասյան այլ միավորումներ: Այստեղ նկատի չի առնված Բագրատունյաց շրջանը, երբ թագավորության կարգավիճակ են ձեռք բերել որոշ հայկական նախարարություններ:

Ներկայացված նյութերի ամփոփումից հետևում է, որ հետուրարտական ժամանակներից մինչև հայ Բագրատունիների անկումը, Հայաստանն իր հարևան երկրների հետ ընդհանուր սահման ներկայացրել է միասնական բանակ, եկեղեցի, համապետական լեզու, դրամական միավոր, ընդհանուր անվանում ունեցող մեկ դաշնային միավոր: Այս հանգամանքը պարտադրում է վերանայել սույն քննարկն առնչվող այդ աղբյուրային բազան, քանի որ առաջադրված տեսանկյունով դրանց քննությունը էական փոփոխություններ ու ճշգրտումներ է մտցնում մեր ներկա պատկերացումներում: Խոսքը վերաբերվում է ոչ միայն հին և միջնադարյան շրջանին, այլև ուրարտական և դրան նախորդող ժամանակներին, երբ Հայկական լեռնաշխարհը հարևան երկրամասերի հետ հայտնի էր նույն՝ դաշնակցային կարգավիճակով:

## **ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

**ԱԻ – ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ**

**ԳԻ – ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ**

**ԳՊՄԻ - Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ**

**ԵՊՀ - Երևանի պետական համալսարան**

**ՀԱԻ – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ**

**ԵՀԱՀ - Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան**

**ՊԻ – ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ**

**ՀԶԹԻ – Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ**

**ՌԻ – ՀՀ Պաշտպանության նախարարության Ռազմական ինստիտուտ**



## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                              |    |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒՆԻԱ (ԵՊՀ) – ԵՐԱՋԸ ՈՐՊԵՍ ԾԻՍԱԸԱՐՔԻ ՄԻ ՄԱՍ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՅՈՑ ՄԵԱԿՈՒԹՅՈՒՄ .....                              | 1  |
| ԱՍՐՅԱՆ ԼԵՎՈՆ (ՊԻ) – ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՓՈՔԱՍԽԱԿԱՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍՄԻՐԻԱԿԱՆ ԶԱՎԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ .....                                  | 1  |
| ԱՐԻՍՅԱՆ ՆՈՐԱ (ԵՊՀ) – ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՐ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....                                                    | 3  |
| ԲԱԲԱՅԱՆ ՆԱԻՐԱ (ԱԻ) – ՀԱՅ ԶԱՎԱԶԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ I ՀԱՄԱԺՈՂՎՈՒՄ (1907թ.) .....                           | 5  |
| ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ) – ԹՈՒՐԶԻԱՅԻ «ԱՋԳԱՅԻՆ ԸԱՀԵՐԻ» ԿՈՆՑԵՊՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄԸ .....                                                       | 6  |
| ԲՈՐՈՒՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀԱԻ) – ԴԱՆԱՊԱՐԶԸ ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՐԴՈՒ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ .....                                                                 | 8  |
| ԳՆՈՒՆԻ ԱՐՏԱԿ (ՀԱԻ) – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԸԽԱՐՀԻ ԵՎ ԷԳԵՅԱՆ ԱԸԽԱՐՀԻ ՎԱՂԱՐՈՆՁԻ ԴԱՐԻ ԶԱՎԱԶԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԻ ՄԱՍԻՆ ..... | 11 |
| ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ (ԱԻ) – ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՐԱՐՏՈՒՄԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԸՍՏ «ԼՈՒՎՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ» .....                                         | 12 |
| ԴԱԼԱԼՅԱՆ ՏՈՐՔ (ԵՊՀ) – ՕՍԵՐԵՆ warm եՎ wazdan ԲԱՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ .....                                                                     | 13 |
| ԴԱՎԺՅԱՆ ԱՐՄԵՆ – ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՅՐԱԻՆ-Ք», «ՍՈՒՐԱՐ(ՏՈՒ)», «ՓՈՅՈՒԳԻԱ» ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԹԵՐՅԱԼ .....                                       | 14 |
| ԴԵՄՈՅԱՆ ՀԱՅԿ (ԵՊՀ) – 1980թ. ՍԵՊՏԵՄԵՐԻ 12-Ի ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱԸՐՁՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԸ ԹՈՒՐԶԻԱՅՈՒՄ .....                  | 16 |
| ԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆԴԱՆ (ԱԻ) – ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄՈՒՄՆԱԼՈՒԹՅՈՒՆ ԶԵՎԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՒՄԻՐՆԵՐԻ ՄԵՋ .....                                                | 17 |
| ԷԼՈՅԱՆ ԱԼԻՍ (ԵՊՀ) – ՆԱՍԱՐԻ ԱՌԱՋԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....                                                                                       | 18 |
| ԹԱԴԵՎՈՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ) – ՀԵՐԱԾՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ .....                                                                             | 19 |
| ԻՄԱԿԱՆԴԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ (ԱԻ) – ԱՄՆ-Ի ԴԻՐՋՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԳԼՈՒԻՐԱՆԱԿԱՆ ՆԱԿԹՅՈՒՆ ՎԵՃԻ ՀԱՐՅՈՒՄ .....                                                      | 20 |
| ԻՍԼԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ (ՀԱԻ) – ՆՈՐ ՍՐԲԱՎԱՅԵՐԻ, ԹԵ՛ ԽՄԱՅԻՆ ԻՆՔՆԱՀԱՏԱՏՈՒՄ .....                                                                      | 21 |
| ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ (ԱԻ) – ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՈՎԵԼ ժԱՆՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻՅԱԼՆԵՐՈՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ .....                                      | 22 |
| ԿԱՐԱՊՈՂՈՅԱՆ ԿԱՐՈ (ԵՊՀ) – ԺԱՄԱՆԱԿԱԿԻ ԹՈՒՐՔՆԵՐՆԻՄ ՖՐԱՆՍԵՐՆԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....                                | 23 |

|                                                                                                                                                |    |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆ (ԵՊՀ) – ՀԱՅ-ԹԱԹԵՐԻ ԼԵԶԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԸՆԴՈՒՄ ..... 24                                                                           | 24 |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ (ԱԻ) – ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՐԱԵԼԻ ԳՈՐԾՈՐԸ<br>ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ (1970-1990 թթ.) ..... 25                                        | 25 |
| ՀՍԱՅԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԱԻ) – ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՅՈՒՆԵՐՈՒՄ ՀԱՆԳԻՊՈՂ<br>ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՄՏ ՎԵՐՋԱՄԱՆՅՆԵՐԻ ..... 26                       | 26 |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԳՊՄԻ) – ԱՄՆ-Ի ԴԵՐԸ 1993թ. ՕՍՏՈՅԻ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ<br>ԿՆՔՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ..... 28                                                   | 28 |
| ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԵՊՀ) – ՍԻՐԻԱՅՈՒՄ ՈՒՂԻՉ ԸԱՐԺԱՆ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՈՐՈՇ<br>ՊԱՏՃԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄ ..... 29                                                 | 29 |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԻՆԱ (ԵՊՀ) – AL-AMIL WA-L-MA' MİL ՀԱՐԱԲԵՐԱԿՈՒԹՅԱՆ<br>ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼ-ՋՈՒՐՋԱՆԻԻ "AL- AWAMILU-L-MI'A" ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ..... 30 | 30 |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ (ԱԻ) – ԱՔ. ՕՋԱԼԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՏՔՆԵՐԻ<br>ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԸՆԴՈՒՄ ..... 31                                                 | 31 |
| ՄԱՐՏԻԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ՈՒ) – ԲԱՐԵԼՈՐՅԱՆ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ԱՐՏԱՅՈՒՆԻՄԸ<br>«ՀԱՅԿ Լ ԲԵԼ» ՎԵՊԱՍՔՈՒՄ ..... 32                                                  | 32 |
| ՄԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀՅԹԻ) – ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԵՎՏՅԱՆ<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԺԱՆՄԱՆ ԸՆԴՈՒՄ 1916 թ. .... 34                                            | 34 |
| ՄԻՐԱՔՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ԵՊՀ) – ՀԱԳԻՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ<br>ԱԼ-ԲՈՒՆԱՐԻԻ (810-870) «ՍԱԿԻՆ»-Ը ..... 36                                                 | 36 |
| ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ԵՊՀ) – ԵՐՈՒՍԱՐԵՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏՐՎԱԾ<br>ԱՐԱՔԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ..... 37                                                      | 37 |
| ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ) – ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆԱԽԱՄԱՇՏՈՅՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ԴՊՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ԸՆԴՈՒՄ ..... 39                                 | 39 |
| ՅԱՎՐՈՒՄՅԱՆ ՄԱՐԱՏ (ԵՊՀ) – ԱՐԱՔԱԿԱՆ ԼԵԶԱՔԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՈՒՄ<br>ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 41           | 41 |
| ՆԱԶԱՐՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ) – ԱԶՆԻՎ ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԸ ՌԵՇԱԳ ԴՈՒՐԻԻ<br>«ՏԵՐԵՎԱԾԱԾ» ՎԵՊՈՒՄ (1930) ..... 41                                                 | 41 |
| ՇԱԳՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ՀԱԻ) – ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԾԵՍՈՒՄ ..... 42                                                                               | 42 |
| ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ԱԻ) – ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐԻ<br>ԳԱՐՏԱԼԵԶՎՈՒՄ ..... 43                                                         | 43 |
| ՍԱՀԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ՀՅԹԻ) – ՄԱՄՈՒԻ ԳՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ<br>ԹՈՒՐԵՎԱՅՈՒՄ ՄԵՇ ԵՂՆՈՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 44                                           | 44 |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ) – ՋՈՐԱՅ ՔԱՐԵՐԻ ԱՌԵՎԱԾԻ ԸՆԴՈՒՄ ..... 45                                                                                     | 45 |
| ՍԱՅՐԱՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊՀ) – ԱՄԱԳ ՄԱՀՄՈՒԴԻ «ՀԱՐԵՎԱՆՆԵՐ» ՎԵՊԻ<br>ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 46                                        | 46 |



|                                                                                                                       |    |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ (ԵՀԱՀ) – ԲԱՀԱՅԻՆՆԵՐԻ ՏՈՄԱՐԸ, ՍՈՒՐԲ ՕՐՆԵՐԸ ԵՎ 19-ՐԴ ՕՐՎԱՍ<br>ՏՈՆԱՎԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ .....                   | 47 |
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ԹԱՄԱՐԱՆ (ԵՊՀ) – ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏՆԵՐՆ<br>ԱՆԳՐԱԿՈՎԱԿԱՍՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶՐԻՆ ԵՎ ԴՐԱ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ ..... | 48 |
| ՎԻՐԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ) – ՀՈՐԱԿԱՆՅԱՆ-ՊԱՐԵՍՏԻՆՅԱՆ ՄԱՆՅԱՆ<br>ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԵՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....                          | 49 |
| ՓԱՀԱՅԱՆ ԱՐԱՋՄ (ԱԻ) – ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ<br>ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՏՈ .....               | 51 |
| ՕՀԱՆՅԱՆ ՄՈՒՐԱԴ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄԵՐՁԱԿԱ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ<br>(ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ) .....                             | 52 |
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....                                                                                                     | 56 |

